

Նախնական ուսումնասիրություն

Հայաստանի Հանրապետության 2018թ. Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության զեկույցի համար

(15 մարտ 15 2018թ.)

Պատրաստվել է

ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ բազմաշահառու խմբի
համար

«Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ
իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի
թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով»
ծրագրի շրջանակներում,

որը ֆինանսավորվում է Երևանում Բրիտանական դեսպանատան կողմից

Բովանդակություն

Երախտիքի խոսք	6
Հապավումներ	7
1. Ներածություն	9
2. Քաղաքականության և իրավական շրջանակ	13
2.1. Իրավական շրջանակ (ստանդարտի 2.1 պահանջ)	13
Հիմնական օրենսդրությունը	13
Ընդերքօգտագործման իրավունք (ստանդարտի 2.2-րդ պահանջ)	14
Պետական մարմինների գործառույթներն ու պարտականությունները	19
2.2. Ֆիսկալ ռեժիմ (ստանդարտի 2.1 պահանջ)	22
Ռոյալթիներ	23
Շահութահարկ	24
Եկամտային հարկ	24
Այլ վճարներ	24
2.3. Ֆիսկալ (հարկաբյուջետային) ապակենտրոնացման աստիճան	26
3. Վերջերս իրականացված բարեփոխումների ընդհանուր նկարագրություն (ստանդարտի 2.1(b) պահանջ)	29
3.1. ԱՃԹՆ-ն և Բաց կառավարման գործընկերություն	29
3.2. Կարևոր օրենսդրական փոփոխություններ	30
3.3. Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակում	31
4. Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացի և պայմանագրերի թափանցիկություն	32
4.1. Պայմանագրերի և այլ փաստաթղթերի հրապարակում	32
4.2. Փորձաքննությունների թափանցիկություն	38
Ընդերքաբանական փորձաքննություն	38
Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն	40
Տեխնիկական անվտանգության փորձաքննություն	40
5. Իրական սեփականատեր/շահառու (ստանդարտի 2.5 պահանջ)	42
5.1. Ամփոփ ակնարկ	42
5.2. «Իրական սեփականատեր» հասկացությունը, ՖԱԹՖ, MONEYVAL, Եվրոպական միությունը	44
5.3. ՏՀԶԿ-ի «Հարկվող բազայի քայքայում և շահույթի տեղաշարժ» ծրագիր	45
5.4. Իրավաբանական անձանց պետական ռեգիստր, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա	46

5.5. Սեփականատիրոջ բացահայտումը հանքարդյունաբերության ոլորտում.....	47
5.6. Այլ փոխկապակցված հասկացություններ.....	47
6. Եկամուտներ և վճարումներ (ստանդարտի 4 պահանջ)	48
6.1. Պետական բյուջեի եկամուտներ	48
6.2. Հանքարդյունաբերության ոլորտի պետական արտաբյուջետային միջոցներ (եկամուտներ)	51
6.3. Տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային եկամուտներ	52
6.4. Տեղական ինքնակառավարման մարմինների արտաբյուջետային միջոցներ.....	53
6.5. Աուդիտ և հաշվապահական հաշվառման ստանդարտներ (ստանդարտի 4.9-րդ պահանջ)	54
Ընկերությունների կողմից տրամադրվող տվյալների որակը.....	54
Կառավարության կողմից տրամադրվող տվյալների որակը.....	55
Հաշվապահական ստանդարտ. կանխիկ կամ հաշվեգրում.....	56
6.6. Պետության արդյունահանման մասնաբաժնի վաճառքը կամ բնափրային տեսքով հավաքագրված այլ եկամուտներ (ստանդարտի 4.2-րդ պահանջ)	59
6.7. Ենթակառուցվածքների համար մատակարարումները և ապրանքափոխանակության կարգավորումները (ստանդարտի 4.3-րդ պահանջ)	59
6.8. Տրանսպորտային փոխադրման վճարումներ (ստանդարտի 4.4 պահանջ).....	59
6.9. Պետական ձեռնարկություններ.....	60
6.10. Պոտենցիալ հաշվետու ընկերությունների ցանկ	60
6.11. Հաշվետու պետական կառույցներ.....	63
6.12. Սոցիալական և տնտեսական ծախսեր (ստանդարտի 6.1 պահանջ)	65
6.13. Ապագաբեզման աստիճան (ստանդարտի 4.7-րդ պահանջ).....	71
6.14. Տվյալների արդիականություն (ստանդարտի 4.8-րդ պահանջ)	71
6.15. Տվյալների էլեկտրոնային եղանակով ներկայացումը անկախ ադմինիստրատորին.....	72
7. Հանքարդյունաբերության ոլորտի նկարագրություն (ստանդարտի 3-րդ և 6.3-րդ պահանջներ)	73
7.1. Տնտեսության մեջ մասնաբաժինը. ՀՆԱ, զբաղվածություն և օտարերկրյա ներդրումներ. 74	
ՀՆԱ-ն ազգային և մարզային մակարդակներում	74
Զբաղվածությունը ազգային և մարզային մակարդակներում	78
Օտարերկրյա ներդրումներ	79
7.2. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունները և գործունեության հիմնական տեսակներ.....	80
Երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրվող ընդերքօգտագործման իրավունքների ընդհանուր թիվը	80
Երկրաբանական ուսումնասիրության ծավալները	82
Երկրաբանական ուսումնասիրության նշանակալի աշխատանքներ.....	85

7.3. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թույլտվություններ	86
7.4. Արտադրության տվյալներ.....	86
7.5. Արտահանման տվյալներ	87
7.6. Վիճակագրական տվյալների վերաբերյալ մեթոդաբանական դիտարկումներ	90
8. Նվազագույն պահանջների գերազանցում.....	93
8.1. Պայմանագրերի հրապարակային բացահայտումը.....	93
8.2. ԱՃԹՆ-ի Հայաստանյան գործընթացի հետագա ընդլայնում.....	93
8.3. Կամավոր (ոչ պայմանագրային և ոչ օրենքի ուժով պարտադիր) բարեգործական վճարումների բացահայտումը.....	93
9. Հաշվետվողականությանը խոչընդոտող գործոններ	95
10. Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի խթանում	97
11. Հաջորդ քայլեր	98
11.1. Առաջարկություններ էականության վերաբերյալ.....	98
11.2. Օրենսդրական փոփոխությունների առաջարկներ տվյալների պարտադիր բացահայտման համար.....	101
11.3. Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնելու հնարավորություն	102
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	104
Հավելված 1. Ուսումնասիրության նպատակով իրականացված հարցազրույցների մասնակից անհատների և կազմակերպությունների ցանկ.....	104
Հավելված 2. Առկա վիճակագրության վերանայում	104
Հավելված 3. Հանքարդյունաբերության ոլորտին առնչվող օրենքների թվարկում	104
Հավելված 4. Հանքարդյունաբերության ոլորտին առնչվող ենթաօրենսդրական ակտերի թվարկում.....	104
Հավելված 5. Մետաղական հանքարդյունաբերական ընկերությունների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամազվխին վճարված գումարների վերաբերյալ տեղեկատվություն.....	104
Հավելված 6. ՀՀ ԷԵԲՊՆ-ի կողմից 25.10.2017թ. ստացված ցուցակ	104
Հավելված 7. Հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների ինքնահայտարարագրած սոցիալական և տնտեսական ծրագրերը.....	104
Հավելված 8. Եկամուտների և վճարումների մասով օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն	104
Հավելված 9. Ընկերությունների ցանկ, որոնք ստացել են ընդերքօգտագործման թույլտվություն երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու նպատակով	104
Հավելված 10. ԱՃԹՆ ստանդարտի պահանջների ընդգրկում՝ նախնական ուսումնասիրության տեքստում	104
Հավելված 11. Տվյալների հասանելիության վերաբերյալ տեղեկատվության աղյուսակ	104

Հավելված 12. 2016-2017թթ ընթացքում արտաբյուջետային հաշիվ ունեցող համայնքների ցանկը.....	104
Հավելված 13. ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացված ԱՃԹՆ-ի օրենսդրական փոփոխությունների փաթեթ.....	105

Երախտիքի խոսք

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը իր երախտագիտությունն է հայտնում Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի դեսպանությանը սույն Նախնական ուսումնասիրության կատարումը հովանավորելու կապակցությամբ: Դեսպանատան աշխատակիցներ Արտաշես Դավթյանը և Օքսաննա Աբրահամյանը մեծապես ուղղորդել են ծրագրի կառավարումը:

Նմանապես, կենտրոնը ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի ԱՃԹՆ-ի գործընթացի շրջանակներում ձևավորված բազմաշահառու խմբի անդամներին, տեղական փորձագետներին, ոլորտի ակտիվ հասարակական կազմակերպություններին իրենց դիտողությունների, առաջարկների, վերլուծությունների և մեր կողմից բարձրացված հարցերի շուրջ հայտնած տեսակետների առնչությամբ: Այս զեկույցի մշակման մեջ անգնահատելի ներդրում կատարած հայաստանյան փորձագետներն են Կարլ Ուլբրիխտը, Դավիթ Հակոբյանը, Ծովինար Սողոմոնյանը, Նաիրուհի Ավետիսյանը, Անաստազ Աղազարյանը և Հրաչյա Հովհաննիսյանը «Բի-Դի-Օ Արմենիա»-ից: Բացի այդ, մեր թարգմանիչ Ֆենյա Եփրեմյանը ծրագրի ամբողջ ընթացքում պատրաստակամ թարգմանել է մեծածավալ փաստաթղթեր անգլերենից հայերեն և հակառակը:

Կենտրոնը հատկապես ցանկանում է նշել այն առողջ աշխատանքային մթնոլորտը, որը ստեղծվեց Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքների կոորդինատոր-նախարար Դավիթ Հարությունյանի շնորհիվ, ում առաջնորդությունը մեծապես օգնեց պատրաստել այս ուսումնասիրությունը և մի շարք, առաջին հայացքից վիճելի թվացող հարցերի շուրջ, ձեռք բերել կոնսենսուս:

Պարտավոր ենք նաև նշել Հայաստանի ԱՃԹՆ-ի գործընթացի հայաստանյան քարտուղարության աշխատակիցներ Լիլիա Շուշանյանի, Դավիթ Շինդյանի և Լուսինե Թովմասյանի անգնահատելի աջակցությունը:

Կենտրոնը ցանկանում է նաև վկայակոչել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների աշխատանքը, ովքեր պատասխանում էին մեր հարցադրումներին, տալիս բացատրություններ և աջակցում ոլորտի օրենսդրական բացերը և գործնական թերությունները բացահայտելու հարցում:

Հետազոտության մշակմանը մասնակցել է նաև միջազգային մեծ փորձ ունեցող բրիտանացի փորձագետ Ջերեմի Ուիթթը: Նախնական ուսումնասիրության հետ զուգահեռ, Կենտրոնը իրականացրել է օրենսդրական և ինստիտուցիոնալ վերանայում և գործողությունների ծրագիր (LIRAP): Այս ուսումնասիրության համար խորհրդատվություն է տրամադրել բրիտանացի փորձագետ Քրիս Նըրսը, ով, բացի LIRAP-ի վերաբերյալ դիտարկումներ տալուց, առաջարկություններ է ներկայացրել նաև Նախնական ուսումնասիրության վերաբերյալ: Կենտրոնը երկուսին էլ հայտնում է իր խորին շնորհակալությունը ուսումնասիրության մշակմանը աջակցելու համար:

Իհարկե, պետք է նշել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը, ովքեր միշտ պատրաստակամ մեզ ներկայացրել են առանձին հարցերի շուրջ առկա լավագույն փորձը և բացահայտել առանձին դրույթների մեկնաբանությունը:

Ալեն Ամիրխանյան

Տնօրենի ժ/պ, ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն
Հայաստանի ամերիկյան համալսարան

Հասկացումներ

ԱԱԳ	Առողջության վրա ազդեցության գնահատում
ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՃԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
ԱՄՆ դոլար	Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլար
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԲԲԸ	Բաց բաժնետիրական ընկերություն
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ԲՇԽ	Բազմաշահառու խումբ
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
Գործակալություն	ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԷԵԲՊՆ	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
ԸՕ	ՀՀ ընդերքի օրենսգիրք
ԻՇ	Իրական շահառու (նաև՝ իրական սեփականատեր)
ԻՍ	Իրական սեփականատեր (նաև՝ իրական շահառու)
ԿՍՊ	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀԱՀ-ի ՊՀԿ	ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿԲ	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՀՄՍԽ	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԷՏՀ	Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողով
ՄԹ	Միացյալ Թագավորություն
ՄԾ/ՎԾ	Մշակման ծախս/վերամշակման ծախս
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄԿԳ	Շրջակա միջավայրի կայունության գնահատում
ՇՄՄՏԿ	Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍՄԿ/ISO	Ստանդարտացման միջազգային կազմակերպություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎՋԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ՏԿՁՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏՀՁԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՓԼԱՖ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենք

ՔԱՈՒԱ	Քաղաքական ազդեցություն ունեցող անձ
ՖՀՄՍ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ
ՖՄԱԽ	Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

1. Ներածություն

Նախնական ուսումնասիրությունը տեղեկատվական հիմք է հանդիսանալու Բազմաշահառու խմբի քննարկումների համար առ այն, թե ինչ է ներառվելու Հայաստանի 2018թ. ԱՃԹՆ զեկույցում: Մասնավորապես.

- Ներկայացված են մետաղական հանքարդյունաբերական ոլորտի շահագործման արդյունքում 2016 և 2017¹թթ.ն ձևավորված եկամուտների և վճարումների մասով տվյալներ, վեր են հանվել դրանց աղբյուրներն ու առկայությունը, գնահատվում է այդ տվյալների որակը, առաջարկվում էականության չափանիշ, ներկայացվում են էական եկամուտների և վճարումների վերաբերյալ տեղեկատվության բացահայտման օրենսդրական և ինստիտուցիոնալ խոչընդոտները:
- Ներկայացվում է, թե պայմանագրերի և թույլտվությունների մասով ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ բացահայտել և թե այդ առումով ինչ իրավական կամ ինստիտուցիոնալ խոչընդոտներ կան:
- Վերլուծված է իրական սեփականատերերի բացահայտման մասով առկա իրավիճակը և ուրվագծված են ԱՃԹՆ 2016թ. ստանդարտի պահանջները բավարարելու նպատակով արվող քայլերը:
- Առաջարկվում է որոշել ԲՇԽ-ի աշխատանքային ծրագրով նախատեսված և բացահայտման ենթակա այն առաջնահերթ տեղեկություններն ու վերլուծությունները, որոնք գերազանցում են ԱՃԹՆ 2016թ-ի ստանդարտի պահանջը:
- Ներկայացված է անկախ ադմինիստրատորի (ով 2018թ. առաջին կիսամյակում կազմելու է Հայաստանի 2018թ-ի ԱՃԹՆ զեկույցը) տեխնիկական առաջադրանքի պատրաստման և վերջնականացման համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը: Հայաստանի զեկույցը պետք է ԱՃԹՆ միջազգային քարտուղարությանը ներկայացվի մինչև 2018թ. սեպտեմբերը:

Նախնական ուսումնասիրությունը կատարող թիմը տեղեկությունները հավաքել է՝

- a) օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի, համապատասխան զեկույցների, վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից և վերլուծությունից,
- b) ԲՇԽ-ի հետ քննարկումներից,
- c) ՀՀ կառավարության և մասնավոր հատվածի հետ հանդիպումներից,
- d) Առաջարկություններ և դիտարկումներ բրիտանացի փորձագետներ Ջերեմի Ուիթի և Քրիս Նըրսի կողմից:

Նախնական ուսումնասիրության կառուցվածքը և առաջին նախագիծը պատրաստելիս ծրագրի թիմը մի շարք խորհրդատվական հանդիպումներ է ունեցել շահագրգիռ պետական կառույցների, ինչպես նաև ԲՇԽ-ի անդամների և աշխատանքային խմբերի

¹ Նկատենք, որ Նախնական ուսումնասիրության մեջ ներկայացվելու են առաջարկներ առ այն՝ արդյոք ԲՇԽ-ն պետք է ներառի այս երկու տարիները, թե միայն մեկ տարի՝ կախված տվյալների առկայությունից այն պահի դրույթամբ, երբ անկախ ադմինիստրատորը պատրաստելիս կլինի 2018թ. զեկույցը:

հետ: Նախնական ուսումնասիրությանը մեծապես օժանդակել են Մեծ Բրիտանիայից հրավիրված միջազգային փորձագետներ և ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ընդգրկված տեղական փորձագետները:

Բացի ԲՇԽ-ի հետ ունեցած ավելի քան 5 հանդիպումներից, որոնց արդյունքում պատրաստվել և հաստատվել է նախնական ուսումնասիրության բովանդակությունը, ծրագրի թիմը ԱՃԹՆ-ի քարտուղարության և ԲՇԽ-ի հետ անցկացրել են հետևյալ հանդիպումները՝

- ԱՃԹՆ Հայաստանի քարտուղարության հետ (2017 թ. օգոստոսի 28),
- ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամների հետ (2017 թ. օգոստոսի 28),
- ԱՃԹՆ ԲՇԽ-ի՝ նախնական ուսումնասիրության աշխատանքային խմբի հետ (2017 թ. օգոստոսի 29),
- ԱՃԹՆ ԲՇԽ-ի՝ իրական սեփականատերերի աշխատանքային խմբի հետ (2017 թ. օգոստոսի 29):

Պետական և մասնավոր հատվածի հետ տեղի են ունեցել հետևյալ հանդիպումները.

Պետական մարմիններ.

- ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալության հետ քննարկվել են Գործակալության գործառույթները՝ իրավաբանական անձի գրանցման ընթացքում իրական սեփականատերերի մասին տեղեկատվություն պահանջելիս և գրանցելիս, ինչպես նաև այդ տվյալներից օգտվելու ընթացակարգերը:
- ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչների հետ քննարկվել են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ-ի դերը և իրական սեփականատերերի մասով սահմանված պահանջները, ինչպես նաև ՀԿԲ-ում տվյալների հաշվառման և դրանցից օգտվելու կարգը:
- ՀՀ ֆինանսների նախարարությունը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն նշանակալի խորհրդատվական օժանդակություն են տրամադրել պետական և համայնքային բյուջեների մուտքերի, եկամուտների հավաքագրման և բաշխման մեխանիզմների, ինչպես նաև բյուջետային մուտքերի վերաբերյալ ապագա գրեգացված տվյալների առկայության հարցերի վերաբերյալ՝ հաշվի առնելով ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները:
- Վերջերս վերակազմավորված Ընդերքի գործակալության չորս ստորաբաժանումների հետ կայացած հանդիպման նպատակն էր քարտեզագրել ընդերք օգտագործման իրավունքների տրամադրման գործընթացը, թույլատրման ընթացակարգերի թափանցիկությունը, ինչպես նաև ընդերք օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի (այն է՝ ընդերք օգտագործման թույլտվություն կամ համաձայնություն, պայմանագիր, լեռնահատկացման ակտ և աշխատանքային նախագիծ կամ արդյունահանման նախագիծ) հանրությանը հասանելի դարձնելու հնարավորությունները:

- Հանդիպում վերջերս ստեղծված Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հետ, որը համատեղում է ընդերքի և բնապահպանական տեսչությունների գործառույթները: Ծրագրի փորձագետները տեսչության հետ քննարկել են հաշվետու ժամանակահատվածի համար արտադրության ծավալների վերաբերյալ տվյալների առկայությունը, առկա տվյալների ապագա բերգացման աստիճանը, ինչպես նաև այն, թե ինչ իրավական խոչընդոտներ կարող են առաջանալ այդ տեղեկությունների բացահայտման/հրապարակման հարցում:
- Հանդիպում ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի հետ, ով ԱՃԹՆ-ի գործընթացի համակարգողն է ՀՀ կառավարությունում:

Ծրագրի ՄԹ միջազգային փորձագետները Հայաստան կատարած այցի շրջանակներում մի շարք խորհրդատվական հանդիպումներ անցկացրեցին ԲՇԽ-ի անդամների, ԲՇԽ-ի առանձին աշխատանքային խմբերի, ՄԵԾ չորսի ցուցակում ընդգրկված և չընդգրկված աուդիտորական ընկերությունների հետ:

Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարձրացմանն ուղղված բարեփոխումներից մի քանիսը բխում են Հայաստանի՝ «Բաց կառավարություն» գործընկերությանն (ԲԿԳ) անդամակցությունից: ԲԿԳ-ով ստանձնած հանձնառությամբ («Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության ապահովում» խորագրով) ՀՀ կառավարությունը պարտավորվել էր մեկնարկել ԱՃԹՆ անդամակցության գործընթացը: ԱՃԹՆ-ին անդամակցության գործընթացը Հայաստանը սկսեց 2015 թվականի հուլիսին, երբ ՀՀ վարչապետը պաշտոնապես հայտարարեց նախաձեռնությանը միանալու մտադրության մասին:

Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը հաստատվեց 2017 թվականի մարտի 9-ին Բոզոտայում կայացած ԱՃԹՆ-ի խորհրդի նիստում: Համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է իր առաջին ԱՃԹՆ-ի զեկույցը հրապարակի թեկնածու դառնալուց հետո 18 ամսվա ընթացքում (այն է՝ մինչև 2018 թվականի սեպտեմբերի 9-ը): Հայաստանը պետք է մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը հրապարակի 2017 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն: Վավերացումը կսկսվի թեկնածու դառնալուց հետո երկուսուկես տարվա ընթացքում (այն է՝ մինչև 2019 թվականի սեպտեմբերի 9-ը):

Սույն ուսումնասիրության նպատակն է բացահայտել մետաղական ընդերքագտագործման ոլորտի կարգավորիչ օրենսդրության համապատասխանությունը ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին, բացահայտել ոլորտի հարկային կարգավորումը, ընդերքագտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացը, ընդերքագտագործման իրավունք կազմող փաստաթղթերի հրապարակայնությունը, դրանցով նախատեսված պայմանների պահպանման նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը, անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները (կից ներկայացվում է որպես Հավելված 14), որոնք պետք է իրականացնել ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները պահպանելու նպատակով: Ուսումնասիրությունը կաշկանդված չէ բացառապես ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներով և ներառում է առանձին բաժին նվազագույն պահանջների գերազանցում վերտառությամբ, այն կոչված է նաև խթանելու պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթը Հայաստանի Հանրապետությունում: Ավելին, ԱՃԹՆ

ստանդարտը ինքնին չի սահմանափակվում հանքարդյունաբերությամբ և կարող է ներառել ջրային, ձկնային, անտառային և այլ բնական ռեսուրսների արդյունահանման ոլորտները:

Ուսումնասիրության մեջ կամ վերջում իբրև առանձին հավելվածներ ներկայացվում են ՀՀ պետական կառավարման մարմինների, մասնավորապես ՀՀ ԷԵԲՊՆ-ի կողմից ներկայացված տեղեկատվություն-աղյուսակները: Հավելվածները վերաբերում են ընդերքօգտագործողների կողմից պայմանագրերով ստանձնած սոցիալ-տնտեսական միջոցառումներին, դրանց իրականացմանը, ազդակիր համայնքներին հատկացված սուբսիդիաներին, դրանց հատկացման կարգին, ընդերքօգտագործման թույլտվություններ ունեցող ընկերությունների ցանկին, վերջիններիս կողմից ՀՀ պետական բյուջե կատարված հարկերին և այլ պարտադիր վճարումներին:

2. Քաղաքականության և իրավական շրջանակ

2.1. Իրավական շրջանակ (ստանդարտի 2.1 պահանջ)

Հիմնական օրենսդրությունը

Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրությունը ներառում է Ընդերքի մասին օրենսգիրքը, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքը, հողային օրենսգիրքը, քաղաքացիական օրենսգիրքը, Թափոնների մասին օրենքը, այլ օրենսգրքեր և օրենքներ (աղյուսակ 1): Համապատասխան օրենսգրքերի և օրենքների սպառիչ ցանկը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ 3-ում:

Օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման գործընթացները կարգավորվում են նաև ենթաօրենսդրական ակտերով, որոնք հիմնականում կարգավորում են ոլորտի կառավարման ընթացակարգային մասը: Ենթաօրենսդրական ակտերի սպառիչ ցանկը կարելի է գտնել Հավելված 4-ում:

Աղյուսակ 1. Ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող հիմնական օրենսգրքեր և օրենքներ

Իրավական ակտի անվանումը	Ընդունման ամսաթիվը	Վերջին փոփոխության ամսաթիվը
Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրք	28 նոյեմբերի, 2011թ.	20-ր հոկտեմբերի 2016թ.
Թափոնների մասին ՀՀ օրենք	24-ր նոյեմբերի, 2004թ.	18-ր հոկտեմբերի, 2016թ.
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք	21-ր հունիսի, 2014թ	11-ր սեպտեմբերի, 2014թ
Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք	11-ը ապրիլի, 2005թ	28 նոյեմբերի, 2011թ
Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին ՀՀ օրենք	27-ը նոյեմբերի, 2006թ.	21-ը հունիսի, 2014թ.
Հարկերի մասին ՀՀ օրենք	14-ը ապրիլի, 1997թ.	4-ը հոկտեմբերի, 2016թ.
Շահութահարկի մասին ՀՀ օրենք	30 -ը սեպտեմբերի, 1997թ.	4 -ը հոկտեմբերի, 2016թ.
Եկամտային հարկի մասին ՀՀ օրենք	22-ը սեպտեմբերի, 2010թ.	4-ը հոկտեմբերի, 2016թ.
Հարկային ՀՀ օրենսգիրք	4-ը հոկտեմբերի, 2016թ.	1-ը մարտի, 2017թ.
Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենք	28-ը դեկտեմբերի, 1998թ.	4-ը հոկտեմբերի, 2016թ.
Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին ՀՀ օրենք	20-ը դեկտեմբերի, 2006թ.	4-ը հոկտեմբերի, 2016թ.
Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին ՀՀ օրենք	15-ը մայիսի, 2001թ.	11-ը հունիսի, 2009թ.

Ընդերքօգտագործման հարկաբյուջետային ոլորտը կարգավորվում է, մասնավորապես, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով, Բնապահպանական և բնօգտագործման վճարների, Բնապահպանական վճարների դրույքաչափերի, Հարկերի, Շահութահարկի մասին ՀՀ օրենքներով: Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների

նպատակային օգտագործման մասին ՀՀ օրենքը կարգավորում է ընկերությունների կողմից վճարված բնապահպանական վճարներից համայնքային բյուջեներ մասհանումներ կատարելու կարգը: 2018 թվականի հունվարի 1-ից լիարժեք ուժի մեջ կմտնի ՀՀ հարկային օրենսգիրքը, որը կողիֆիկացրեց հարկային դաշտում գործող մի շարք օրենքներ: Հանքարդյունաբերության ոլորտի ֆիսկալ ռեժիմը և բնապահպանական վճարները կարգավորող օրենսդրության մաս են կազմում նաև մեծ թվով ենթաօրենսդրական ակտեր:

Ոլորտի կառավարման առանձին հարցեր, որոնք քննարկվում են սույն հետազոտության շրջանակում, կարգավորվում են Աուդիտի կազմակերպման և անցկացման, Հաշվապահական հաշվառման, Բաժնետիրական ընկերությունների, Տեղեկատվության ազատության, Հիմնադրամների, Տնտեսական մրցակցության պաշտպանության, տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքներով:

Ընդերքօգտագործման իրավունք (ստանդարտի 2.2-րդ պահանջ)

ՀՀ ԸՕ-ով ամրագրված են Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման սկզբունքները, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը:

Ընդերքօգտագործումը թույլատրվում է հետևյալ երկու նպատակներով՝

1. Երկրաբանական ուսումնասիրություն
ա) ուսումնասիրություն (հետախուզում)
բ) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն
2. Օգտակար հանածոյի արդյունահանում

Երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունները, անկախ հետախուզման կամ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով լինելու հանգամանքից, տրվում են 3 տարի ժամկետով և ենթակա են երկարաձգման: Հավելված 9-ում ներկայացված են ընկերությունների ցանկը, որոնք ստացել են ընդերքօգտագործման թույլտվություն երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվում է երկրաբանական ուսումնասիրության համաձայնության կամ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության, պայմանագրի, հաստատված աշխատանքային ծրագրի հիման վրա:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունք ստանալու համար պահանջվում է տրամադրել հետևյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը.

- դիմումատուի անվանումը, հասցեն (գտնվելու վայրը),
- դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճենը,
- աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը,
- ընդերքի այն տեղամասի նկարագրությունը, որտեղ ուսումնասիրություն իրականացնելու համար ներկայացվել է դիմումը, և ընդերքի այդ տեղամասի հատակագիծը՝ ծայրակետային կոորդինատներով,

- երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը,
- դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետությունում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալները,
- ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը,
- ներկայացված փաստաթղթերի ցանկը:

Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու ընդերքօգտագործման իրավունք ստանալու համար պահանջվում է տրամադրել հետևյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը.

- Ընկերության գրանցման հավաստագրի պատճենը,
- Երկրաբանական ուսումնասիրության կատարման համար պահանջվող ժամանակահատվածը,
- Ուսումնասիրվող օգտակար հանածոները,
- Երկրաբանական ուսումնասիրության ենթակա տարածքի ընդհանուր և երկրաբանական նկարագրությունը, այդ թվում՝ կոորդինատները և երկրաբանական քարտեզը,
- Երկրաբանական աշխատանքների ծրագիրը,
- Տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում դիմումատուի նախկին ընդերքօգտագործման իրավունքների մասին,
- Ընկերության առնվազն 10% բաժնեմաս ունեցող բոլոր ֆիզիկական անձանց անուններն ու քաղաքացիությունը (բաժնետերը իրավաբանական անձ հանդիսանալու դեպքում, ներկայացնել իրավաբանական անձի գրանցման հավաստագիրը): Հարկ է նկատել, որ եթե բաժնետերը կամ բաժնեմասի սեփականատերը իրավաբանական անձ է, ապա չի պահանջվում ներկայացնել վերջինիս մասնակիցների կամ բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվություն տվյալ իրավաբանական անձի իրական սեփականատիրոջը բացահայտելու նպատակով:
- Ֆինանսական և տեխնիկական հզորությունների և միջոցների մասին տեղեկատվություն ՀՀ կառավարության սահմանած ձևաչափով,
- Ներկայացվող փաստաթղթերի ցանկ:

Ընդերքի երկրաբանական կառուցվածքի, ընդերքում պարունակվող օգտակար հանածոների, հանքավայրերի երկրաբանական տվյալների, պաշարների չափի, վերամշակման պայմանների, ինչպես նաև ընդերքի այլ առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկությունները, որոնք պարունակվում են երկրաբանական հաշվետվություններում, քարտեզներում, երկրաբանական փաստագրման առաջնային և այլ նյութերում, Հայաստանի Հանրապետության սեփականությունն են անկախ դրանց ստացման ֆինանսավորման աղբյուրներից: Ավելին, անկախ ֆինանսավորման աղբյուրից պետական ընդերքաբանական փորձաքննություն անցած երկրաբանական տեղեկությունը պարտադիր կարգով տնօրինման, պահպանության, համակարգման և ընդհանրացման է տրամադրվում լիազոր մարմնին՝ անհատույց, կառավարության սահմանած կարգով:

Այնուամենայնիվ, երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ստացած երկրաբանական տեղեկությունը չի կարող բացահայտվել այլ անձանց կողմից

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրված ընդերքօգտագործման թույլտվության ժամկետի ընթացքում: Երկրաբանական ուսումնասիրության արդյունքում հանածոների պաշարները հաստատվելուց հետո ընդերքօգտագործման թույլտվությունը կարող է ևս մեկ տարով երկարաձգվել հանքարդյունահանման նախագիծը կազմելու համար: Թեև, գործնականում մեկ տարին լրանալուց հետո այլևս չի պահանջվում ընդերքօգտագործողի համաձայնությունը, այնուամենայնիվ կառաջարկեինք, որպեսզի Օրենսգրքում ուղղակիորեն մատնանշվեր, որ այդ մեկ տարին լրանալուց հետո դադարում է երկրաբանական տեղեկության գաղտնիության ռեժիմի կիրառումը:

Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ստանալու համար անհրաժեշտ է ընդհանուր բնույթի վերը թվարկված պահանջվող փաստաթղթերից բացի ներկայացնել նաև

- հանքի արդյունահանման նախագիծ,
- հանքի փակման ծրագիր (ներառյալ՝ հանքի ֆիզիկական փակումը, բնապահպանական վերականգնման պլան, սոցիալական վերականգնման պլան, բնապահպանական մոնիտորինգի պլան և ֆինանսական երաշխիքներ),
- հանքի թափոնների կառավարման պլան և թափոնների կառավարման ֆինանսական երաշխիք,
- հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետը՝ հաշվարկված առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա,
- հաստատված օգտակար հանածոների ցանկը:

Դիմումները ներկայացվում են ՀՀ ԷԵԲՊՆ ընդերքի գործակալություն, որն աշխատում է «մեկ պատուհան»-ի սկզբունքով՝ ըստ անհրաժեշտության ապահովելով այլ կառույցների հետ համակարգումը: ԸՕ-ի 51 հոդվածի 8 կետի համաձայն՝ *փորձաքննական դրական եզրակացությունները ստանալուց հետո լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո մինչև 180-օրյա ժամկետում, որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին*: ԸՕ-ի 51 հոդվածի 10 կետի համաձայն, եթե երկու կամ ավելի անձ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմում է ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի կամ ընդերքի այնպիսի տեղամասերի համար, որոնք ունեն ընդհանուր մաս, ապա նախապատվությունը տրվում է «արտոնյալ դիմումատուին», որն իրականացրել է երկրաբանական ուսումնասիրություն այդ տեղամասում²: Մինչդեռ, եթե երկու կամ ավելի անձ դիմում են ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի համար օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստանալու նպատակով, ապա նախապատվությունը տրվում է այն դիմումատուին, ով առաջինն է գրանցվել:

Ընդերքօգտագործման ոլորտում նախատեսվում են հետևյալ երեք փորձաքննությունները, որոնք իրականացվում են տնտեսվարողների կողմից տրամադրված համապատասխան գնահատումների և փաստաթղթերի հիման վրա.

² Չնայած նրան, որ գործնականում «արտոնյալ դիմումատուին» է շնորհվում օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը, առաջարկվում է երկրաբանական ուսումնասիրություն կատարած իրավաբանական անձի իրավունքի ապահովվածությունը (security of tenure) երաշխավորելու համար սահմանել ընդերքօգտագործման իրավունքների շնորհման առավել հստակ չափանիշներ:

- Ընդերքաբանական փորձաքննություն (պահանջվում է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքների փորձաքննության համար),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննություն (ՇՄԱԳ), որը նախատեսված է հետևյալ դեպքերում՝
 - երկրաբանական ուսումնասիրություն ոչ արդյունահանման նպատակով իրականացվում է համաձայնության և ՇՄԱԳ փորձաքննության նախնական փուլով անցած ծրագրի հիման վրա արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում (Գ կարգ, Ա կարգ եթե գերազանցում է աշխատանքի ծավալների նախատեսված շեմը) և - արդյունահանման դեպքում (Ա կարգ)³:
- Տեխնիկական անվտանգության փորձաքննություն (պահանջվում է արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թույլտվություն ստանալու համար):

Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքը շնորհվում է 50 տարի ժամկետով և ենթակա է երկարաձգման: Ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերն են.

1. ընդերքօգտագործման թույլտվություն (երկրաբանական ուսումնասիրության պարագայում՝ համաձայնություն),
2. լեռնահատկացման ակտ,
3. հաստատված արդյունահանման նախագիծ և
4. պայմանագիր ՀՀ ԷԵԲՊՆ-ի հետ:

Ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները, հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները, բնապահպանական կառավարման պլանը, ինչպես նաև թափոնների կառավարման (և/կամ վերամշակման) համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները համարվում են պայմանագրի մաս՝ հավելվածների տեսքով:

ՀՀ ԷԵԲՊՆ-ի ընդերքի գործակալությունը վարում է ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյան, որտեղ հաշվառվում են այդ իրավունքներին առնչվող տեղեկությունները, այդ թվում՝ վերոնշյալ փաստաթղթերի օրինակները, ինչպես նաև իրավունքների փոփոխությունները, փոխանցումները, գրավը, զգուշացումը և դադարեցումը: Ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանից տեղեկատվություն ստանալու կարգը սահմանվում է ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ին ընդունված N 1147-Ն որոշման համաձայն⁴:

Ընդերքօգտագործման իրավունքը փոխանցելի է: Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումն իրականացվում է լիազոր մարմնի համաձայնությամբ: Նմանապես, պահանջվում է լիազոր մարմնի համաձայնությունը, երբ իրավաբանական անձի՝ բաժանման կամ առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում իրավահաջորդության կարգով բաժանիչ հաշվեկշռի հիման վրա ընդերքօգտագործման իրավունքը փոխանցվում է նորաստեղծ ընկերությանը: Այս առումով հարկ է նկատել, որ

³ Տես Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի 14 հոդված

⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78175>

միացման կամ միաձուլման դեպքում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման համար լիազոր մարմնի համաձայնությունը չի պահանջվում:

Ընդերքօգտագործման իրավունքի օտարման, ինչպես նաև իրավաբանական անձի միացման կամ իրավաբանական անձանց միաձուլմամբ պայմանավորված ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման դեպքերում հնարավոր է առաջանա համակենտրոնացման հարց: Տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում, համաձայն Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքի 8 հոդվածի, տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ տնտեսավարող սուբյեկտի ակտիվների ձեռքբերումը, եթե դրանց արժեքն ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող ակտիվների արժեքի հետ միասին կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի ակտիվների արժեքի 20 տոկոսը կամ ավելին: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ ընդերքօգտագործման իրավունքը, որպես այդպիսին, հաշվեկշռային արժեք չունի: Հետևաբար, ՀՀ օրենսդրության տեսանկյունից միայն ընդերքօգտագործման իրավունքի օտարումը ենթադրաբար չի առաջացնում տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումներ:

Ընդերքօգտագործման իրավունքը կարող է հանդիսանալ գրավի առարկա: Այս դեպքում ընդերքօգտագործողի և գրավառուի միջև գրավի պայմանագիրը կնքվում է լիազոր մարմնին տեղեկացնելուց հետո: Ընդերքօգտագործման իրավունքի հարկադիր օտարումն իրականացնելու նպատակով կազմակերպված հրապարակային սակարկություններին մասնակցելու համար, իրավաբանական անձինք պետք է ստանան լիազոր մարմնի համաձայնությունը: Հարկ է նկատել, որ ԸՕ-ով նախատեսվում է, որ ընդերքօգտագործման իրավունքի իրացումը իրականացվում է բացառապես հրապարակային սակարկությունների միջոցով, ինչը ենթադրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249 հոդվածով նախատեսված գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը չի կարող կիրառվել ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման դեպքում:

Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման նման կարգի սահմանումը խոչընդոտում է, որպեսզի այս իրավունքը դառնա տնտեսական շրջանառության էլ ավելի ակտիվ օբյեկտ: Ավելին, փոխանցման համաձայնությունը ստանալու նպատակով ներկայացվելիք տեղեկատվությունը վերաբերում է օտարելու ցանկություն ունեցող ընկերությանը և վերջինիս գործունեությանը: Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման բարդացված կարգի սահմանումը կարող է հանգեցնել նրան, որ ֆինանսական դժվարություններ ունեցող ընկերություններին թույլ չտրվի փոխանցել ընդերքօգտագործման իրավունքը երրորդ անձի, և հետագայում, այդ իրավունքը դադարեցվելու դեպքում, ներդրողը կզրկվի իր կատարած ներդրումների դիմաց ինչ-որ հատուցում ստանալու հնարավորությունից:

Հարկ է նկատել, որ ընդերքօգտագործման իրավունքը տնօրինող ընկերության բաժնեմասերի կամ բաժնետոմսերի փոխանցման դեպքում որևէ սահմանափակում չի նախատեսվում ընկերության և լիազոր մարմնի փոխհարաբերությունների տեսանկյունից: Անգամ լիազոր մարմինը կարող է տեղյակ չլինել ընկերության բաժնեմասերի կամ բաժնետոմսերի սեփականատերերի փոփոխության մասին, այլ կերպ ասած՝ ՀՀ օրենսդրությունը որևէ իրավական հետևանք չի նախատեսում այսպես կոչված

«վերահսկողի փոփոխության» (change of control) դեպքում ընդերքօգտագործման իրավունքի նկատմամբ կիրառելի իրավական ռեժիմի տեսանկյունից:

Պետական մարմինների գործառույթներն ու պարտականությունները

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը առաջատար դերակատարում ունի հանքարդյունաբերության ոլորտի պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում: ՀՀ էԵԲՊՆ-ի ենթակայության տակ գտնվող ոլորտային գործառույթներ իրականացնող մարմիններն են ՀՀ էԵԲՊՆ-ի ընդերքի գործակալությունը և Հանրապետական երկրաբանական ֆոնդ ՊՈԱԿ-ը:

Ընդերքի գործակալությունը վերակազմավորվել է, և նրա ներկայիս կարգավիճակը, կառուցվածքն ու գործառույթները ՀՀ կառավարությունը հաստատել է 2017թ. սեպտեմբերի 7-ին: Նորաստեղծ Ընդերքի գործակալությունն ունի չորս բաժին՝

1. Ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման բաժին,
2. Ընդերքաբանական փորձաքննության և պաշարների հաստատման բաժին,
3. Երկրաբանության, նորմատիվամեթոդաբանական և վերլուծության բաժին,
4. Ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի քննարկման և պայմանագրային բաժին:

2017թ. սեպտեմբերի 7-ին ընդունված ՀՀ կառավարության որոշմամբ այս բաժինների կոնկրետ գործառույթները դեռևս սահմանված չեն:

Ընդերքի գործակալությունը ստեղծվել է 2012 թվականին թույլտվությունների գործընթացը պարզեցնելու նպատակով ընդերքօգտագործման իրավունքի դիմումատուների հետ կապի և հաղորդակցման մեկ մարմին ստեղծելու միջոցով (2011թ.ն ընդունված ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված՝ «մեկ պատուհանի» սկզբունքի հիման վրա): Այս կերպ գործակալությունը կազմակերպում է ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման ողջ գործընթացը և համակարգում է փորձաքննությունները, ներկայացնում է թույլտվության դիմումի վերջնական փաթեթը ՀՀ էԵԲՊ նախարարի հաստատմանը: ՀՀ էԵԲՊՆ-ն երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման թույլտվությունները և համաձայնությունները տրամադրում է նախարարի հրամանով: Գործակալության կողմից իրականացվում է ընդերքաբանական փորձաքննություն՝ նպատակ ունենալով գնահատել ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության արժանահավատությունը, օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաներն ու պաշարները, ինչպես նաև արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրումը:

Հանրապետական երկրաբանական ֆոնդ ՊՈԱԿ-ը (Գեոֆոնդ) հանդիսանում է պատմական երկրաբանական տվյալների ու տեղեկությունների պահոց: Այն պարունակում է երկրաբանական աշխատանքների մասին հաշվետվություններ, հանքարդյունաբերական ընկերությունների հաշվետվություններ և հանքային պաշարների մասին տվյալներ: Տարբեր հաշվետվությունները և տվյալները բխում են տասնամյակների երկրաբանական հետազոտություններից, որոնց մեծ մասը կատարվել է խորհրդային ժամանակաշրջանում: Այս տվյալները պահպանելու և առավել հասանելի դարձնելու համար 2015 թվականին Երկրաբանական ֆոնդը սկսեց թվայնացման գործընթացը՝

ստեղծելով պաշտոնական կայք (www.geo-fund.am), որտեղ արդեն իսկ ներբեռնված է մոտ 72000 փաստաթուղթ⁵, ինչպես նաև բնական պաշարների ինտերակտիվ քարտեզ: Կայքը հնարավորություն է տալիս օգտվել երկրաբանական հետազոտությունների վերաբերյալ նյութերից, տեսնել տրված թույլտվությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը, թեև դրանք կրողների անունները, ինչպես նաև լիցենզավորված հանքերի տեղադիրքը չի բացահայտվում:

ՀՀ բնապահպանության նախարարությունը պատասխանատու է Հայաստանի բնապահպանության ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման համար: ԲՆ-ն հանքարդյունաբերության ոլորտի կարգավորման և վերահսկողության դաշտում ունի երեք հիմնական գործառույթ.

- հանքարդյունաբերական, ինչպես նաև երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նախագծերի ՇՄԱԳ-երի մասնագիտական փորձաքննություն,
- բնապահպանական և ընդերքօգտագործման տեսչական ստուգումներ,
- տարածքային բնապահպանական մոնիթորինգ:

ՀՀ ԲՊ-ի ենթակայության Բնապահպանական ազդեցության փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ը իրականացնում է երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման նախագծերի ՇՄԱԳ-երի մասնագիտական փորձաքննություն:

Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմինը նոր ձևավորված մարմին է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 27-ի որոշմամբ ՀՀ ԷԵԲՊՆ-ի ընդերքի տեսչության և ՀՀ ԲՆ-ի բնապահպանական տեսչության միավորման արդյունքում: Այս տեսչության գործառույթն է՝ ապահովել, որպեսզի երկրաբանական ու արդյունահանման աշխատանքներն իրականացվեն տնտեսվարողի և ՀՀ ԷԵԲՊՆ-ի միջև կնքված պայմանագրերին, ինչպես նաև երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերին և արդյունահանման նախագծերին համապատասխան: Տեսչական ստուգման ենթակա հարցերի ցանկը (կոչվում է նաև տեսչական ստուգման հարցաշար) սահմանվել է ՀՀ կառավարության որոշմամբ, նախքան երկու կառույցների միավորվելը: Նոր հարցաշարը ներկայումս մշակման և ՀՀ կառավարության կողմից հաստատման փուլում է: Ակնկալվում է, որ հարցաշարը կներառի այնպիսի հարցեր, ինչպիսիք են.

- Արդյունահանման ծավալների հայտարարագիրը,
- հանքի շահագործման համապատասխանությունը արդյունահանման նախագծում սահմանված եղանակներին, ժամանակացույցին և արդյունահանման ծավալներին,
- հանքավայրի կառուցմանը վերաբերող տեխնիկական ստանդարտների պահանջների կատարումը,
- սոցիալ-տնտեսական ծախսերի իրականացման ընթացքը: Առայսօր ընդերքօգտագործման պայմանագրով, ինչպես նաև երկրաբանական ուսումնասիրության ընթացքում սահմանված սոցիալական ծախսերի կատարման ստուգումը չի կազմել տեսչության իրավասության մաս:

Տեսչական ստուգումների հաճախականության հիմքում ընկած է ռիսկայնության աստիճանը: ՀՀ կառավարության վարչարարական գործընթացները կրճատելու և

⁵ Տվյալը՝ 10.01.2018 թվականի դրությամբ կայքը մշակող ընկերության հաղորդմամբ

գործարարությամբ զբաղվելու խոչընդոտները կրճատելու քաղաքականության շրջանակներում 2015 թվականի օգոստոսից սկսած պլանավորված տեսչական ստուգումները կասեցվել էին: 2015 թվականի օգոստոսից մինչև 2017 թվականի հուլիսը հանքարդյունաբերության ոլորտում պլանավորված տեսչական ստուգումներ կարող էին իրականացնել միայն հարկային և մաքսային տեսչությունները: Այդ ընթացքում ժամանակ առ ժամանակ հարկային տեսչությունը հանքարդյունաբերության ոլորտում ստուգումներ իրականացնելիս ընդգրկել է նաև Ընդերքի տեսչության աշխատակիցների, ինչը թույլ է տվել ստուգել օգտակար հանածոների արդյունահանման ծավալները և, ըստ այդմ, գնահատել հարկային պարտավորության չափը: 2017 թվականի հուլիսի 26-ից Տեսչական մարմինների մասին 2014 թվականին ընդունված ՀՀ օրենքի համաձայն ստեղծված տեսչությունները (Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմին, Առողջապահական տեսչություն) կարող են կատարել պլանավորված տեսչական ստուգումներ: Նորաստեղծ Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմինը կկարողանա տեսչական ստուգումներ իրականացնել հանքարդյունաբերության ոլորտում իր աշխատակազմը ու գործառույթները ձևավորելուց հետո:

ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1277-N որոշմամբ ձևավորված Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն (ՇՄՄՏԿ) ՊՈԱԿ-ում միավորված են ՀՀ ԲՆ-ի ենթակայության չորս մարմիններ: Միավորված չորս մարմիններն են՝ Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոնը, Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոնը, Թափոնների ուսումնասիրության կենտրոնը և Տեղեկատվական վերլուծական կենտրոնը: Այս չորս մարմիններից յուրաքանչյուրը շարունակում է իր լիազորություններն իրականացնել ինչպես նախկինում. ընդամենը փոփոխվել է վարչական կառուցվածքը:

ՇՄՄՏԿ ՊՈԱԿ-ը իրականացնում է Հայաստանում ջրի, օդի և հողի նմուշառության և աղտոտիչների վերլուծության լիազորություն: Զրի և օդի մոնիթորինգի արդյունքները պետք է պարբերաբար հրապարակվեն: Հողի նմուշների վերլուծություն չի կատարվել ֆինանսական միջոցների սղության պատճառով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունների տրամադրման գործընթացի շրջանակներում, իրականացնում է տեխնիկական անվտանգության պետական փորձաքննություն: Այդ աշխատանքը կատարում է Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ-ը կամ ՀՀ կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և ԱԻՆ-ի կողմից հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը (օր.⁶ մասնավոր ինժեներական կազմակերպություն)⁶: Տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթակա են պոչամբարների ու այլ ենթակառուցվածքների անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերը: Տեխնիկական անվտանգության գնահատման կարգն ու պահանջները կարգավորվում են Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքով և համապատասխան ենթաօրենսդրական ակտերով: ԱԻՆ-ի գործառույթների մեջ են մտնում նաև տեխնիկապես վտանգավոր օբյեկտների դասակարգումը, դրանց վարման, հանքարդյունաբերական թափոնների անձնագրավորման, կադաստրների վարման գործընթացները:

⁶ ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N 302—Ն որոշում՝ Տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հավատարմագրման եվ հաշվառման կարգը հաստատելու մասին

ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչությունն իրականացնում է աշխատավայրում առողջապահության և անվտանգության պահպանման ստուգում: 2013 թվականից ի վեր այս տեսչությունն ունի նաև աշխատանքի տեսչության ստորաբաժանում, որը 2017 թվականի ապրիլից կոչվում է Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության վարչություն: Այս վարչության գործառույթներից է տեսչական ստուգումների իրականացումը աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նպատակով աշխատանքի հետ կապված մահվան և այլ դժբախտ դեպքերի հետաքննումը, ինչպես նաև օրենքի պահանջների կատարման մասով առաջարկների ներկայացումը:

Ինչպես նշվեց, պլանավորված ստուգումները կատարվել էին 2015թ. սկզբից մինչև 2017թ. կեսերը: Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի հետ մեկտեղ, վերջերս վերահիմնադրվեց Առողջապահության պետական տեսչությունը, որը Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքի կարգավորման դաշտում է և, ըստ այդմ, 2017 թվականի հուլիսից լիազորված է իրականացնել պլանավորված տեսչական ստուգումներ:

Տեսչական մարմինների մասին օրենքի 6-րդ հոդվածի համաձայն տեսչական մարմինները իրականացնում են տնտեսավարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողության ներառյալ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով ստուգումների իրականացումը: Այս մարմինները պետք է համապատասխան ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ իրականացնեն բացատրական աշխատանքներ, տեղեկացնեն տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին: Նրանք լիազորված են լիցենզավորող մարմիններ ներկայացնելու ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրեր: Հաշվի առնելով, որ ընդերքօգտագործման իրավունքի ոլորտում տեսչական մարմինը նոր է ձևավորվել, այս մարմինների գործունեության արդյունավետությունը ոլորտում իրենց տեսչական գործառույթներն իրականացնելիս դեռևս շուտ է գնահատել:

2.2. Ֆիսկալ ռեժիմ (ստանդարտի 2.1 պահանջ)

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում հիմնական **ուղղակի հարկատեսակներն** ու վճարներն են՝

- ռոյալթիներ
- շահութահարկ (շահույթի 20%-ի չափով),
- անձնական եկամտային հարկ

2016 և 2017 թվականների համար այս հարկերի ու վճարների համար հիմք են ծառայել հետևյալ օրենքները.

- Հարկերի մասին ՀՀ օրենք,
- Շահութահարկի մասին ՀՀ օրենք,

- Եկամտային հարկի մասին ՀՀ օրենք,
- Բնօգտագործման և բնապահպանական վճարների մասին ՀՀ օրենք (սույն օրենքով կարգավորվում է բնօգտագործման վճարների, իսկ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման պարագայում՝ ռոյալթիների հաշվարկումը),
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին ՀՀ օրենք:

ՀՀ նոր Հարկային օրենսգիրքն ընդունվել է 2016 թվականին, սակայն հիմնական դրույթներն ուժի մեջ են մտնելու 2018 թվականի հունվարին: Օրենսգիրքը մեկ փաստաթղթում համախմբում է հարկման ոլորտը կարգավորող դրույթները: Ընդերքօգտագործման ոլորտի հարկման դրույքաչափերը հիմնականում մնացել են նույնը:

Ռոյալթիներ

Մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող կամ մետաղական խտանյութ արտադրող կազմակերպությունները պետք է ռոյալթի վճարեն մետաղական խտանյութի, ձուլվածքի կամ վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունից՝ համաձայն Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենքի, ՀՀ ԸՕ-ի և մի շարք ենթաօրենսդրական ակտերի:

Խտանյութի իրացման պարագայում ռոյալթի բազան վաճառքի պայմանագրում նշված գնի և ֆիզիկական ծավալի արտադրյալն է, որը որոշվում է գնման պայմանագրին համապատասխան: Ձուլվածքների կամ վերջնական արտադրանքի իրացման պարագայում ռոյալթի բազան հաշվարկվում է արտադրության մեջ օգտագործված խտանյութի ֆիզիկական ծավալը բազմապատկելով խտանյութի միջին գնով, որի հիմքում ընկած է LME գինը:

Ռոյալթին վճարվում է եռամսյակային կտրվածքով՝ իրացման պահին առուվաճառքի պայմանագրով վճարման ենթակա գումարի հիման վրա: 2012-2017թթ. ռոյալթիների վճարման համար հիմք հանդիսացող գները չէին կարող 10%-ից ավելի չափով տարբերվել Լոնդոնի մետաղների բորսայում (LME) սահմանված գներից: Չնայած մեզ հայտնի չեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կամ կիրառվող արտոնյալ վարկերի քաղաքականություն կամ այլ բնույթի արտոնություններ, որոնք բացառապես կիրառվում են ընդերքօգտագործման ոլորտում, այդուհանդերձ, հարկ է նկատել, որ 2017 թվականի մարտին կատարված փոփոխության արդյունքում թույլատրվում է LME գներից 20%-ով շեղվելու հնարավորություն ռոյալթի վճարման մասով:

Վերը նշված բազաների նկատմամբ կիրառվող ռոյալթի դրույքաչափը հիմնվում է շահութաբերության վրա:

Համաձայն 2018թ. ուժի մեջ մտնող ՀՀ Հարկային նոր օրենսգրքի՝ ռոյալթի համար սահմանվում է ռոյալթի բազայի նկատմամբ արժեքային (տոկոսային) դրույքաչափ, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R = 4 + [C/(L \times 8)] \times 100, \text{ որտեղ՝}$$

R – ոռոգման ծախսերի դրույքաչափն է տոկոսով:

C – շահույթն է նախքան հարկումը՝ դրամով, որը հաշվարկվում է որպես ոռոգման ծախսերի և ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական գործունեության գծով ծախսերի, սույն բաժնով սահմանված ոռոգման և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն:

L – ոռոգման ծախսերի քանակն է դրամով:

Հարկային օրենսգրքի 209 հոդվածի համաձայն, նախքան հարկումը շահույթի հաշվարկման ժամանակ իրացման շրջանառությունից ֆինանսական գործունեության գծով ծախսերի, ոռոգման և նախորդ տարիների հարկային վնասների նվազեցումը չի կատարվում՝ անկախ այդ ծախսերն ու հարկային վնասները հանքավայրերի շահագործման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության հետ կապված լինելու հանգամանքից: Ավելին, շահույթը նախքան հարկումը բաղադրիչի հաշվարկման ժամանակ բնօգտագործման վճար վճարողի վարչական ծախսերի, իրացման ծախսերի և ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի նվազեցումները հաշվի են առնվում համախառն եկամտի մեջ ոռոգման ծախսերի շրջանառությանը համապատասխանող տեսակարար կշռով:

Շահութահարկ

Հանքարդյունաբերական ընկերությունները հարկվում են 1997 թվականին ընդունված՝ Շահութահարկի մասին ՀՀ օրենքով: Շահութահարկը հանքարդյունաբերող ընկերությունների նկատմամբ կիրառվում է նույն կերպ, ինչ Հայաստանում գործող ցանկացած այլ ընկերության նկատմամբ՝ առանց հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող հատուկ կարգավորումների: Շահութահարկի դրույքաչափը 20% է, որը գանձվում է եկամտից՝ հաշվարկված Շահութահարկի մասին ՀՀ օրենքին համապատասխան:

Եկամտային հարկ

Անձնական եկամտային հարկը ամենամյա կտրվածքով վճարում են գործատուները իրենց աշխատողների անունով: Դա կարգավորվում է 2010 թվականին ընդունված Եկամտային հարկի մասին ՀՀ օրենքով: Սա պրոգրեսիվ հարկատեսակ է, որն ունի 3 դրույքաչափ՝ 24.4%, 29% և 36%: Ամենաբարձր դրույքը կիրառվում է ամսական 2 միլիոն ՀՀ դրամը (մոտ 4200 ԱՄՆ դոլար) գերազանցող՝ հարկման ենթակա եկամտի նկատմամբ: 2018 թվականի հունվարից առաջին երկու դրույքաչափերը կնվազեցվեն՝ համապատասխանաբար 23%-ի և 28%-ի⁷: Հանքարդյունաբերության ոլորտի համար առանձնահատուկ կարգավորումներ սահմանված չեն:

Այլ վճարներ

Ընդերքօգտագործողների կողմից սահմանված կարգով վճարվում են նաև

⁷ Երկրորդի հարկման բազան փոփոխվել է (150000դրամ)

- Բնապահպանական վճարներ (շրջակա միջավայրի պահպանության համար), որոնք մուտքագրվում են ՀՀ պետական բյուջե,
- Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին (ռեկուլտիվացիայի համար) կատարվող վճարումներ, դրանք մուտքագրվում են ՀՀ ԲՆ-ի արտաբյուջետային գանձապետական ֆոնդ: Վճարումները կարգավորվում են ՀՀ ԸՕ-ով, Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը հաստատելու մասին 2012թ. օգոստոսի 23-ին ընդունված ՀՀ կառավարության N 1079 որոշմամբ, ինչպես նաև Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը հաստատելու մասին 2012 թ. դեկտեմբերի 24-ին ընդունված N 365-Ն որոշմամբ: Նախնական վճարումները կատարվում են պայմանագրի ստորագրումից հետո, և գումարի չափը չպետք է լինի գնահատված ընդհանուր գումարի 15%-ից պակաս: Հետագա ամենամյա վճարումները հաշվարկվում են մոտավոր հաշվարկված ընդհանուր արժեքի մնացած մասից, և նախատեսված ռեկուլտիվացիոն միջոցառումների ժամկետով: Համակարգն, այդուհանդերձ, չի ապահովում բավարար ֆինանսական միջոցների առկայությունը ժամանակի ցանկացած պահին հողերի լիարժեք ռեկուլտիվացման և փակման համար: Չկան դրույթներ, որոնցով կհաշվառվեն ժամանակի ընթացքում դրամի արժեքի փոփոխությունները, որոնք տեղի են ունենում, օրինակ, արտարժույթի տատանումների կամ գնաճի հետևանքով: Ռեկուլտիվացիոն ֆոնդի մշտադիտարկումն ու վերահսկողությունն իրականացնում է ՀՀ ՖՆ-ն՝ 1999 թվականի հունիսի 10-ին ընդունված՝ ՀՀ կառավարության թիվ 404 որոշմամբ սահմանված կարգով:
- Մշտադիտարկումների իրականացման նպատակով վճարներ, որոնք պահվում են ՀՀ կենտրոնական գանձապետարանում ՀՀ ԲՆ-ի անվամբ բացված դեպոզիտային հաշվում: Մշտադիտարկման նպատակով հատկացումների գլխավոր կարգադրիչ է համարվում ՀՀ ԲՆ-ն: Տվյալ տարում մշտադիտարկումների իրականացումը ֆինանսավորվում է վերոնշյալ դեպոզիտային հաշվից ՀՀ ԲՆ-ի «Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտաբյուջետային հաշիվ մուտքագրված գումարների հաշվին՝ համաձայն ՀՀ Կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն Օգտակար հանաժոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին որոշման:
- Պետական տուրքի վճար:

Անուղղակի հարկադրեցականներ են ԱԱՀ-ը, ակցիզային և տեղական նշանակության հարկերը (հողի հարկն ու գույքահարկը, որոնք հավաքագրվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և մուտքագրվում են տեղական համայնքային բյուջե): Հողի հարկը և գույքային հարկերը անշարժ գույքից, որպես կանոն, հաշվարկվում են կադաստրային արժեքի հիման վրա: Օրինակ, իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող արդյունաբերական գույքի տարեկան հարկը կազմում է կադաստրային արժեքի 0.6%-ը: Հողի պարագայում, տարեկան հարկադրույքը, որպես կանոն, կազմում է կադաստրային արժեքի 0,5%-ից մինչև 1%: Բացառություն է կազմում

գյուղատնտեսական նշանակության հողերը, որտեղ հարկադրույքը սահմանված է ենթադրյալ եկամտի 15%-ի չափով՝ հիմնվելով կադաստրային արժեքի վրա:


2.3. Ֆիսկալ (հարկաբյուջետային) ապակենտրոնացման աստիճան

Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքին համապատասխան՝ բյուջետային համակարգը խարսխված է բյուջեի երկու մակարդակների վրա՝ **պետական բյուջե** և **համայնքային բյուջեներ** (տես պատկեր 1): Բոլոր հիմնական հարկատեսակներն ու վճարները գանձվում են պետական կառավարման մարմինների կողմից և մուտքագրվում պետական բյուջե: Այդ շարքում են նաև հանքարդյունաբերության ոլորտից մուտքեր ապահովող աղբյուրները՝ ռոյալթիները, շահութահարկը, անձնական եկամտային հարկը, բնօգտագործման վճարներն ու բնապահպանական վճարները և տարատեսակ այլ վճարներն ու տուրքերը:

Համայնքային բյուջեների մուտքեր ապահովում են հողի հարկը, գույքահարկը, վարձակալական հարկերը, նվիրատվություններ կազմակերպություններից, ինչպես նաև սուբվենցիաներ համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքի, որոնք ամեն տարի վերանայվում և հաստատվում են: Տեղական ինքնակառավարման մարմիններն են հավաքում, մուտքագրում և բաշխում համայնքի բյուջետային եկամուտները: Համաձայն Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին ՀՀ օրենքի 3 հոդվածի ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված տվյալ մարզի կամ համայնքի զարգացման (սոցիալ-տնտեսական զարգացման) կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերի հիման վրա: Ծրագիրը հրապարակում է համայնքի ղեկավարը, որի վերաբերյալ հրապարակումից տասնհինգօրյա ժամկետում համայնքի ղեկավարին գրավոր առաջարկություններ կարող են ներկայացնել իրավաբանական և ֆիզիկական անձինք: Նախատեսվող միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները համաձայնեցվում են բնապահպանության և առողջապահության բնագավառներում լիազորված պետական մարմինների հետ: Միմիայն համաձայնեցված ծրագրերն է համայնքի ղեկավարը ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը:

Անհրաժեշտ է ծրագրերի ընտրության, ստացված առաջարկները մերժելու, ընտրված ծրագրերի իրականացման գործընթացը դարձնել հնարավորինս հրապարակային: Համայնքի ղեկավարը պետք է հրապարակի ծրագրերի հետ կապված երրորդ անձանցից ստացված գրավոր առաջարկությունները, ներկայացնի դրանք նաև լիազոր մարմիններին, ինչպես նաև հրապարակի երրորդ անձանցից ստացված ծրագրերի առաջարկները մերժելու հիմքերը և հրապարակային դարձնի հաստատված ծրագրերի իրականացման գործընթացը, մասնավորապես ներգրավված կազմակերպությունների ցանկը, դրանց իրական սեփականատերերը, ընտրության կարգը և այլն:

Պատկեր 1. Պետական բյուջեի և համայնքային բյուջեների եկամուտներ



Համաձայն Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի՝ բյուջետային մուտքերը չեն կարող կապվածություն ունենալ որոշակի ելքերի հետ, բացառությամբ նպատակային բյուջետային մուտքերի ստացման դեպքերի կամ օրենսդրությամբ նպատակային բյուջետային ֆոնդերի ստեղծման դեպքում:

Նպատակային բյուջետային ֆոնդը բյուջետային մուտքերի կազմից օրենքով կամ կառավարության կամ համայնքի ավագանու որոշումներով առանձնացվող մուտքերի որոշ տեսակների և բացառապես դրանց հաշվին ֆինանսավորվող բյուջետային ելքերի ամբողջությունն է: Նպատակային բյուջետային ֆոնդը համապատասխան բյուջեի բաղկացուցիչ մասն է: Այսինքն, նպատակային բյուջետային մուտքերը կարող են լինել նվիրատվության կամ վարկի կամ պարտադիր վճարների գծով պետական կամ համայնքի բյուջե մուտքագրվող գումարների տեսքով:

Հետևյալ աղբյուրների նախնական ուսումնասիրության արդյունքում որպես նպատակային բյուջետային ֆոնդեր դասակարգված արդյունահանողների կատարած վճարումների վերաբերյալ կոնկրետ տեղեկատվություն չկա.

- ՀՀ ՏԿՁԵ-ի պաշտոնական կայքէջ, մասնավորապես համայնքային բյուջեների կատարվող բաժիններ (ՀՀ համայնքների բյուջետային եկամուտներ և ծախսեր),
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ:

Բյուջետային մուտքերի և ելքերի միջև, որպես կանոն, որևէ կապ չկա: Օրինակ՝ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտից գանձվող ռոյալթիները մուտքագրվում են պետական բյուջե, այլ ոչ՝ հատուկ այդ նպատակով ստեղծված ֆոնդ: Միակ բացառությունը բնապահպանական վճարներն են, որոնք մուտքագրվում են պետական բյուջե և որոշ ազդակիր համայնքներ (սակայն՝ ոչ բոլորը) իրավունք ունեն դիմելու բնապահպանական ծրագրերի ֆինանսավորման, որի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի նախորդ տարում հավաքագրված բնապահպանական վճարների ընդհանուր գումարը: Արտաբյուջետային Շրջակա միջավայրի պահպանության դրամազվիսի ֆոնդին կատարվող վճարումները ծախսվում են նպատակային: Ֆոնդը կոնկրետ ծախսվում է վճարումներ կատարած ընկերությունների հանքի փակման և հանքի տեղամասում բնապահպանական միջոցառումների իրականացման նպատակով: Համայնքներին վճարվող հողի հարկն ու գույքահարկը չունեն ծախսային հասցեականություն:

ՀՀ Սահմանադրության համաձայն մարզերը պետական (ազգային) կառավարման համակարգի մաս են: Մարզերից տեղական ինքնակառավարման մարմիններին (համայնքներին) սուբսիդիաների տրամադրման գործընթացն իրականացվում է տարածքային վարչական մարմինների (մարզպետարան) կողմից: Հակառակ պրոցեսը բացակայում է:

Տեղական կառավարման մարմիններն ունեն **արտաբյուջետային ֆոնդեր** Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 1.2-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն: Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 15.9-րդ հոդվածը սահմանում է, որ պետական հիմնարկները կարող են արտաբյուջետային հաշիվ բացել միայն ՀՀ կառավարության որոշմամբ: Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև համայնքին ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից նվիրաբերության կամ վարկի տեսքով տրամադրվող դրամական միջոցներն այդ անձանց պահանջով, պետական լիազորված մարմնի համաձայնությամբ և համայնքի ավագանու որոշմամբ կարող են տեղադրվել գանձապետարանի արտաբյուջետային միջոցների հաշիվներում կամ որևէ բանկում: Պետք է նկատել, որ չի պահանջվում, որպեսզի արտաբյուջետային ֆոնդերի գումարներն արտացոլվեն համայնքային բյուջեներում: Նախնական ուսումնասիրության «Տեղական կառավարման մարմինների արտաբյուջետային ֆոնդեր» բաժինը (7.4) անդրադառնում է նման ֆոնդերի տվյալների բացահայտման հետ կապված ռիսկերին և առաջարկություններ է ներկայացնում ԲՇԽ-ին հետագա քննարկման համար:

3. Վերջերս իրականացված բարեփոխումների ընդհանուր նկարագրություն (ստանդարտի 2.1(b) պահանջ)

Վերջին տարիներին Հայաստանը մի շարք նախաձեռնություններ է իրականացրել հանքարդյունաբերության ոլորտի բարեփոխման ուղղությամբ: Ավելին, 2018 թվականին Հայաստանը սկսելու է հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակման գործընթացը: Այս բարեփոխումները և հարակից նախաձեռնությունները քննարկված են ստորև:

3.1. ԱՃԹՆ-ն և Բաց կառավարման գործընկերություն

Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարձրացմանն ուղղված բարեփոխումներից մի քանիսը բխում են Հայաստանի՝ «Բաց կառավարություն» գործընկերությանն (ԲԿԳ) անդամակցությունից: ԲԿԳ շրջանակներում Հայաստանի երկրորդ գործողությունների 2014-2016 թթ. ծրագիրը պարունակում է դրույթներ, որոնք վերաբերում են հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարձրացմանը: Առաջինը Հանրապետական երկրաբանական ֆոնդ ՊՈԱԿ-ի տվյալների թվայնացումն ու հրապարակումն է: Արդյունքում ստեղծվել է նոր www.geo-fund.am ինտերնետային կայքը, որը պարունակում է երկրաբանական նյութեր և փաստաթղթեր (հաշվետվություններ, քարտեզներ, հանքավայրերի անձնագրեր և այլն), ինչպես նաև տրված թույլտվությունների ցուցակը: ԲԿԳ-ով ստանձնած երկրորդ հանձնառությամբ («Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության ապահովում» խորագրով) Կառավարությունը պարտավորվել էր սահմանվել մեկնարկել ԱՃԹՆ-ի անդամակցության գործընթացը:

ԱՃԹՆ-ի անդամակցության գործընթացը Հայաստանը սկսել է 2015 թվականի հուլիսին, երբ ՀՀ վարչապետը պաշտոնապես հայտարարեց նախաձեռնությանը միանալու մտադրության մասին: 2016 թվականի հունիսի 27-ին տեղի ունեցավ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի առաջին նիստը, իսկ դեկտեմբերի 26-ին ԲՇԽ-ն կոնսենսուսով հաստատեց Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի տեխնիկական առաջադրանքը (աշխատակարգը) և 2017-2018 թվականների ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագիրը: 2016 թվականի դեկտեմբերի 28-ի գրությամբ ՀՀ կառավարությունը պաշտոնապես ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը ներկայացրեց թեկնածության հայտը:

Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը հաստատվեց 2017 թվականի մարտի 9-ին Բոգոտայում կայացած ԱՃԹՆ-ի խորհրդի նիստում: Որոշման մեջ սահմանվեցին հետևյալ վերջնաժամկետները.

ԱՃԹՆ-ն ընդունում է Հայաստանի Հանրապետությանը որպես ԱՃԹՆ-ի թեկնածու երկիր 2017 թվականի մարտի 9-ին: Համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է իր առաջին ԱՃԹՆ-ի զեկույցը հրապարակի թեկնածու դառնալուց հետո 18 ամսվա ընթացքում (այն է՝ մինչև 2018 թվականի սեպտեմբերի 9-ը): Հայաստանը պետք է մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը հրապարակի 2017 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն: Վավերացումը կսկսվի թեկնածու դառնալուց հետո երկուսուկես տարվա ընթացքում (այն է՝ մինչև 2019 թվականի սեպտեմբերի 9-ը):

3.2. Կարևոր օրենսդրական փոփոխություններ

Ընդերքօգտագործման թափոնների կառավարում. ՀՀ ԸՕ-ի թափոնների կառավարմանը վերաբերող դրույթների փոփոխությունները, որոնք կատարվեցին 2016 թվականի հոկտեմբերին, էականորեն բարելավեցին ընդերքօգտագործման թափոնների կարգավորումը: Նոր կարգավորումներով ընդերքօգտագործողները պարտավոր են ներկայացնել ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլաններ և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքներ: Փոփոխությունները նաև սահմանում են ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցմանը ներկայացվող չափանիշները, ընդերքօգտագործման թափոնների վերամշակման կարգը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում դիտանցում իրականացնելու կարգը: Այդ փոփոխություններին գալիս են լրացնելու ՀՀ կառավարության մի շարք որոշումներ, որոնք սահմանում են տեխնիկական բովանդակությունն ու տիպային ձևերը՝ ըստ նպատակահարմարության:

Ռոյալթիի բազայի հաշվարկ. 2017 թվականի մարտի 1-ին ՀՀ Ազգային Ժողովն ընդունեց Հարկային օրենսգրքի, ինչպես նաև Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենքի փոփոխությունները: Հարկ է նկատել, որ մինչ այդ փոփոխությունների ընդունումը ընդերքօգտագործող ընկերությունը կարող էր խտանյութը վաճառել Լոնդոնի մետաղների բորսայի (LME) դրույքաչափից մինչև 10% ցածր գնով, իսկ պայմանագրային գինը ընդունվում էր որպես հիմք՝ շահութահարկի և ռոյալթիների հաշվարկի համար: Ընդունված փոփոխությունների ուժով ընդունելի է LME դրույքաչափից մինչև 20% շեղումը:

Ընթացիկ փոփոխություններ ՇՄԱԳ օրենքում. 2017 թվականի օգոստոսի 21-ին ՀՀ ԲՆ-ն առցանց հրապարակել է օրենքի փոփոխությունների նախագիծը: Փոփոխություններն ունեն երկու ուղղություն. ներդնել շրջակա միջավայրի ռազմավարական գնահատում (ՌԷԳ) կատարելու պահանջ և բարելավել հանրային մասնակցության պրոցեսը: Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման առումով նախագծով առաջարկվում է առանձին գլուխ ավելացնել օրենքում, իսկ արդյունավետ հանրային մասնակցության ապահովման լրացուցիչ պարտականությունները նախատեսված են օրենքի 6-րդ գլխում ավելացման ենթակա երկու հոդվածներով: Նախագիծը նաև նախատեսում է, որ երկու գործընթացների հետագա մանրամասները պետք է սահմանվեն ՀՀ կառավարության որոշումներով:

Նոր Հարկային օրենսգրքի ընդունում. նախատեսվող Հարկային օրենսգրքում հանքարդյունաբերության ոլորտի հարկմանը վերաբերող հիմնական դրույթները մնացել են անփոփոխ: Սակայն բնապահպանական վճարները դառնալու են բնապահպանական հարկեր, ինչը ենթադրում է հարկային վարչարարության որոշակի փոփոխություն: 2021 թվականի հունվարից սկսած սահմանված են նոր բնապահպանական հարկի դրույքաչափեր ընդերքօգտագործման թափոնները պոչամբարներում, արտադրական լցակույտերի, մակաբացման ապարների տեղամասերում և (կամ) համանման վայրերում ընդերքօգտագործման թափոնների մեկանգամյա տեղադրման կամ պահման համար: Մետաղական օգտակար հանածոների հանքավայրերում ոչ վտանգավոր թափոնների, այդ թվում՝ մակաբացման ապարների տեղադրումը հատկացված վայրերում հարկվելու է առաջին անգամ՝ 3 ՀՀ դրամ/տոննա դրույքաչափով: Փոփոխվել են նաև մետաղական

օգտակար հանածոների հանքավայրերի համար հատուկ հատկացված տեղերում, այդ թվում՝ պոչամբարներում, ըստ վտանգավորության աստիճանի առաջինից չորրորդ դասի թափոնների մեկանգամյա տեղադրման կամ պահման համար բնապահպանական հարկի դրույքաչափերը: Դրույքաչափերի հաշվարկման կարգը փոփոխվելու է ՀՀ Հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր տարի մինչև 2020թ., մասնավորապես՝ 2018 թ. հունվարի 1-ից արտադրության թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու համար կիրառվող բնապահպանական հարկի դրույքաչափերը որոշվելու են որպես ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019թ. հունվարի 1-ից՝ որպես ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված դրույքաչափերի և 1.2 գործակցի արտադրյալ, իսկ 2020թ. հունվարի 1-ից՝ որպես ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ⁸:

3.3. Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակում

Համաշխարհային բանկը պատվիրել է «Հայաստան. Հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարական կայունության գնահատում» խորագրով զեկույցը՝ «...օգնելու ՀՀ կառավարությանը ավելի լավ պատկերացում կազմել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում առկա սոցիալական և բնապահպանական հիմնական մարտահրավերների և ապագայի հնարավորությունների մասին, և աջակցելու հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության մշակմանը, որը համահունչ կլինի միջազգային լավագույն փորձին և կնպաստի կայուն զարգացմանը» (պարբ.՝ VI):

Զեկույցի հիմնական առաջարկությունն է՝ մշակել «հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման համապարփակ քաղաքականություն», որը պետք է համահունչ լինի երկրի՝ ԱՃԹՆ-ի շրջանակներում թափանցիկության և մասնակցության ավելի բարձր աստիճանի ապահովմանն ուղղված ջանքերին: Զեկույցում նաև առաջարկվում է նախաձեռնել մի շարք նեղ ուսումնասիրություններ հայեցակարգային լուծումների համար տեղեկատվական հիմք ապահովելու նպատակով: Ինչպես տեղեկացել ենք այդպիսի ուսումնասիրություններից երկուսը՝ բնապահպանական և սոցիալական հարցերի ուսումնասիրությունը և տնտեսական ու ֆինանսական հարցերի ուսումնասիրությունը, կատարաստվի 2018 թվականին: Ակնկալվում է նաև, որ 2018 թվականին կառավարության կողմից կիրականացվի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակումը:

⁸ ՀՀ Հարկային օրենսգրք, Հոդված 170 Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու կամ պահելու համար բնապահպանական հարկի դրույքաչափերը

4. Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացի և պայմանագրերի թափանցիկություն

4.1. Պայմանագրերի և այլ փաստաթղթերի հրապարակում

Համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի 2.3-րդ պահանջի՝ պետությունները պարտավոր են վարել հանրությանը հասանելի գրանցամատյան կամ կադաստրի համակարգ (համակարգեր), որը (որոնք) կպարունակի հետևյալ արդիական և համակողմանի տեղեկությունները՝ ԱՃԹՆ-ի զեկույցում ներառված ընկերություններին տրամադրված լիցենզիաներից յուրաքանչյուրի վերաբերյալ.

- Լիցենզառուն (լիցենզառուները),
- Որոշված լինելու դեպքում՝ լիցենզավորված տարածքի կոորդինատները: Այն դեպքում, երբ կոորդինատները որոշված չեն, կառավարությունը պարտավոր է ապահովել, որ լիցենզիայի տարածքի չափերի և տեղադիրքի մասին տվյալները բացահայտվեն լիցենզիաների գրանցամատյանում և կոորդինատները կառավարության համապատասխան գործակալությունից հանրության համար հասանելի լինեն առանց անհիմն վճարների և սահմանափակումների: ԱՃԹՆ-ի զեկույցը պետք է պարունակի ցուցում այն մասին, թե ինչպես այդ կոորդինատները կարող են հասանելի դառնալ, ինչպես նաև, առկայության դեպքում, դրանք ձեռք բերելու արժեքը: ԱՃԹՆ-ի զեկույցում պետք է նաև արձանագրվեն այն ծրագրերը և ժամանակացույցը, որոնց համաձայն այս տեղեկատվությունը կարող է ազատ և էլեկտրոնային եղանակով հասանելի դառնալ լիցենզիաների գրանցամատյանի միջոցով:
- Հայտի ներկայացման ամսաթիվը, լիցենզիայի շնորհման ամսաթիվը և տևողությունը:
- Արտադրության լիցենզիաների դեպքում արտադրվող ապրանքատեսակը:

Ակնկալվում է, որ լիցենզիաների գրանցամատյանը կամ կադաստրը պարունակի տեղեկություններ բոլոր տրված լիցենզիաների մասին, այդ թվում՝ ԱՃԹՆ-ի զեկույցում չներառված ընկերությունների վերաբերյալ, որոնց կողմից կատարված վճարումները համաձայնեցված էականության շեմից ցածր են: Նման համակողմանի բացահայտմանը խանգարող բոլոր էական իրավական կամ գործնական խոչընդոտները պետք է արձանագրվեն և բացատրվեն ԱՃԹՆ-ի զեկույցում՝ ներառելով տեղեկատվություն այդպիսի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված կառավարության ծրագրերի և ցանկալի արդյունքներին հասնելու կանխատեսվող ժամանակացույցի մասին:

Ըստ ՀՀ ԸՕ-ի ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերն են ընդերքօգտագործման թույլտվությունը կամ համաձայնությունը (երկրաբանական ուսումնասիրության դեպքում), հաստատված աշխատանքային ծրագիրը կամ արդյունահանման նախագիծը, լեռնահատկացման ակտը և պայմանագիրը: Ներկայումս, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումից հետո վերոնշյալ բոլոր փաստաթղթերը հաշվառվում են, և դրանց պատճենները արխիվացվում են ՀՀ ԷԵԲՊՆ-ի ընդերքի

գործակալությունում: Ընդերքի գործակալությունը վարում է ընդերքօգտագործման իրավունքների գրանցամատյան (ռեեստր): Գրանցամատյանում պահվող տեղեկատվությունը ամփոփ ներկայացվում է հանրությանը ՀՀ ԷԵԲՊՆ-ի (<http://minenergy.am/en/page/422>), ՀՀ կառավարության (<https://www.e-gov.am/lists/>), ինչպես նաև Երկրաբանական ֆոնդի (<https://www.geo-fund.am/hy/>) կայքերում՝ *Microsoft Word* և *PDF* ձևաչափերով: Հանրությանը հասանելի տեղեկատվությունը թարմացվում է եռամսյակային կտրվածքով: Այդուհանդերձ, փաստաթղթերի պատճենները կամ դրանց ամբողջական բովանդակությունը դեռևս չեն հրապարակվում, բացառությամբ աշխատանքային կամ արդյունահանման նախագծի, որոնց նախնական տարբերակները հրապարակվում են ՀՀ ԲՆ-ի ինտերնետային կայքում՝ ՇՄԱԳՓ-ի հանրային լուսմների շրջանակներում (<http://www.mnp.am/?p=315>):

Հանրությանը հասանելի ընդերքօգտագործման իրավունքների գրանցամատյանում երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքների մասով ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.

- ընդերքօգտագործման թույլտվությունը ստացող իրավաբանական անձի անվանումը,
- թույլտվության համարը,
- թույլտվության տրամադրման ամսաթիվը,
- թույլտվության գործողության ժամկետը,
- գործունեության իրականացման վայրը (սակայն տարածքը նշվում է առանց կոնկրետ կոորդինատների, թեև կոորդինատների մասին ինֆորմացիա պահվում է Ընդերքի գործակալությունում),
- գործունեության իրականացման նպատակը,
- ընդերքօգտագործման պայմանագրի համարը, պայմանագրի գործողության ժամկետը,
- այլ տեղեկություններ՝ «Ծանոթություններ» բաժնում (այն է՝ թույլտվությունների երկարաձգման մասին տեղեկություններ և այլն):

Վերջին շրջանում ՀՀ ԷԵԲՊՆ-ի⁹ կայքէջում տեղադրվում են նաև ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի կողմից ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման հրամանները (http://minenergy.am/legislation/browse/cat_id/4):

ՇՄԱԳ-ի գեկույցները, որոնք ներկայացվում են ՀՀ ԲՆ-ի փորձաքննության, պետական փորձաքննության եզրակացությունների հետ մեկտեղ տեղադրվում են ՀՀ ԲՆ-ի պաշտոնական կայքում (<http://old.mnp.am/?p=200>): Առաջարկվող աշխատանքային ծրագիրը կամ արդյունահանման նախագիծը, ինչպես նաև ազդեցության նախնական գնահատման հայտը հրապարակվում են ՀՀ ԲՆ-ի կայքէջում՝ նախքան ՇՄԱԳ-ի հանրային լուսմների գործընթացի մեկնարկը, սակայն կայքում տեղադրված փաստաթղթերը չեն թարմացվում այնպես, որ արտացոլեն ՇՄԱԳ-ի հանրային լուսմների ընթացքում ստացված դիտողություններն ու առաջարկությունները և դրանց համապատասխան արձագանքը: ԲՇԽ-ի որոշ անդամների դիտարկումների համաձայն՝ շատ դեպքերում աշխատանքային ծրագրերը կայքում չեն դրվում, կամ վերջիններս չեն համապատասխանում ՇՄԱԳ-ին:

⁹ http://minenergy.am/legislation/browse/cat_id/4

ՇՄԱԳ-ի փորձաքննության եզրակացությունները կայքում դրվում են աշխատանքային ծրագրի հաստատվելուց հետո, կամ առհասարակ չեն դրվում: ՇՄԱԳՓ-ի մասին ՀՀ օրենքի պահանջ է նաև, որ հանրային լսումների արձանագրությունները հրապարակվեն ՀՀ ԲՆ-ի կայքէջում, սակայն ներկա պահին այդ կայքում առկա են միայն 2015թ. արձանագրություններ:

Հանքավայրերի և հանքերևակումների համառոտ նկարագրերը (որոնք կոչվում են անձնագրեր) ևս առկա են առցանց և ներբեռնված են ՀՀ ԷԵԲՊՆ-ի և Երկրաբանական ֆոնդի կայքերում, սակայն դրանցում առկա չեն հանքավայրերի և հանքերևակումների կոորդինատները: Բացի այդ պետք է նշել, որ անձնագրերը, որոնք առկա են կամ կազմվում են, չեն համապատասխանում ներկայիս անձնագրավորման կարգի պահանջներին և թարմացման կամ վերանայման կարիք ունեն: Այսինքն, անձնագրային տեղեկատվության կիրառումը, որպես ԱՃԹՆ-ի գործընթացում արժանահավատ տեղեկատվություն, անձնագրերի ներկայիս տեսքով չի կարող իրականացվել:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ թույլտվությունների մասով ԱՃԹՆ-ի ստանդարտի կողմից պահանջվող հրապարակման ենթակա տվյալներից ներկայումս հանրությանը հասանելի չեն

- թույլտվությամբ տրված տարածքի կոորդինատները,
- հայտի ներկայացման ամսաթիվը,
- արդյունահանման թույլտվության դեպքում արդյունահանվող օգտակար հանածոյի անվանումը:

Օրենսդրական և ինստիտուցիոնալ կարողությունների բացերի վերաբերյալ իրավական վերլուծության արդյունքում պարզվել է, որ թեպետ ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացում որոշակի առումով առկա է տվյալների հրապարակայնություն, սակայն դրանց իրավական հիմքերը հասկանալի չեն, ինչպես նաև առկա չէ համապատասխան տեղեկատվության հրապարակման համակարգավածություն կամ սկզբունքայնություն: Բացի այդ, չի հրապարակվում տրամադրված պաշարների քանակի, արդյունահանման ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը: ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխանության, թույլտվությունների տրամադրման գործընթացի և պայմանագրերի թափանցիկության տեսանկյունից հատկապես կարևորվում է հետևյալ տեղեկատվության հրապարակումը.

1. տնտեսվարող սուբյեկտի անվանումը,
2. թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամկետը,
3. ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները,
4. օգտակար հանածոյի անվանումը,
5. տրամադրված պաշարների քանակը,
6. հանքի տարեկան արտադրողականությունը,
7. արդյունահանման պլանավորված ծավալը:

Վերոնշյալ 1-ին և 2-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը ներկայումս հրապարակվում են, ուստի դրանց հրապարակայնության հնարավոր խոչընդոտներին անդրադառնալու կարիք չկա:

Գտնում ենք, որ ԱՃԹՆ-ի ստանդարտի և հասարակական վերահսկողության տեսանկյունից կարևոր է հատկապես տրամադրված պաշարների քանակի, հանքի տարեկան արտադրողականության և արդյունահանման ծավալների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության հետ կապված խոչընդոտների վերհանումը, մասնավորապես՝ արդյոք տրամադրված պաշարների քանակին, հանքի տարեկան արտադրողականության և արդյունահանման պլանավորված ծավալին վերաբերող տեղեկատվությունը կարող է հանդիսանալ առևտրային գաղտնիք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141 հոդվածի համաձայն տեղեկատվությունը առևտրային գաղտնիք է, եթե

Ա. այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք,

Բ. չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն,

Գ. տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

Առևտրային գաղտնիքին վերաբերող որոշ դրույթներ առկա են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ հոդվածներում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 68 գլուխը վերաբերում է չբացահայտված տեղեկատվությանն ու դրա պաշտպանությանը, իսկ 1164 հոդվածի համաձայն այդպիսիք են համարվում տեխնիկական, կազմակերպչական կամ առևտրային տեղեկատվությունները: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ դրույթները ընդգրկված են օրենսգրքի մտավոր սեփականությանն առնչվող բաժնում, ուստի գտնում ենք, որ դրանց վերաբերյալ կարգավորումները կիրառելի չեն քննարկվող հարաբերությունների նկատմամբ:

Չբացահայտվող տեղեկատվության պաշտպանությանն անդրադարձել է նաև Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքը: Այս օրենքով չբացահայտված տեղեկատվությունը առավել տարածական ձևակերպում է ստացել, ուստի ֆորմալ առումով կարծում ենք, որ տրամադրված պաշարների քանակին, հանքի տարեկան արտադրողականությանը և արդյունահանման ծավալին վերաբերող տեղեկատվությունը կարող է հանդիսանալ չբացահայտված Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքի տեսանկյունից: Այսպես, Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքի 16 հոդվածի համաձայն չբացահայտված տեղեկատվության առարկա կարող են լինել արտադրության եղանակները, քիմիական բանաձևերը, գծագրերը, փորձնական նմուշները, ապրանքի վաճառքի և բաշխման եղանակները, *պայմանագրի ձևերը, գործարար ծրագրերը*, պայմանագրային գների մանրամասնությունները, սպառողների մասնագիտական գործունեության ոլորտները (պրոֆիլները), գովազդման ռազմավարությունը, մատակարարների կամ հաճախորդների ցուցակները, համակարգչային ծրագրային ապահովումները, տվյալների հիմնապաշարները (բազանները) և այլն:

Հաշվի առնելով հստակ ամրագրված առևտրային գաղտնիքի հասկացության սահմանման բացակայությունը ՀՀ օրենսդրությունում սույն հետազոտության շրջանակներում փորձ է արվել առևտրային գաղտնիքի հասկացության մեկնաբանությունը գտնել տեսական գրականության միջոցով: Արդյունքում, առևտրային գաղտնիքը սովորաբար մեկնաբանվում է որպես տեղեկատվության գաղտնիության ռեժիմ, որը թույլ

է տալիս տեղեկությանը օրինաչափ տիրապետողին առկա կամ հնարավոր հանգամանքներում ավելացնել եկամուտները, խուսափել չարդարացված ծախսերից, պահպանել դիրքը ապրանքների, աշխատանքների, ծառայությունների շուկայում կամ ստանալ այլ առևտրային օգուտ: Առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները մեկնաբանվում են որպես ցանկացած բնույթի տեղեկություններ (արտադրական, տեխնիկական, տնտեսական, կազմակերպական, այդ թվում՝ գիտատեխնիկական բնագավառում մտավոր գործունեության արդյունքների մասին, ինչպես նաև մասնագիտական գործունեության իրականացման միջոցների մասին տվյալներ), որոնք երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունեն իրական կամ հնարավոր առևտրային արժեք, օրենքի ուժով հասանելի չեն երրորդ անձանց և որոնց նկատմամբ (այդ տեղեկությունների իրավատիրոջ կողմից) սահմանված է առևտրային գաղտնիքի ռեժիմ:

Ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ որոշակի տեղեկատվությունը գաղտնիք համարելն, ըստ էության, կազմակերպության իրավունքն է: Այս իրավունքը պատկանում է իրավատիրոջը պայմանով, որ նա չի խախտում օրենքով սահմանված սահմանափակումները: Տնտեսվարող սուբյեկտն իրավունք ունի իր գործունեությանը, արտադրության կազմակերպմանը, տեխնոլոգիական գործընթացներին, տեխնիկային վերաբերող ցանկացած տեղեկատվություն (բացառությամբ օրենքով արգելվածների) համարել առևտրային գաղտնիք և պահպանել այն բացահայտումից:

Փաստացի, տեղեկատվությանը տիրապետողն ինքն է որոշում ինչպիսի տեղեկատվությունը համարել առևտրային գաղտնիք և ինքն էլ սահմանում է դրա պահպանության կանոնները: Սակայն, քննարկվող իրավազրոյությունը անսահմանափակ չէ: Ցանկացած պետություն իրավունք ունի պետական և հանրային շահերի պաշտպանության նպատակով պետական և ռազմական անվտանգության ապահովման համար, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցությունը կանխելու և սպառողների շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով սահմանել տեղեկատվության այն տեսակները, որոնք առևտրային կամ այլ գաղտնիք համարվել չեն կարող:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ տրամադրված պաշարների քանակը կամ հանքի տարեկան արտադրողականությունը ինքնին առևտրային գաղտնիք հանդիսանալ չեն կարող, քանի որ դրանք հանդիսանում են պետության ընկերությանը տրամադրվող որոշակի իրավունք: Ուստի, թե ՀՀ օրենսդրության, և թե տեսական գրականության մեկնաբանությունների լույսի ներքո վերոնշյալ տեղեկությունները առևտրային գաղտնիք դիտարկելը վիճահարույց է:

Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ կառավարությունը 22 մարտի 2012 թվականի N 437-Ն որոշմամբ հաստատել է օգտակար հանաճոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը:

Ինչ վերաբերում է պայմանագրով նախատեսված այլ տեղեկատվությանը, մասնավորապես (i) ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների

արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները, (ii) շրջակա միջավայրի դրամագլուխ և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարներ, (iii) հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ, (iv) համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ, (v) ընդերքօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքներ և այլն, ապա կարծում ենք, որ սրանք ևս չեն կարող դասվել առևտրային գաղտնիքի շարքին, քանի որ նախ դրանք անմիջականորեն չեն առնչվում ընկերությունների արտադրական պրոցեսներին, բացի այդ հանդիսանում են պետության հանդեպ ստանձնած պարտավորությունների երաշխիքներ կամ առնչվում են բնակչության անվտանգության և առողջության ապահովմանը, որոնք օրենքի ուժով չեն կարող լինել գաղտնիք:

Այնուամենայնիվ, օրենսդրության տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկվում է փոփոխություններ նախատեսել ԸՕ-ում և ՀՀ կառավարությունը 22 մարտի 2012 թվականի N 437-Ն որոշման մեջ՝ հստակ սահմանելով քննարկվող պայմանագրերի և թույլտվությունների հրապարակման պահանջ:

Ներկայումս գործող ընդերքօգտագործման թույլտվությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2016թ.ին շնորհված թույլտվություններից միայն չորսն են վերաբերում մետաղական հանքերին, իսկ 2017թ.ին մետաղական հանքերի վերաբերյալ ոչ մի թույլտվություն չի շնորհվել: ԱՃԹՆ-ի ստանդարտի 2.2 պահանջը սահմանում է, որպեսզի Ընդերքի գործակալությունը բացահայտի/հրապարակի թույլտվությունների շնորհմանը կամ փոխանցմանը վերաբերող տեղեկատվությունը: Ընդերքի օրենսգրքի 20 հոդվածը սահմանում է, որ ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվում է օրենսդրությամբ սահմանված ընդհանուր հիմունքներով կամ մրցույթային կարգով: Անհրաժեշտ է հրապարակել ընդերքօգտագործման իրավունքի շնորհման կամ փոխանցման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն: Ստանդարտի 2.2.գ պահանջը սահմանում է, որ եթե ԱՃԹՆ-ի զեկույցում ընդգրկված հաշվետու ժամանակահատվածում լիցենզիաները շնորհվել են մրցույթային ընթացակարգով¹⁰, կառավարությունը պարտավոր է բացահայտել հայտատուների ցանկը և հայտերին ներկայացվող պահանջները: Նմանապես, եթե ընդերքօգտագործողը հաշվետու ժամանակաշրջանում դիմել է լիազորված մարմնից համաձայնություն ստանալու նպատակով, որպեսզի փոխանցի իր ընդերքօգտագործման իրավունքը, այդ գործընթացը ևս պետք է բացահայտվի:

Ստանդարտի 2.2.բ պահանջը սահմանում է, որ այն դեպքում, երբ ԱՃԹՆ-ի զեկույցում ներառված ընկերություններն ունեն ԱՃԹՆ-ի զեկույցի հաշվետու ժամանակաշրջանից առաջ տրամադրված լիցենզիաներ, խրախուսվում է պետությունների կողմից այս լիցենզիաների վերաբերյալ 2.2.ա պահանջով ամրագրված տեղեկությունների

¹⁰ Այս կարգավորումը գործում է միայն միայն ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության պարագայում:

բացահայտումը, եթե դա իրագործելի է: ՀՀ կառավարության կողմից 2013թ. մարտի 28-ին N 368-Ն որոշմամբ հաստատվել է ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպության ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությանը ներկայացվող որակական չափանիշների գնահատման կարգը: Հարկ է նկատել, որ այս կարգն ուժի մեջ է մտել 2013 թվականի մայիսի 5-ին: Գործող ԸՕ-ն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ից և այդ օրվա դրությամբ բոլոր թույլտվությունները պահպանում են իրենց ուժը մինչև նոր օրենսգրքին համապատասխան թույլտվությունների ստացումը: ԸՕ-ի 80-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն ԸՕ-ի ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, այն է՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ը, ընդերքօգտագործողները պարտավոր են դիմել լիազոր մարմին՝ իրենց ընդերքօգտագործման իրավունքը (լիցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ) վերաձևակերպելու համար: Մեր հարցմանն ի պատասխան 16.11.2017թ. ՀՀ ԷԲԳՆ-ի փոխնախարարի կողմից ներկայացված գրությունում նշվում է, որ մինչև ընդերքի նոր օրենսգրքի ընդունումը օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացում չկային տեխնիկական և ֆինանսական միջոցների մասին տեղեկանքների ներկայացման պահանջներ:

Հետևաբար, հաշվի առնելով, որ ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպության ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությանը ներկայացվող որակական չափանիշների գնահատման կարգը ուժի մեջ է մտել միայն 2013թ. մայիսի 5-ին, ապա ֆինանսական և տեխնիկական պահանջները հաշվի չեն առնվել 2012թ. հունվարի 1-ի դրությամբ գործող թույլտվությունները վերաձևակերպելիս, ինչպես նաև 2012թ. հունվարի 1-ից մինչև 2013թ. մայիսի 5-ը նոր թույլտվություններ տրամադրելիս, քանի որ բացակայել է դրանք գնահատելու կարգը:

4.2. Փորձաքննությունների թափանցիկություն

Ընդերքօգտագործման ոլորտում իրականացվում են հետևյալ երեք պետական փորձաքննությունները՝

- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման,
- ընդերքաբանական,
- տեխնիկական անվտանգության գնահատման:

Փորձաքննություններից առաջինի ընթացքում իրականացվում են չորս հանրային լուսններ, իսկ մյուս երկուսը փակ են հանրության համար: Ստորև քննարկվում են փորձաքննություններից յուրաքանչյուրին ներկայացվող օրենսդրական պահանջները, ինչպես նաև այդ պահանջների ապահովման առկա ինստիտուցիոնալ կարողությունները:

Ընդերքաբանական փորձաքննություն

Ընդերքաբանական փորձաքննությունն իրականացվում է ՀՀ ԷԲԳՆ-ի ընդերքի գործակալության երկրաբանական փորձաքննության և օգտակար հանածոների պաշարների հաստատման բաժնի կողմից: Ընդերքաբանական փորձաքննության հիմնական նպատակն է ստուգաճշտել ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին տեղեկության արժանահավատությունը, օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաներն ու պաշարները, ինչպես նաև եզրակացություն տալ արդյունաբերական

նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրման վերաբերյալ: Օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաներն ու պաշարները ենթակա են հաստատման հատուկ որոշմամբ, որից հետո պաշարների պետական հաշվեկշռում կատարվում են համապատասխան փոփոխություններ:

Ընդերքաբանական փորձաքննությունն իրականացվում է 15 հոգուց բաղկացած հանձնաժողովի միջոցով, որի հինգ անդամները ԷԵԲՊՆ-ի աշխատակիցներ չեն: Խմբին կարող է միանալ նաև անկախ փորձագետ, իսկ մետաղական պաշարների փորձաքննության դեպքում կարող է պահանջվել, որպեսզի 2-3 փորձագետ միանան հանձնաժողովին: Հանձնաժողովի և անկախ փորձագետների մասնակցությունը փորձաքննության գործընթացին նպատակ ունի ապահովել անկախ փորձագիտական եզրակացության հնարավորությունը:

Հանձնաժողովի կարծիքը հաշվի է առնվում գործակալության կողմից վերջնական փորձագիտական եզրակացություն տրամադրելիս հետևյալի վերաբերյալ.

- պաշարների հաստատում,
- պաշարների վերագնահատում կամ վերահաստատում,
- պաշարների հաստատման մերժում,
- պաշարների դուրսգրում:

Պետական ընդերքաբանական փորձաքննության համառոտ տարբերակը հրապարակվում ՀՀ ԷԵԲՊՆ-ի կայքում (<http://minenergy.am/page/555>) և պարունակում է հետևյալ տեղեկությունները.

- փորձաքննված աշխատանքը, որտեղ նշվում է պաշարների գտնվելու վայրը,
- փորձագիտական եզրակացության հերթական համարն ու ամսաթիվը,
- հաստատված պաշարների կարգը և քանակը:

Վերոնշյալ տեղեկատվությունը թարմացվում է եռամսյակային կտրվածքով:

Ընդերքաբանական փորձաքննության մեթոդաբանության հետ կապված առկա են մի շարք իրավական և ինստիտուցիոնալ բացեր: ՀՀ կառավարության կողմից հաստատված է օգտակար հանածոների պաշարների դասակարգումը, որի համաձայն իրականացվում է ՀՀ օգտակար հանածոների պաշարների հաշվեկշռի վարումը: Իսկ հետախուզված և գնահատված պաշարները պետք է համապատասխանեն նշյալ դասակարգման պահանջներին: Միջազգային ֆինանսական կառույցների կողմից ներդրումների տրամադրման համար ընդերքօգտագործողները օգտակար հանածոների պաշարների գնահատումը իրականացնում են նրանց կողմից սահմանված պահանջներին համապատասխան: Հետևաբար, ընկերություններից կողմից պաշարների գնահատումը իրականացվում է ինչպես ՀՀ օրենսդրության, այնպես էլ միջազգային ֆինանսական կառույցների պահանջներին համապատասխան:

Ներկայումս Ընդերքի գործակալությունում քննարկվում են մի շարք մեթոդական ուղեցույցների և ենթաօրենսդրական ակտերի մշակման և փոփոխման առաջարկները, որոնք անհրաժեշտ կլինի ընդունել կանոնակարգված մեթոդաբանություն ունենալու համար:

Պետական ընդերքաբանական փորձաքննության գործառույթը և պարտականությունների շրջանակը կարելի է վերանայել՝ հետագա գործընթացում ներառելով ռազմավարական և երկարաժամկետ ծախս-օգուտների գնահատումը: Սա բարդ գործընթաց է և դրանում պետք է ներգրավվեն անկախ փորձագետներ որոշումների՝ կայացման անաչառությունը ապահովելու համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացակարգը, ընդերքօգտագործման դիմումատուին ներկայացվող պահանջները, ինչպես նաև պետական մարմինների պարտականությունները հստակ սահմանված և կանոնակարգված են Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքով և դրանից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտերով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության գործընթացում հանրության մասնակցությունն ապահովվում է չորս հանրային լսումների միջոցով՝ վերոնշյալ օրենքին, ինչպես նաև Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին 2014թ. նոյեմբերի 9-ին ընդունված ՀՀ կառավարության N 1325-Ա որոշմանը համապատասխան:

Հանրային լսումներից բացի շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության վերաբերյալ նյութերը, այդ թվում նաև վերջնական փորձաքննական եզրակացությունը տեղադրվում են ՀՀ ԲՆ-ի պաշտոնական կայքէջում: Այդուհանդերձ, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի լիարժեք կիրարկման համար դեռևս բացակայում են մի շարք ենթաօրենսդրական ակտեր, ուղեցույցներ, մասնավորապես մարդու առողջության վրա ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցության գնահատման մեթոդաբանություններ, ինչպես նաև մարդու առողջությանը հասցված վնասի գնահատման և փոխհատուցման հստակ ձևակերպված պահանջ և գնահատման մեթոդաբանություն:

Տեխնիկական անվտանգության փորձաքննություն

Տեխնիկական անվտանգության գնահատման և փորձաքննության կարգն ու պահանջները կանոնակարգվում են Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքով և դրանից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտերով: Փորձաքննությանը վերաբերող նյութերը, այդ թվում նախագիծը և վերջնական փորձաքննական եզրակացությունը հանրությանը ներկայացվում է միայն դրանց վերաբերյալ հակիրճ տեղեկատվությամբ: ՀՀ ԱԻՆ-ի (<http://www.mes.am/hy/licensing/>) և ՀՀ կառավարության (<https://www.e-gov.am/lists/>) կայքերում հրապարակվող արտադրական վտանգավոր օբյեկտների (ԱՎՕ) ռեեստրը պարունակում է հետևյալ տվյալները.

- ԱՎՕ-ի հակիրճ նկարագիրը (օր՝ ավազակոպճային խառնուրդի հանքավայր),
- կազմակերպության անվանումը,
- արտադրական վտանգավոր օբյեկտի գտնվելու վայրը,
- արտադրական վտանգավոր օբյեկտի համարը,
- արտադրական վտանգավոր օբյեկտի գրանցման ամսաթիվը,
- պետական ռեգիստրի համարը,

- «Ծանոթություն» բաժին, որտեղ ներառված է այնպիսի տեղեկատվություն, ինչպես օրինակ օբյեկտի կոնսերվացման կամ ապամոնիտաժման ամսաթիվը և այլն:

5. Իրական սեփականատեր/շահառու (ստանդարտի 2.5 պահանջ)

5.1. Ամփոփ ակնարկ

Համառոտ՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները իրական սեփականատերերի մասով հետևյալն են.

- ԲՇԽ-ն պետք է քննարկի իրական սեփականատերերի բացահայտումը,
- Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ճանապարհային քարտեզի հրապարակումը, որտեղ ներառվում է իրական սեփականատիրոջ սահմանումը,
- 2020 թվականի հունվարի դրությամբ ընկերությունները պետք է բացահայտեն իրական սեփականատերերին:

Այստեղ ներկայացված վերլուծության շրջանակներում բերված է Հայաստանի Հանրապետության օրենքների, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի և նախաձեռնությունների մասով իրավիճակային վերլուծություն (աղյուսակ 2): Ստորև ներկայացվում են հիմնական օրենսդրական և միջազգային նախաձեռնությունների մանրամասները:

ՀՀ կառավարությունը ԲՇԽ-ի խորհրդատվությամբ և ֆինանսավորում ստանալով Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից, քայլեր ձեռնարկեց միջազգային խորհրդատուի ներգրավման ուղղությամբ, որը մինչև 2018 թվականի հունվարի 1-ը մշակեց իրական սեփականատերերի (շահառուի) բացահայտման ճանապարհային քարտեզ: Այս գործընթացն առանձնեցված է եղել սույն Նախնական ուսումնասիրությունից և իր հետ կապակցված այլ հաշվետվություններից: ՀՀ «իրական սեփականատեր» ճանարահրային քարտեզն արդեն ընդունված է ԲՇԽ-ի կողմից և հրապարակված է ՀՀ Կառավարության կայքում:¹¹

Աղյուսակ 2. Իրական սեփականատիրոջը վերաբերող կարգավորումները ՀՀ օրենսդրության մեջ և Հայաստանին առնչվող միջազգային նախաձեռնություններում

ՀՀ օրենքներ, որտեղ օգտագործված է «իրական սեփականատեր/շահառու» եզրույթը	
Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենք (ՓԼԱՖ), 2008թ	<ul style="list-style-type: none"> • Սահմանում է «իրական շահառու» հասկացությունը՝ ըստ ՖԱԹՖ սկզբունքների:
«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենք (2001թ.)	Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին օրենքի 66 հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ իրավաբանական անձը ՓԼԱՖ Օրենքով սահմանված կարգով պարտավոր է Գործակալություն ներկայացնել իրավաբանական անձի իրական շահառուի մասին հայտարարություն: Սպառիչ ցանկը ներառում է իրավաբանական անձանց պետական գրանցումը, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխումը:
<ul style="list-style-type: none"> • Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենք 	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ վարում է արժեթղթերի սեփականատերերի և անվանատերերի տվյալների

¹¹ Ճանապարհային քարտեզը հրապարակվել է կառավարության կայքում, տե՛ս http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/BO%20roadmap_draft_ARM.pdf

<ul style="list-style-type: none"> • «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք • Կենտրոնական Բանկի Կանոնակարգ 5/10 	<p>ռեեստրը համաձայն նշված օրենքների և կանոնակարգի, ինչպես նաև պահպանում է վերջիններին պատկանող արժեթղթերի քանակի, տեսակի և դասի վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն թողարկողի հետ կնքած պայմանագրի¹²:</p>
Միջազգային նախաձեռնություններ և զարգացումներ	
<p>Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ (ՖԱԹՖ)</p>	<ul style="list-style-type: none"> • Միջկառավարական անկախ մարմին է, որը մշակում է համաշխարհային ֆինանսական համակարգը փողերի լվացումից, ահաբեկչության ֆինանսավորումից և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումից պաշտպանելու քաղաքականություններ և սատարում է դրանց իրագործմանը: • ԵՄ բոլոր անդամ պետությունները անդամակցում են ՖԱԹՖ-ին: • Հայաստանը MONEYVAL-ի անդամ է, որը ի սկզբանե հանդիսացել է ՖԱԹՖ-ի դիտորդ, իսկ 2006թ. հունիսից՝ ասոցացված անդամ: • MONEYVAL-ը Եվրոպայի խորհրդի մոնիթորինգի մշտական մարմին է, որին տրված է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասով գլխավոր միջազգային ստանդարտների պահանջների կատարումը և արդյունավետությունը գնահատելու գործառույթ, ինչպես նաև ներպետական իշխանություններին՝ իրենց համակարգերում անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնելու մասով հանձնարարականներ ներկայացնելու գործառույթ:
<p>ՏՀԶԿ Գլոբալ ֆորում</p>	<ul style="list-style-type: none"> • Գլոբալ ֆորումի անդամ բոլոր երկրներում տեղեկատվության ավտոմատ փոխանակման համակարգի ներդրում • ՖԱԹՖ ֆինանսական մեթոդաբանությամբ տրված՝ «իրական սեփականատեր» հասկացության կիրառում • Շեշտադրված է իրական սեփականատերերի մասին հուսալի տեղեկատվության հասանելիության հարցը • Հայաստանը՝ որպես լիիրավ անդամ անդամակցել է ֆորումին 2015 թվականին:
<p>ՏՀԶԿ «Հարկման բազայի քայքայումը և շահույթի տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիա</p>	<ul style="list-style-type: none"> • Այս ծրագրի գործողությունները թույլ են տալիս բացահայտել տնտեսական գործունեություն իրականացնող իրական սուբյեկտներին, բացահայտում են ագրեսիվ հարկային պլանավորման սխեմաները, ինչպես նաև բացառում են կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի շրջանակներում իրականացվող համաձայնագրերի առևտուրը (treaty shopping): • Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 15-րդ գործողությունը, որով միացել է «Հարկման բազայի քայքայումը և շահույթի տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիային:
<p>ԱՃԹՆ-ի ստանդարտ</p>	<p>Խորհուրդ է տրվում, որ իրականացնող պետությունները վարեն հանրությանը հասանելի՝ արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած իրավաբանական անձի (անձանց) իրական սեփականատերերի ռեզիստր՝ ներառյալ իրենց իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնությունը (ինքնությունները), սեփականության պատկանելության աստիճանը և մանրամասներ այն մասին, թե ինչպես է իրացվում սեփականության իրավունքը կամ իրականացվում հսկողությունը:</p> <p>Պահանջում է, որ</p> <ol style="list-style-type: none"> 1. ԱՃԹՆ-ի զեկույցում արձանագրվեն իրական սեփականության բացահայտման վերաբերյալ կառավարության քաղաքականությունը և ԲՇԽ-ի քննարկումները, ներառյալ համապատասխան իրավական դրույթների մանրամասները, բացահայտման առկա կարգերը և իրական սեփականության բացահայտման առնչվող

¹² https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/Regulation/regulation_on_minimum_aml_cft_requirements_arm.pdf

	<p>պլանավորված կամ իրականացման փուլում գտնվող բոլոր բարեփոխումները:</p> <p>2. Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը բազմաշահառու խումբը հրապարակի իրական սեփականության մասին տեղեկությունների բացահայտման ճանապարհային քարտեզ:</p>
--	--

5.2. «Իրական սեփականատեր» հասկացությունը, ՖԱԹՖ, MONEYVAL, Եվրոպական միությունը

ՀՀ օրենսդրության մեջ «իրական սեփականատեր» հասկացությունը ամենից համակողմանիորեն սահմանված է Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքում.

«Իրական շահառուն ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունը իրականացվում է և (կամ) որին պատկանում է իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդը կամ այն անձը, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունն իրականացվում է: Իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում նաև այն ֆիզիկական անձը, որը փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը: Իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել նաև այն ֆիզիկական անձը, որը՝

ա. քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայտերի, այսուհետ՝ բաժնետոմս) քսան և ավելի տոկոսին (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները կամ

բ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ կամ

գ. գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից (Հոդված 3, կետ 15):»

Այս սահմանման հիմքում ընկած է Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱԹՖ) տված սահմանումը: ՖԱԹՖ-ը միջկառավարական անկախ մարմին է, որը մշակում է համաշխարհային ֆինանսական համակարգը փողերի լվացումից, ահաբեկչության ֆինանսավորումից և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումից պաշտպանելու քաղաքականություններ և սատարում է դրանց իրագործմանը (<http://www.fatf-gafi.org/about/>): Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է մի շարք համաշխարհային կազմակերպությունների և կառույցների աշխատանքներին, որոնք զբաղվում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտների մշակմամբ, ինչպես նաև այդ ստանդարտների՝ ողջ աշխարհում ներդրմամբ ու կիրարկմամբ: Այս կառույցները համարվում են ՖԱԹՖ ոճի տարածաշրջանային մարմիններ, որոնց նպատակն է ապահովել ՖԱԹՖ հանձնարարականների ներդրումն ու կիրարկումը:

Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով Եվրոպայի Խորհրդի անդամ, ենթակա է MONEYVAL-ի (Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների հանձնաժողով) կողմից կանոնավոր մոնիթորինգի: MONEYVAL-ը Եվրոպայի Խորհրդի մոնիթորինգի մշտական մարմին է, որին վերապահված է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասով գլխավոր միջազգային ստանդարտների պահանջների կատարումը և արդյունավետությունը գնահատելու գործառույթ, ինչպես նաև ներպետական իշխանություններին՝ իրենց համակարգերում անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնելու մասով հանձնարարականներ ներկայացնելու գործառույթ: Այսպիսով, MONEYVAL-ի կանոնավոր մոնիթորինգային այցերն ու զեկույցները մի գործընթաց է, որի միջոցով Հայաստանն իր հարկային և ֆիսկալ քաղաքականությունը համապատասխանեցնում է փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի համաշխարհային ստանդարտներին:

Բացի այդ, ՖԱԹՖ-ի կողմից շրջանառվող «իրական սեփականատեր» եզրույթը պարտադիր է Եվրոպական Միության Խորհրդի հարկային քաղաքականության դաշտում արդյունավետ կառավարման ստանդարտների տարածման ԵՄ արտաքին քաղաքականության շրջանակներում, որը նախաձեռնվել է ԵՄ-ում և աշխարհում հարկային զեղծարարության, հարկերից խուսափման և փողերի լվացման դեմ կազմակերպված պայքարն ապահովելու համար: Այս համատեքստում 2016 թվականին ԵՄ խորհուրդը հաստատել է «Հարկման նպատակով չհամագործակցող պետությունների ԵՄ ցանկի որոշման չափանիշների և գործընթացի մասին եզրակացություններ» վերնագրված փաստաթուղթը, որը պարունակում է օբյեկտիվ ինդիկատորներ, որոնց պետք է հետևեն ԵՄ անդամ պետություն չհանդիսացող երկրների հարկային համակարգերը:

5.3. ՏՀԶԿ-ի «Հարկվող բազայի քայքայում և շահույթի տեղաշարժ» ծրագիր

Ինչ վերաբերում է ՏՀԶԿ-ի «Հարկվող բազայի քայքայում և շահույթի տեղաշարժ» ծրագրին, ապա վերջինիս գործողությունները (թվով 15 գործողություններ) հարկային քաղաքականության և վարչարարության մի շարք լծակների կիրառման արդյունավետության բարձրացման արդյունքում թույլ են տալիս բացահայտելու տնտեսական գործունեություն իրականացնող շահառու կողմերին, բացահայտում են ագրեսիվ հարկային պլանավորման սխեմաները, ինչպես նաև բացառում են կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի շրջանակներում իրականացվող համաձայնագրերի առևտուրը (treaty shopping):

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 15-րդ գործողությունը, որով միացել է «Հարկման բազայի քայքայումը և շահույթի տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիային: Առաջիկայում նախատեսվում է միջոցառումներ ձեռնարկել իրականացնելու ՏՀԶԿ «Հարկվող բազայի քայքայում և շահույթի տեղաշարժ» ծրագրի՝ տրանսֆերային գնագոյացմանն ուղղված գործողությունների կիրառման համար: Ի դեպ,

նշված միջոցառումները ներառված են ՀՀ կառավարության 2017-2022թթ. գործողությունների պլանում:

5.4. Իրավաբանական անձանց պետական ռեգիստր, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա

ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ գրանցելիս ներկայացվում է կանոնադրությունը, որն արդեն իսկ պարունակում է տեղեկատվություն բաժնեմասերի սեփականատերերի մասին: Ավելին, պետք է ներկայացնել հայտարարություն իրական շահառուի վերաբերյալ, որը ևս հրապարակային փաստաթուղթ է: Կանոնադրությունները հրապարակային են և ներկայացվում են ցանկացածին 3,000 ՀՀ դրամ պետական տուրք մուծելու պարագայում: Մնացած բոլոր փաստաթղթերը մինչև 10 էջը ներառյալ՝ տրվում են անվճար, 11-50 էջերի դեպքում գանձվում է 3,000 դրամ, 51-100՝ 5000 ՀՀ դրամ պետական տուրք, իսկ 101-ից սկսած յուրաքանչյուր էջի դեպքում վճարվում է լրացուցիչ 5 դրամ:

Բաժնետիրական ընկերությունների դեպքում դրանց գրանցումը իրականացվում է գործակալությունում, սակայն բաժնետոմսեր թողարկող ընկերության ռեեստրը վարում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ-ն: Գործակալությունում ընկերությունը գրանցելիս կրկին ներկայացվում է հայտարարություն, թե ով է հանդիսանում իրական շահառուն: Բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունում պարտադիր չէ բաժնետերերի բացահայտումը, բացառությամբ, եթե ընկերությունը ունի մեկ բաժնետեր: Գործակալությունում պահպանվող ողջ տեղեկատվությունը հանրամատչելի է:

Վերը նշված պետական տուրքը վճարելու պայմանով յուրաքանչյուր ոք կարող է ստանալ ընկերության վերաբերյալ փաստաթուղթ: Մինչդեռ բաժնետիրական ընկերությունների ռեեստրը վարող բանկերը և ներդրումային ընկերությունները որևէ տեղեկատվություն չեն հրապարակում:

Գործակալության դեպքում ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանվում են այն դեպքերը, երբ ընկերության լիազորված անձը պետք է ներկայացնի իրական շահառուի մասին հայտարարություն, մինչդեռ ՀԿԴ-ի դեպքում հաշվետու կազմակերպությունը պետք է մշտապես թարմացնի տեղեկատվությունը: Այսպես, ՓԼԱՖ Օրենքի 17 հոդվածի 2 կետի համաձայն՝ *Կենտրոնական դեպոզիտարիան պետք է իր սահմանած հաճախականությամբ թարմացնի հաճախորդի պարզած (այդ թվում՝ հավելյալ կամ պարզեցված) ուսումնասիրության շրջանակում հավաքագրված տեղեկությունները՝ դրա արդիականության ու վերաբերելիության հարցում հավաստիանալու նպատակով: Հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների թարմացման համար սահմանված հաճախականությունը պետք է լինի ոչ պակաս, քան փարին մեկ անգամ:*

5.5. Սեփականատիրոջ բացահայտումը հանքարդյունաբերության ոլորտում

Իրական սեփականատերերի բացահայտումը խրախուսող դրույթները, մասնավորապես՝ հանքարդյունաբերության ոլորտում, այս պահին ունեն ընդգրկման սահմանափակ շրջանակ: ԸՕ-ի պահանջ է, որպեսզի ընդերքօգտագործման թույլտվություն հայցող դիմումատուն ներկայացնի ընկերության առնվազն 10% բաժնեմաս ունեցող բոլոր սուբյեկտներին: Դրանք կարող են լինել ֆիզիկական անձինք, որի դեպքում ներկայացվում են այդ անձանց անուններն ու քաղաքացիությունը, կամ իրավաբանական անձինք, որի դեպքում ներկայացվում է գրանցման հավաստագրի պատճենը: Հարկ է նկատել, որ եթե բաժնետերը կամ բաժնեմասի սեփականատերը իրավաբանական անձ է, ապա չի պահանջվում ներկայացնել վերջինիս մասնակիցների կամ բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվություն տվյալ իրավաբանական անձի իրական շահառուին բացահայտելու նպատակով: Ավելին, ընդերքօգտագործման իրավունքը ամրագրող որևէ փաստաթուղթ չի պարտավորեցնում ընդերքօգտագործողին լիազոր մարմնին տեղեկացնել ընկերության՝ որոշակի սահմանաչափը գերազանցող բաժնեմասի կամ բաժնետոմսերի օտարման մասին: Եթե սահմանափակ պատասխանատվության ընկերությունների պարագայում բաժնեմասերի սեփականատերերի փոփոխությունը դիտվում է հրապարակային տեղեկատվություն և հասանելի է համապատասխան վճարը մուծելու դեպքում, ապա բաժնետիրական ընկերությունների դեպքում բաժնետոմսերի օտարման փաստը ՀԿԴ-ի և վերջինիս անունից հանդես եկող ընկերությունները չեն հրապարակում:

5.6. Այլ փոխկապակցված հասկացություններ

Ի լրումն իրական սեփականատերեր եզրույթին ՀՀ օրենսդրությունը սահմանում և գործածում է այնպիսի հասկացություններ, որոնք կարող են փոխկապակցված համարվել այս հարցի համակողմանի վերլուծության առումով: Այդ հասկացություններից են «փոխկապակցված անձանց գործարքներ», «քաղաքական ազդեցություն ունեցող անձինք», «գրանցված սեփականատեր կամ անվանատեր», «նշանակալի մասնակցություն» և այլն: Աղյուսակ 3-ում ամփոփված են այս հասկացությունները:

Աղյուսակ 3. ՀՀ օրենսդրության մեջ օգտագործվող՝ իրական սեփականատերերին վերաբերող հասկացություններ

Ոլորտին առնչվող ՀՀ օրենսդրություն	
Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենք, Հոդված 3	<ul style="list-style-type: none"> Բացատրում է «նշանակալի մասնակցություն» հասկացությունը և տարբերակում է ա) ուղղակի և բ) անուղղակի մասնակցությունը, Տալիս է «փոխկապակցված անձանց» սահմանումը:
Փողերի վաճման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենք, Հոդված 3	<ul style="list-style-type: none"> Տալիս է «փոխկապակցված միանգամյա գործարք» հասկացության սահմանումը, Բացատրում է «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» (ՔԱՌԿ) հասկացությունը և թվարկում է ՔԱՌԿ համարվող սուբյեկտներին:
ՀՀ ընդերքի մասին օրենսգրք, Հոդվածներ 38 և 49	<ul style="list-style-type: none"> Ընդերքի մասին օրենսգրքի պահանջ է, որ ընդերքօգտագործման թույլտվություն հայցող դիմումատուն ներկայացնի ընկերության առնվազն 10% բաժնեմաս ունեցող բոլոր սուբյեկտների տվյալները
Գնումների մասին ՀՀ օրենք, Հոդված 5	Օրենքը տալիս է « փոխկապակցված անձ » հասկացության սահմանումը և ամրագրում, որ երկու կամ ավելի փոխկապակցված անձինք չեն կարող միաժամանակ մասնակցել միևնույն պետական մրցույթին: Այս օրենքից բխող՝ ՀՀ կառավարության որոշմամբ ավելի լիաժեռ է սահմանվում «փոխկապակցված անձ» հասկացությունը:

6. Եկամուտներ և վճարումներ (ստանդարտի 4 պահանջ)

Ընկերությունների վճարումների և պետության եկամուտների հրապարակումը կարող է նպաստել արդյունահանող ճյուղերի կառավարման մասին իրազեկ հանրային քննարկումների: ԱՃԹՆ-ի ստանդարտը պահանջում է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից կատարվող վճարումների և արդյունահանող ոլորտից ստացված պետական եկամուտների վերաբերյալ տեղեկատվության համադրումը: Պետական եկամուտների հավաքագրման մասով ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները ներառում են հարկերի և եկամուտների համակողմանի բացահայտումը, պետության՝ արտադրության մասնաբաժնի կամ բնաիրային տեսքով հավաքագրված այլ եկամուտների վաճառքը, ենթակառուցվածքների համար մատակարարումները և ապրանքափոխանակության կարգավորումները, փոխադրումներից ստացվող եկամուտները, պետական ձեռնարկությունների (ՊՁ) գործարքները, տեղական կառավարման մարմիններ կատարվող վճարումները, տվյալների ապաագրեգացման աստիճանը, ինչպես նաև արդիականությունը և որակը:

6.1. Պետական բյուջեի եկամուտներ

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են **պետական բյուջեի հետևյալ եկամուտները.**

- a) ավելացված արժեքի հարկ,
- b) ակցիզային հարկ,
- c) շահութահարկ,
- d) եկամտային հարկ,
- e) գույքահարկը համայնքի վարչական տարածքից դուրս գտնվող գույքի համար.
- f) հողի հարկը համայնքի վարչական տարածքից դուրս գտնվող հողի համար,
- g) հաստատագրված վճարները,
- h) մաքսատուրքերը,
- i) բնապահպանական և բնօգտագործման վճարներ (ներառյալ՝ ռոյալթիներ),
- j) ճանապարհային վճարը,
- k) հանրային ծառայության կարգավորման պարտադիր վճարը,
- l) ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը,
- m) արտոնագրային վճարները,
- n) շրջանառության հարկը,
- o) նպատակային սոցիալական վճարները,
- p) դրոշմանիշային վճարները,
- q) հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքներն ու տույժերը՝ բացառությամբ օրենքով համայնքների բյուջեներ մուտքագրվող հարկերի գծով չվճարման համար գանձվող տուգանքների և տույժերի,
- r) օրենքով պետական բյուջեին ամրագրված այլ հարկային եկամուտներ:

Համայնքային բյուջեի եկամուտները ներառում են՝

1. Հարկային եկամուտներ.
 - a) տեղական հարկեր՝

- հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար,
 - գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող գույքի համար,
 - հյուրանոցային հարկ,
 - օրենքով նախատեսված այլ հարկեր,
- b) օրենքով պետական բյուջեին ամրագրվող հարկատեսակներից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումները (յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող չափերով),
- c) տեղական հարկերի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժերը և տուգանքները:

2. Տուրքեր, որոնք ներառում են՝

- a) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար գանձվող պետական տուրքը,
- b) նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար գանձվող պետական տուրքը,
- c) տեղական տուրքերը:

3. Պաշտոնական դրամաշնորհներ

4. Այլ բյուջետային եկամուտներ են.

- a) համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները,
- b) համայնքային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտները,
- c) վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները,
- d) համայնքի սեփականություն համարվող կազմակերպությունների տրամադրության տակ մնացած շահույթից համայնքի ավագանու որոշումներով կատարվող մասհանումները,
- e) տեղական վճարները,
- f) համայնքային հիմնարկների կողմից առանց տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարները,
- g) պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման համար տրվող միջոցները,
- h) օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրվող այլ եկամուտները:

Հաշվի առնելով ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1-բ-րդ և 4.6-րդ պահանջներով թվարկված եկամտային հոսքերը, ՀՀ օրենսդրության առանձնահատկությունները, ինչպես նաև ԲՇԽ-ի և այլ մարմինների հետ խոհրդակցությունները, որոշվեց ներառել հետևյալ եկամտային հոսքերը

Ընդերքօգտագործողների կողմից պետական կառավարման մարմիններին կատարվող վճարումներ.

- շահութահարկ,
- եկամտային հարկ
- ավելացված արժեքի հարկ
- ռոյալթիներ (որոնք հանդիսանում են բնօգտագործման վճարի տեսակ),
- այլ բնօգտագործման վճարներ,
- բնապահպանական վճարներ (2018 հունվարի 1ից ուժի մեջ մտած նոր Հարկային օրենսգրքով՝ բնապահպանական հարկ),
- վճարումներ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին (ռեկուլտիվացման համար),
- մշտադիտարկումների իրականացման վճարներ,
- պետական տուրքի վճարներ:

Ընդերքօգտագործողների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին կատարվող վճարումներ.

- հողի հարկ,
- գույքահարկ,
- հողի վարձակալության վճար:

ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1-ին պահանջը սահմանում է, որ մինչև հաշվետվությունների ներկայացման գործընթացի մեկնարկը բազմաշահառու խումբը պարտավոր է համաձայնության գալ այն հարցերի շուրջ, թե որ վճարումները և եկամուտներն են համարվում էական և, հետևաբար, պետք է բացահայտվեն, այդ թվում՝ համաձայնեցվեն, թե որոնք են էականության պատշաճ սահմանումները և շեմերը: ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1-ին պահանջը պարզաբանում է, որ վճարումները և եկամուտները համարվում են էական, եթե դրանց մասին տեղեկատվության բացթողումը կամ սխալ տեղեկատվության հաղորդումը կարող է զգալիորեն ազդել ԱՃԹՆ-ի զեկույցի համակողմանիության վրա:

Որոշ երկրներում, առհասարակ շեմեր չեն սահմանվել:¹³ Հայաստանում, ԲՇԽ-ն նույնպես որոշել է, որ ԱՃԹՆ-ի զեկույցի համար հաշվետվություններ ներկայացնեն մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները: ՀԱՀ ՊՀԿ-ը առաջարկում է տարբերակել հաշվետվություն ներկայացնող ընդերքօգտագործողների երկու խումբ սույն ուսումնասիրության 11.1 բաժնում ներկայացված չափանիշներին համապատասխան: Առաջին խմբում ներգրավված են այն ընկերությունները, որոնք ունեն համեմատաբար փոքր շրջանառություն և ոլորտի վճարված հարկերի հանրագումարի տեսանկյունից ներկայացնում են նվազ

¹³ Օրինակ, Միանմարում համաձայն 2015 թ. հետազոտության խորհուրդ տրվեց ներառել բոլոր եկամտային հոսքերը: Նմանապես, Նիգերիայում 2011թ. հոկտեմբերի հետազոտության մեջ չկար որևէ առաջարկ էականության վերաբերյալ, ինչը ենթադրեց, որ բոլոր եկամտային հոսքերը պետք է ներառել:

հետաքրքրություն: Երկրորդ խմբում կներգրավվեն ընդերքօգտագործողներ, որոնք ունեն համեմատաբար մեծ շրջանառություն և ոլորտի վճարված հարկերի հանրագումարի տեսանկյունից ներկայացնում են մեծ հետաքրքրություն: Երկրորդ խմբում կներգրավված ընդերքօգտագործողների կողմից ներկայացված էական հարկատեսակներով ցուցանիշները պետք է համադրվեն Անկախ ադմինիստրատորի կողմից: ՀԱՀ ՊՀԿ-ի մեկնաբանությամբ, ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.9 կետի պահանջին համապատասխան, երկրորդ խմբում գտնվող ընկերությունները պետք է ներկայացնեն էական հարկատեսակների վճարումների աուդիտի ենթակա հաշվետվություններ՝ 2016, 2017 թթ-ի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է առանձին հարկատեսակների էականությանը, ՀԱՀ ՊՀԿ-ն առաջարկում է սահմանել հարկատեսակի էականության շեմ: Այն է՝ էական են այն հարկատեսակ (ները), որոնք կազմում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող բոլոր ընդերքօգտագործողների կողմից վճարված հարկատեսակների հանրագումարի առնվազն մեկ տոկոսը (1%):

Ինչ վերաբերում է ԱՃԹՆ ստանդարտի 4.1.d պահանջին՝ ներկայացնել ոլորտի յուրաքանչյուր հարկատեսակի գծով վճարված/գանձված գումարի ագրեգատ չափը, հարկ է նշել, որ ՊՀԿ-ին ուղղված մեր հարցադրումները 2018թ-ի մարտի սկզբի դրությամբ մնացին անպատասխան, իսկ ՀՀ օրենսդրությամբ այդ պահի դրությամբ այս տեղեկատվությունը ենթակա չէր հրապարակման: Այս տեղեկատվության հրապարակային լինելու հարցը կգտնի իր լուծումը, երբ կընդունվեն ԱՃԹՆ ստանդարտի կիրառման շրջանակում մշակված օրենսդրական առաջարկները, որոնք գտնվում էին ընդունման փուլում 2018թ-ի մարտ ամսին: Անկախ ադմինիստրատորը հնարավորություն կունենա տալ այս հարցերի պատասխանները, երբ այս օրենսդրական փոփոխությունները օրենքի ուժ ստանան:

Սոցիալական վճարումները (Պահանջ 6.1.բ՝ «հայեցողական սոցիալական ծախսեր և փոխանցումներ») քննարկվում են մանրամասնորեն սույն ուսումնասիրության 7.11 բաժնում:

ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.2 (Պետության արտադրության մասնաբաժնի վաճառք կամ բնաիրային տեսքով հավաքագրված այլ եկամուտներ) և 4.3 (Ենթակառուցվածքների համար մատակարարումները և ապրանքափոխանակության կարգավորումները) պահանջներով նախատեսված պոտենցիալ եկամտային հոսքերը Հայաստանի պարագայում կիրառելի չեն:

6.2. Հանքարդյունաբերության ոլորտի պետական արտաբյուջետային միջոցներ (եկամուտներ)

ՀՀ ԸՕ-ի 61 հոդվածի համաձայն՝ ընդերքն օգտագործելիս կատարվում է նաև շրջակա միջավայրի պահպանության (ռեկուլտիվացիոն) դրամագլխի համալրման՝ ընդերքօգտագործման ընթացքում խախտված հողերի վերականգնման համար վճարներ այն դեպքում, եթե ընդերքօգտագործողը չի կատարում իր ռեկուլտիվացիոն պահանջները: Նշված դրամագլխի գումարները պահվում են ՀՀ ԲՆ-ի արտաբյուջետային հաշվում՝

յուրաքանչյուր ընդերքօգտագործողի համար առանձնացված հաշիվներով: Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատուցումների չափերը, հաշվարկման կարգը սահմանվում են ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի թիվ 1079-Ն որոշմամբ: Ռեկուլտիվացիոն դրամագլուխը քննադատվում է այն բանի համար, որ թերաֆինանսավորման պատճառով նա չի կարողանա փակել ռեկուլտիվացիոն ծախսերը՝ ընդերքօգտագործողի կողմից պարտականությունների չկատարման դեպքում: Հաշկավոր է, որ ՀՀ կառավարությունը նախաձեռնի միջոցներ՝ այս խնդրի լուծման համար:

Որպես 5-րդ հավելված՝ ներկայացված է մետաղական հանքարդյունաբերական ընկերությունների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը: Ընկերությունների ցանկը և փաստացի վճարված գումարի չափը ներկայացվել է 2017 թ. նոյեմբերի 8-ին ՀՀ ԲՆ-ի փոխնախարարի կողմից՝ ի պատասխան ՀԱՀ ՊՀԿ-ի հարցման: Նույն պատասխանում փոխնախարարը հայտնում է, որ ՀՀ ԲՆ-ի շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված գումարներից ընդերքօգտագործողներին գումարներ չեն վերադարձվել:

6.3. Տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային եկամուտներ

Համայնքային բյուջեների մասին պաշտոնական տեղեկատվություն առկա է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջում¹⁴: Հետևյալ եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է յուրաքանչյուր աշնանը՝ նախորդ տարվա համար.

- 1) գույքային հարկեր անշարժ գույքից,
- 2) գույքային հարկեր այլ գույքից,
- 3) ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ,
- 4) ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ,
- 5) այլ հարկային եկամուտներ:

Ըստ մարզերի և ըստ համայնքների համայնքային բյուջեների եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ ՏԿՁՆ-ի պաշտոնական կայքէջում: Մասնավորապես, մարզային և համայնքային բյուջեներին առնչվող տեղեկությունները ներկայացված են ՀՀ ՏԿՁՆ-ի պաշտոնական կայքէջի «Բյուջետային գործընթաց-ՀՀ համայնքների բյուջետային եկամուտներ» բաժնում:¹⁵ ՀՀ համայնքային բյուջետային եկամուտների վերաբերյալ վերջին տեղեկատվությունը 01.07.2017թ. դրությամբ է և ներկայացված է ըստ համայնքների հավաքագրված հետևյալ եկամուտների՝

- 1) գույքահարկ,
- 2) հողի հարկ,
- 3) տեղական տուրքեր,

¹⁴ Տե՛ր u <http://armstat.am/file/doc/99499473.pdf>:

¹⁵ Տե՛ր u <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/>

- 4) համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր,
- 5) համայնքի կողմից հավաքագրված այլ եկամուտներ:

ԱՎԾ-ի և ՏԿՁՆ-ի կողմից տեղեկատվությունը ներկայացվում է ամբողջական, այն չի մանրամասնում, թե որքան է վճարում յուրաքանչյուր հարկատուն: Համայնքները տիրապետում են, թե որքան են ստանում յուրաքանչյուր հարկատուից, իսկ ՊԵԿ-ը տիրապետում է յուրաքանչյուր հարկատուի կողմից համայնքներին վճարվելիք գումարների վերաբերյալ տեղեկատվությանը, սակայն չի տիրապետում, թե որ համայնքներն են ստանում այդ գումարները:

6.4. Տեղական ինքնակառավարման մարմինների արտաբյուջետային միջոցներ

Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են ունենալ **արտաբյուջետային միջոցներ** Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 1.2 հոդվածի 16-րդ կետի համաձայն: Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 15.9 հոդվածով ամրագրված է, որ պետական հիմնարկները կարող են գանձապետարանում կամ որևէ բանկում արտաբյուջետային միջոցների հաշիվներ բացել միայն ՀՀ կառավարության որոշմամբ: Այս օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև համայնքին ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից նվիրաբերության կամ վարկի տեսքով տրամադրվող դրամական միջոցներն այդ անձանց պահանջով, պետական լիազորված մարմնի համաձայնությամբ և համայնքի ավագանու որոշմամբ կարող են տեղադրվել գանձապետարանի արտաբյուջետային միջոցների հաշիվներում կամ որևէ բանկում:

Տեղական կառավարման մարմիններն արտաբյուջետային միջոցներ կարող են ունենալ բազմաթիվ նպատակներով: Նրանք կարող են բացել «էսքրոու» հաշիվներ, որտեղ կդեպոզիտացվեն բռնագանձված միջոցները կամ բացել հաշիվներ համայնքային ծառայողների աշխատանքը խրախուսելու համար: Այդ ֆոնդերում կարող են ֆինանսական միջոցներ մուտքագրվել տարբեր աղբյուրներից, այդ թվում մասնավոր ընկերություններից: Թեև կարող են առկա լինել պետական ֆինանսավորման հիմնավորումներ արտաբյուջետային միջոցներ ունենալու համար (օրինակ՝ էներգախնայողության համար շրջանառու վարկային միջոցների ստեղծում և այլն), սակայն հնարավոր են չարաշահման ռիսկեր և առաջանում է ռիսկերի կանխարգելմանն ուղղված գործողությունների իրականացման անհրաժեշտություն: Ուսումնասիրելով ՀՀ ՏԿՁՆ-ի պաշտոնական կայքէջը, մասնավորապես «Համայնքային բյուջեներ» բաժինները (ՀՀ համայնքների բյուջետային եկամուտներ և ծախսեր)¹⁶, ինչպես նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջը¹⁷ որևէ տեղեկություն արտաբյուջետային միջոցների մասին չհայտնաբերվեց:

ԲԾԽ-ին խորհուրդ է տրվում լրացուցիչ քննարկել առկա արտաբյուջետային ֆոնդերի վերաբերյալ տեղեկությունների բացահայտման (հրապարակման) պահանջի կարևորությունը, դրանց ստեղծման կոնկրետ նպատակը, ֆոնդի աղբյուրները, ինչպես

¹⁶ Տե՛ս <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/>

¹⁷ Տե՛ս <http://www.armstat.am/am/>

նաև ֆոնդից կատարվող ծախսերը հետևելու մեխանիզմները: Սա հատկապես կարևոր է ԱՃԹՆ-ի ստանդարտի 5.1-ին պահանջի կատարումն ապահովելու առումով, որը պահանջում է հաշվետվությամբ ներկայացնել արդյունահանող ճյուղերի կողմից պետական բյուջե մուտքագրվող եկամուտների բաշխվածությունը, իսկ այն դեպքերում, երբ եկամուտները չեն մուտքագրվում պետական բյուջե, այդ եկամուտների տեղաբաշխումները պետք է պարզաբանվեն՝ կիրառելիության դեպքում ներառելով հղումներ համապատասխան ֆինանսական հաշվետվություններին, նշելով, օրինակ՝ ազգային բարեկեցության և զարգացման հիմնադրամները, տեղական կառավարման մարմինները, պետական ձեռնարկությունները և այլ արտաբյուջետային կառույցները: ՏԿԶՆ-ը տրամադրել է 2016-2017թթ ընթացքում արտաբյուջետային հաշիվներ ունեցող համայնքների (բնակավայրերի) ցանկ (տես Հավելված 12): Այդ ցանկը պարունակում է 44 համայնքների (բնակավայրերի) անունները, ներառյալ Կապան, Քաջարան քաղաքները: Թեպետ որևէ տվյալ չկա՝ հաշիվներում գտնվող գումարների, այդ գումարների աղբյուրների մասին:

6.5. Աուդիտ և հաշվապահական հաշվառման ստանդարտներ (ստանդարտի 4.9-րդ պահանջ)

Ընկերությունների կողմից տրամադրվող տվյալների որակը

Հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտների հիմքում ընկած են IFRS և IASB ստանդարտները: Դրանք ներկայումս տարածվում են բոլոր ընկերությունների վրա անկախ մեծությունից, թեև 2018թ.ց ՓՄՁ-ներն իրավունք են ունենալու կիրառել IFRS-ը, որն ավելի ոլորակիր է:

Հաշվապահական հաշվառման մասին օրենքի 24 հոդվածի համաձայն «խոշոր» կազմակերպություն են համարվում այն կազմակերպությունները, որոնց գործունեությունից հասույթը հաշվետու տարվա համար և հաշվետու տարվա վերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է մեկ միլիարդ ՀՀ դրամը: Այս ընկերությունները, սակայն, պարտավոր են հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները: Այս հաշվետվությունները չհրապարակելու դեպքում, տուգանքի չափը կազմում է ընդամենը 50 000 ՀՀ դրամ (մոտավորապես 105 ԱՄՆ դոլար), որը կարող է հասնել 500 000 ՀՀ դրամի (մոտավորապես 1050.0 ԱՄՆ դոլար) այն դեպքերում, երբ տուգանքը գանձվել է, սակայն կազմակերպությունը կրկին չի հրապարակել իր հաշվետվությունները 30 օրվա ընթացքում: Ներկայումս ֆինանսական հաշվետվությունները պարտադիր անկախ աուդիտի ենթարկելու պահանջը վերաբերում է միայն բաց բաժնետիրական ընկերություններին: Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 94 և 96 հոդվածներին համապատասխան բաց բաժնետիրական ընկերությունները տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությամբ: Նշված փաստաթղթերը հրապարակելուց առաջ պետք է ստուգվեն, և դրանց հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության և Ընկերության բաժնետերերի հետ ընդհանուր գույքային շահեր չունեցող, աուդիտի հրականացնող անձի կողմից:

Աղյուսակ 4-ը ամփոփում է Ազդարար (www.azdarar.am) և ընկերությունների կայքերում ֆինանսական աուդիտի ենթարկված հաշվետվությունների առկայությունը կամ բացակայությունը, դրանց հրապարակված լինելը կամ չլինելը:

Աղյուսակ 4. Ընկերությունների ցանկ՝ վերջիններիս ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ենթարկված լինելու փաստի վերաբերյալ կայքերում առկա տեղեկատվություն

Ընկերություն	Տեղեկատվության աղբյուրը (2017թ. հոկտեմբերի 30 դրությամբ)	Աուդիտ անցած հրապարակված հաշվետվություններ	Հղումներ
Մեդրաձոր Գոլդ ՍՊԸ	www.azdarar.am	Չի գտնվել	-
Ախթալայի ԼՀԿ ՓԲԸ	www.azdarar.am	Չի գտնվել	-
Կապանի լեռնահարստացման կոմբինատ ՓԲԸ	www.polymetal.ru , www.azdarar.am	Չի գտնվել	-
ԳեոՊրոՄայնինգ Գոլդ ՍՊԸ	http://www.geopromining.com/en/our-business/operations/gpm-gold/ , www.azdarar.am	Չի գտնվել	-
Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ	www.zcmc.am , www.azdarar.am	Չի գտնվել	-
Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ	http://www.geopromining.com/en/our-business/operations/agarak/ , www.azdarar.am	Չի գտնվել	-
Թեղուտ ՓԲԸ	http://teghout.vallexgroup.am/	Գտնվել է (2015)	http://teghout.vallexgroup.am/hy/Information-Center-Fiancial-Reports
Լիդիան Արմենիա ՓԲԸ	http://www.geoteam.am/home.html	Գտնվել է (2016)	http://www.geoteam.am/economy/financial-reports.html

Հնարավոր է, որ այս ընկերությունները ենթարկվել են աուդիտի, բայց արդյունքները չեն հրապարակվել: Ի տարբերություն բաց բաժնետիրական ընկերությունների, փակ բաժնետիրական ընկերությունները և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները օրենքով պարտավոր չեն հայտարարել աուդիտի եզրակացության արդյունքները:

ՀԱՀ ՊՀԿ-ի մեկնաբանությամբ, ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.9 կետի պահանջին համապատասխան, այն ընկերությունները, որոնց վճարումները ենթակա են համդրման (տես այս հաշվետվության 11.1 բաժին) պետք է ներկայացնեն էական հարկատեսակների վճարումների աուդիտի հաշվետվություններ՝ 2016, 2017 թթ-ի վերաբերյալ: ՀԱՀ ՊՀԿ-ի կարծիքով, այս պահանջի կիրառումն ապահովելու համար հարկավոր է սահմանել օրենսդրական պահանջ:

Կառավարության կողմից տրամադրվող տվյալների որակը

Հաշվեքննիչ պալատը (հաշվետու ժամանակահատվածում հայտնի է որպես Վերահսկիչ պալատ) հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորվող պետական և տեղական ինքնակառավարման

մարմիններում և հիմնարկներում: Ինչ վերաբերում է այս զեկույցում ներկայացված ժամանակահատվածին (2016 և 2017թթ.)՝ պետական եկամուտների անկախ աուդիտ չի կատարվել: 2018թ-ի մարտի սկզբի դրությամբ պետական եկամուտների անկախ աուդիտի օրենսդրական պահանջ չկա: Համայնքային բյուջեների եկամուտների աուդիտի օրենսդրական պահանջ նույնպես բացակայում է:

Հարկային ծառայության մասին ՀՀ օրենքի համաձայն հարկային մարմնի գործառույթներից է ՀՀ պետական և համայնքային բյուջեի եկամուտների հաշվառումը: Բոլոր տվյալներն առկա են «**Հարկապու 3**» տեղեկատվական շտեմարանում, որը վարում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն: «**Հարկապու 3**» տեղեկատվական շտեմարանը տվյալների վերլուծությամբ օժտված ճկուն ծրագիր է՝ համալրված հարկ վճարողների և եկամուտների մասին ընդգրկուն տեղեկատվությամբ: Մասնավորապես, շտեմարանում արտացոլված են տվյալ հարկատուի բոլոր գործարքները, տեսանելի են փոխհարաբերությունները այլ տնտեսվարող սուբյեկտների հետ: Այսպիսով, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա է հարկ վճարողի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որն արտացոլված է վերջինիս կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվարկ-հաշվետվություններում կամ առաջադրվել է ստուգման արդյունքում: Հարկային մարմնի տեղեկատվական համակարգի կառավարումն իրականացվում է ISO/IEC-27001:2013 ստանդարտով, որի պահանջների կատարումը ստուգվում է միջազգային ճանաչում ունեցող BUREAUVERITAS ընկերության կողմից:

Հաշվապահական ստանդարտ. կանխիկ կամ հաշվեգրում

ԱՃԹՆ քարտուղարության ուղեցույցի հ.24-ը (տվյալների որակի ապահովում) նշում է, որ անդամ պետությունները սովորաբար կիրառում են կանխիկ հաշվառման սկզբունքը: ՀԱՀ-ի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը հանձնարարել է հաշվապահական հաշվառման և աուդիտորական «Բի-Դի-Օ Արմենիա» կազմակերպությանը վերլուծել և ներկայացնել իր տեսակետը՝ որ մեթոդը՝ կանխիկ թե՛ հաշվարկային հաշվառման, թե՛ երկուսն էլ պետք է օգտագործվեն եկամուտների և վճարումների մասին հաշվետվություններում:

a) Տվյալների ներկայացումը հաշվեգրման սկզբունքով պահանջելու և հրապարակելու տարբերակի դրական կողմերն են.

- i) Հաշվեգրման սկզբունքով ստացված տվյալները հեշտությամբ կարող են համաձայնեցվել հրապարակված (և) աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հետ:
- ii) Կազմակերպությունների հաշվեգրված հարկային պարտավորությունները վերագրելի կլինեն հաշվետու ժամանակաշրջաններին, օրինակ՝ 2016թ.-ին վերաբերող շահութահարկը հստակորեն առանձնացված կլինի 2017թ.-ի շահութահարկից:
- iii) Պետական մարմիններից ստացված տվյալները կազմակերպությունների կողմից ներկայացվածների հետ համաձայնեցնելու անհրաժեշտություն չի լինի, քանի որ դրանք երկուսն էլ ստացված կլինեն նույն աղբյուրից՝ կազմակերպությունների կողմից տրամադրած հարկային հաշվետվություններից:

Բացասական կողմերն են.

- i) Կազմակերպությունների կողմից ներկայացվելուց հետո հաշվեգրման սկզբունքով պատրաստված տվյալները կարող են փոփոխվել (ճշգրտված հաշվարկների ներկայացում) կազմակերպությունների կողմից կամ հարկային ստուգումների արդյունքում: Հնարավոր է, որ նման փոփոխությունները լինեն էական:
- ii) Հաշվեգրման սկզբունքով պարտավորությունները կարող են զգալիորեն տարբերվել փաստացի կանխիկ վճարումներից երկու պատճառով. ա) դրանք կարող են ներկայացվել մի ժամանակահատվածում և վճարվել այլ ժամանակահատվածում, և բ) դրանք կարող են ներկայացվել և ընդհանրապես չվճարվել, փոխարենը՝ նվազեցվել պետական բյուջեից այլ դեբիտորական պարտքերի (օրինակ՝ փոխհատուցման ենթակա ԱԱՀ) դիմաց:
- iii) Հրապարակված հաշվետվությունների օգտագործողների մեծ մասը չի կարող տարբերակել հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքը դրամարկղային սկզբունքից, և հաշվեգրման սկզբունքով ներկայացված գումարները հասարակության մեծ մասի կողմից, հավանաբար, ընկալվում են որպես կանխիկ վճարումներ:

b) Տվյալների ներկայացումը դրամարկղային հիմունքով պահանջելու և հրապարակելու տարբերակի դրական կողմերն են.

- i) Պետական եկամուտների բյուջետավորման և հաշվետվողական համակարգն աշխատում է դրամարկղային սկզբունքով, հետևաբար, EITI-ի հաշվետվության նպատակների համար դրամարկղային սկզբունքով ստացված և ներկայացված եկամուտները կհամապատասխանեն պետական եկամուտների հաշվառման տվյալների և տրամաբանության հետ:
- ii) կանխիկ վճարումները փաստեր են. նրանք չեն կարող հետագայում փոփոխվել կազմակերպությունների կամ ստուգող մարմինների կողմից նոր հանգամանքների բացահայտման պատճառով:
- iii) Երբ կազմակերպության կողմից ստացված դրամական միջոցները որոշակի պատճառներով օգտագործվում կամ կառավարվում են պետական մարմինների կողմից, հանրությունը մի կողմի հաշվեգրումները մյուս կողմի վճարումների հետ համեմատելու փոխարեն տեսնում է դրամական միջոցների ներհոսք և արտահոսք որոշակի նպատակների համար:

Բացասական կողմերն են.

- i) Կանխիկ վճարումները որոշ դեպքերում կարող են գերազանցել փաստացի պարտավորությունները կանխավճարներ վճարելու պատճառով: Նման վճարումները, փաստորեն, ընկերությունների հաշվեկշռում գոյացնում են ակտիվներ, որոնք ենթակա են օգտագործման հետագա ժամանակահատվածներում, սակայն EITI հաշվետվություններում կարող են դիտարկվել որպես պետական եկամուտների գումարի մի մաս:
- ii) Կանխիկ վճարումները կարող են սկզբից որպես կանխավճարներ իրականացվել հարկերի մի դասի համար և հետագայում տեղափոխվել՝ այլ պարտավորությունների մարման համար՝ դրանով իսկ անհամապատասխանություն ստեղծելով սկզբնապես գրանցված (և հրապարակված) և ի վերջո վճարված հարկերի բացվածքի միջև:

iii) Կազմակերպությունները կարող են օգտագործել փոխհատուցվող ԱԱՀ-ն՝ որոշ հարկային պարտավորություններ մարելու համար առանց դրամական միջոցների փաստացի փոխանցման: Նման դեպքերում կանխիկ վճարումների բացակայությունը կարող է դիտարկվել որպես հարկային պարտավորությունների չկատարում կամ հարկերի գծով վճարումների նվազեցում մի ժամանակահատվածից դեպի մյուսը: Այս թերությունը կարելի է շտկել ներկայացված ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները որպես ԱԱՀ-ից դրամական միջոցների ներհոսք այլ հարկային պարտավորությունների վճարմանը ուղղելու և դրամական միջոցների արտահոսքը EITI հաշվետվություններում այլ հարկերի վճարման համար օգտագործելու միջոցով:

Ներկայացման առաջարկվող սկզբունք՝

Երկու ներկայացման մեթոդներն ունեն առավելություններ և թերություններ, սակայն, մեր կարծիքով, դրամարկղային սկզբունքով հաշվետվությունների ներկայացման առավելությունները գերազանցում են թերությունները: Հաշվի առնելով, որ ԱԱՀ-ի գծով վճարումները և մուտքերը նույնպես պետք է ներկայացվեն՝ հաշվետվության ներկայացման դրամարկղային սկզբունքը պոտենցիալ օգտագործողի տեսանկյունից թույլ կտա ավելի օբյեկտիվ ու ամբողջական պատկեր կազմել ներկայացված տվյալների մասին: Բացի այդ, EITI ստանդարտի 4-ից 6-րդ պահանջները հիմնականում վերաբերում են ընկերությունների կողմից «վճարումների» տերմինին, և մենք կարծում ենք, որ տվյալ ստանդարտը կազմելիս ենթադրվում էր, որ հաշվետվությունների կազմման և ներկայացման համար կիրառվելու է դրամարկղային սկզբունքը:

Այն դեպքերում, երբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը չի ստացվել ընկերության կողմից կանխիկ ձևով, այլ փոխարենը վերահասցեավորվել է այլ հարկերի վճարմանը, մենք առաջարկում ենք, որ դրամական միջոցների ներհոսքը ԱԱՀ փոխհատուցվող գումարներում հաշվետվությունում ներկայացվի փոխհատուցված գումարների միջոցով մարված այլ հարկային պարտավորությունների գծով կանխիկ վճարումների հետ միասին:

ԲՇԽ-ի Որոշում

ԲՇԽ-ն որոշել է ընկերություններից տեղեկություններ հավաքել ինչպես կանխիկ, այնպես էլ հաշվարկային հաշվեգրման եղանակով: Պատճառը այն է, որ մեկ տարվա տեսանկյունից դրամական միջոցների կանխիկ հաշվառումը կարող է սխալմունք առաջացնել պարտավորությունների և վճարների առումով: Կանխիկ հաշվառման հիմքով հաշվետվությունները կօգտագործվեն 3-5 տարվա կտրվածքով վճարումները և եկամուտները ստուգելու համար:

6.6. Պետության արդյունահանման մասնաբաժնի վաճառքը կամ բնաիրային տեսքով հավաքագրված այլ եկամուտներ (ստանդարտի 4.2-րդ պահանջ)

Չենք հանդիպել որևէ տեղեկատվություն առ այն, որ պետությանը պատկանում է արդյունահանման որևէ մասնաբաժին կամ պետությանը տրամադրվում է բնաիրային տեսքով հավաքագրված եկամուտներ: Հարկ է նկատել, որ մեր կողմից չի ուսումնասիրվել ընդերքօգտագործման թույլտվության մաս կազմող փաստաթղթերը, մասնավորապես ընդերքօգտագործողների հետ կնքված պայմանագրերը, թույլտվությունների տրամադրման պայմանները և այլն: Այս պահի դրությամբ այդ տեղեկատվությունը ենթակա չէ հրապարակման: Սակայն այս փաստաթղթերի հրապարակային դարձնելու հարցը կգտնի իր լուծումը, երբ կընդունվեն ԱՃԹՆ ստանդարտի կիրառման շրջանակում ներկայացված օրենսդրական առաջարկները: Այդ դեպքում Անկախ ադմինիստրատորը կունենա հնարավորություն ծանոթանալու համապատասխան փաստաթղթերին և կտա իր վերլուծությունը:

6.7. Ենթակառուցվածքների համար մատակարարումները և ապրանքափոխանակության կարգավորումները (ստանդարտի 4.3-րդ պահանջ)

Չենք հանդիպել որևէ տեղեկատվություն ԱՃԹՆ-ով սահմանված ապրանքների և ծառայությունների մատակարարում ներառող համաձայնագրերի առկայության վերաբերյալ (ստանդարտի 4.3 պահանջ): Հարկ է նկատել, որ մեր կողմից չի ուսումնասիրվել ընդերքօգտագործման թույլտվության մաս կազմող փաստաթղթերը, մասնավորապես ընդերքօգտագործողների հետ կնքված պայմանագրերը, թույլտվությունների տրամադրման պայմանները և այլն: Այս պահի դրությամբ այդ տեղեկատվությունը ենթակա չէ հրապարակման: Սակայն այս փաստաթղթերի հրապարակային դարձնելու հարցը կգտնի իր լուծումը, երբ կընդունվեն ԱՃԹՆ ստանդարտի կիրառման շրջանակում ներկայացված օրենսդրական առաջարկները: Այդ դեպքում Անկախ ադմինիստրատորը կունենա հնարավորություն ծանոթանալու համապատասխան փաստաթղթերին և կտա իր վերլուծությունը:

6.8. Տրանսպորտային փոխադրման վճարումներ (ստանդարտի 4.4 պահանջ)

ԲՇԽ-ն իր N7 նիստում որոշեց, որ տրանսպորտային փոխադրման վճարումները էական չեն Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցի համար:¹⁸ Առաջին տարվա զեկույցի տիրույթում է լինելու մետաղական հանքօգտագործման ոլորտը: Հետևաբար, ՀԱՀ-ի ՊՀԿ-ն չի հետաքննել տրանսպորտային փոխադրման վճարումների հնարավորությունը հաշվետու ժամանակաշրջանում:¹⁹

¹⁸ Տես՝ ԲՇԽ-ի նիստի N7 արձանագրություն, օրակարգի 10-րդ կետ. http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_meeting_minute_17_10_%202017.pdf

¹⁹ Էլեկտրոնային լրատվական Համահայկական ցանցում (Pan-Armenian Network) հրապարակված հոդվածի համաձայն ՊԵԿ-ը 2016թ. սեպտեմբերին ներկայացրել է, որ 2016թ. առաջին կիսամյակում Հայաստանից Վրաստան է ներկրվել 24.7 միլիոն խորանարդ մետր գազ: Ներկրված գազի ընդհանուր ծավալը կազմել է 6.2 միլիոն ԱՄՆ դոլար: Հոդվածում նշվում է

6.9. Պետական ձեռնարկություններ

ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.5-րդ պահանջը ենթադրում է պետական ձեռնարկություններին վերաբերող գործարքների բացահայտում: Պետական ձեռնարկություն ասելով, հասկանում ենք ընդերքօգտագործող ընկերություն, որի կանոնադրական կապիտալում որևէ բաժնեչափ (բաժնեմաս կամ բաժնետոմս) կպատկանի Հայաստանի Հանրապետությանը կամ վերջինիս մասնակցությամբ որևէ ընկերության: Այս կապակցությամբ հարցում ենք ուղղել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն: Նմանապես, փորձել ենք պարզել գրանցված է արդյոք Հայաստանի Հանրապետության կամ վերջինիս մասնակցությամբ որևէ ընկերության օգտին ընդերքօգտագործող ընկերության բաժնեմասի կամ բաժնետոմսի նկատմամբ գրավի իրավունք: Մեր հարցմանն ի պատասխան 2017 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալից ստացվել է պատասխան առ այն, որ մետաղական հանքարդյունահանող պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպություններ չկան: Հետևաբար, կարող ենք ենթադրել, որ Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում պետական որևէ ձեռնարկություն գործունեություն չի իրականացնում, հետևաբար ներկայացնելու որևէ գործարք չկա:

6.10. Պոտենցիալ հաշվետու ընկերությունների ցանկ

Աղյուսակ 5-ում ամփոփված է տեղեկատվությունը 2017 թվականին հանքարդյունաբերության շղթայի առաջին օղակում գործունեություն իրականացրած ընկերությունների վերաբերյալ:

Աղյուսակ 5. Հայաստանում մետաղական օգտակար հանածոների ակտիվ արդյունահանմամբ զբաղվող ընկերություններ, 2017թ.

Ընկերության անվանումը	Լիցենզիայի տրամադրման ամսաթիվ	Լիցենզիայի ժամկետի ավարտը	Հանք	Հանածո	Ընթացիկ վիճակը (Չարգացման-Ձ /Արդյունահանման փուլ-Ա)		
					2015	2016	2017
Մեդրաձոր Գոլդ ՍՊԸ	20.08.2012	10.09.2023	Մեդրաձոր	Ոսկի, արծաթ տելուր	Ա	Ա	Ա
Ախթալայի ԼՀԿ ՓԲԸ	20.10.2012	07.09.2022	Շամլուղ	Պղինձ, ոսկի, արծաթ, ցինկ, սելեն, տելուր	Ա	Ա	Ա

Նաև, որ Իրանը և Վրաստանը 2016թ. ձմռանը համաձայնության են եկել Հայաստանով արտահանել 500 միլիոն խորանարդ մետր գազ: (Տես՝ <http://www.panarmenian.net/eng/news/220067/62> մյն արժողությամբ գազ է փոխադրվել Վրաստան՝ Հայաստանից:) Հարկ է նկատել, որ ի պատասխան մեր հարցման, ՊԵԿը մատնանշեց, որ որևէ եկամտային հոսք այս գործունեությունից չի գրանցված իր համակարգում:

Կապանի լեռնահարստացման կոմբինատ ՓԲԸ	27.11.2012	01.04.2050	Շահումյան ոսկի-բազմամետ	Ոսկի, պղինձ, արծաթ ցինկ	Ա	Ա	Ա
ԳեոՊրոՄայնինգ Գոլդ ՍՊԸ	20.10.2012	10.09.2028	Սոթք	Ոսկի, արծաթ, սելեն տելուր	Ա	Ա	Ա
Զանգեզուրի ՊՄԿ ՓԲԸ	27.11.2012	30.05.2041	Քաջարան	Մոլիբդեն, պղինձ, ոսկի, արծաթ, ռենիում, տելուր ծծումբ, բիսմութ	Ա	Ա	Ա
Ագարակի ՊՄԿ ՓԲԸ	05.04.2013	08.02.2027	Ագարակ	Մոլիբդեն, ոսկի, արծաթ, պղինձ, բիսմութ սելեն	Ա	Ա	Ա
Թեղուտ ՓԲԸ	20.02.2013	08.02.2026	Թեղուտ	մոլիբդեն, պղինձ	Ա	Ա	Ա
Լիդիան Արմենիա ՓԲԸ	26.09.2012	01.01.2034	Ամուլսար	Ոսկի արծաթ	Զ	Զ	Զ

5 և 6 աղյուսակներում զետեղված տեղեկատվության աղբյուրը ՀՀ ԷԵԲՊՆ-ի կողմից 25.10.2017թ. ստացված պատասխանն է: Պատասխանին կից ցուցակը ներկայացվում է որպես սույն ուսումնասիրությանը կից հավելված 6: Աղյուսակում, որտեղ ընկերության ընթացիկ վիճակը նշված է զարգացման փուլ, հիմնվել ենք համապատասխան ընկերության կայքի և www.harkatu.am զետեղված տվյալների վրա, որպեսզի պարզենք արդյոք ընկերությունը հարկ վճարում է, թե ոչ, ինչպես նաև <http://taxservice.am/Content.aspx?itn=TILists> կայքում առկա տվյալների վրա, որտեղ զետեղված են տարեկան ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների ցանկը, որոնք ներկայացրել են «գրոյական հաշվետվություն» կամ հաշվետվություն առ այն, որ ժամանակավորապես դադարեցրել են իրենց գործունեությունը:

Աղյուսակ 6. Մետաղական հանածոների ընդերքօգտագործման թույլտվություններ ունեցող ընկերությունների ցանկ ՀՎՀՀ և ընթացիկ գործունեության նշումով

Ընկերություն	ՀՎՀՀ	ՊԵԿ-ին ներկայացվել է «գրոյական» կամ դադարեցման հաշվետվություն (Այո/Ոչ)		Հանքավայր	Ընթացիկ վիճակ (զարգացման փուլ, արդյունահանում/այլն)	Նշումներ
		2015	2016			
Մեղրաձոր Գոլդ ՍՊԸ	02709666	Ոչ	Ոչ	Մեղրաձոր	Արդյունահանում	
Ախթալայի ԼՀԿ ՓԲԸ	06602309	Ոչ	Ոչ	Շամլուղ	Արդյունահանում	
Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	09416902	Ոչ	Ոչ	Շահումյան ոսկի, բազմամետաղ	Արդյունահանում	
ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	01530525	Ոչ	Ոչ	Սոթք	Արդյունահանում	
Զանգեզուրի ՊՄԿ ՓԲԸ	09400818	Ոչ	Ոչ	Քաջարան	Արդյունահանում	

Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ	09700039	Ոչ	Ոչ	Ագարակ	Արդյունահանում	
Թեղուտ ՓԲԸ	02700773	Ոչ	Ոչ	Թեղուտ	Արդյունահանում	
Լիդիան Արմենիա ՓԲԸ	00091919	Ոչ	Ոչ	Ամուլսար	Ջարգացման փուլ	
Սագամար ՓԲԸ	00410036	Ոչ	Այո	Արմանիս		
Լիճքվազ ՓԲԸ	00410036	Այո	Ոչ	Լիճքվազ		
Թաթսթոուն ՍՊԸ	00079433	Այո	Ոչ	Լիճք		
Թաթսթոուն ՍՊԸ	00079433	Այո	Ոչ	Այգեձոր Թղկուտի տեղամաս		
Պարամաունտ Գոլդ Մայնինգ ՍՊԸ	04219371	Ոչ	Ոչ	Մեղրաձոր		
Մոլիբդենի աշխարհի ՍՊԸ	02580107	Ոչ	Ոչ	Դաստակերտ		
Մուլտի գրուպ կոնցեռն ՍՊԸ	03516447	Ոչ	Ոչ	Մղարթ		
Մեգո-գոլդ ՍՊԸ	04213127	Ոչ	Ոչ	Թուլսմանուկ		Harkatu.am ցույց չի տալիս որևէ հարկի վճարում 2013թ.-ից ի վեր
Լեռ-Էքս ՍՊԸ	09412188	Ոչ	Ոչ	Հանքասար		
Ֆորչն Ռիզորսիս ՍՊԸ	02806526	Ոչ	Ոչ	Հրազդան (երկաթ)		
Վարդանի Ջարթոնք ՍՊԸ	09414399	Ոչ	Ոչ	Սոֆի-Բինա		
Սիփանի ՍՊԸ	04001189	Ոչ	Ոչ	Տերտերասար		Harkatu.am ցույց չի տալիս որևէ հարկի վճարում 2009 թվ-ից ի վեր
Ասաթ ՍՊԸ	03807664	Ոչ	Ոչ	Քարաբերդ		
Ակտիվ Լեռնագործ ՍՊԸ	01544838	Այո	Ոչ	Այգեձոր Կենտրոնական տեղամաս		
Մարջան Մայնինգ Քոմփանի ՍՊԸ	01569837	Այո	Այո	Մարջանի		
Վայք գոլդ ՍՊԸ	00114369	Այո	Ոչ	Ազատեկ		
ԱՏ-ՄԵՏԱԼՍ ՍՊԸ	00118721	Ոչ	Ոչ	Մեղրասար		
ԲԱԿՏԵԿ ԷԿՈ ՍՊԸ	00870494	Ոչ	Այո	Արջուտ		
ԲԱԿՏԵԿ ԷԿՈ ՍՊԸ	00870494	Ոչ	Այո	Լեռնաջուր		
Հրաշք Մետալ ՍՊԸ	04226807	Ոչ	Այո	Բարձրադիր		
Գեղի գոլդ ՍՊԸ	09423012	Ոչ	Ոչ	Ոսկեձոր		
Ղարագույլաններ ՓԲԸ	02583292	Ոչ	Ոչ	Վերին Վարդանիձոր		

«Արդյունահանող» ընթացիկ վիճակը նշվել է՝ հիմնվելով ՀՀ ԷԵԲՊՆ-ի կողմից ներկայացված տվյալների վրա: Լիդիան Արմենիա ՓԲԸ-ի հետ կապված «Ջարգացման» ընթացիկ վիճակը նշվել է հիմնվելով 2016 թ. ֆինանսական հաշվետվությունների վրա, որտեղ Լիդիան Արմենիա ՓԲԸ արդյունահանումը նախատեսում է սկսել 2018 թվականին:

ԲՇԽ-ն նշում է, որ եթե հաշվետվողականության պահանջները կիրառվեն միայն «ակտիվ» ընկերությունների նկատմամբ, ապա հարց է առաջանում՝ թե որ ընկերությունները պետք է ընդգրկվեն այդ խմբում: Եթե, մյուս կողմից, հաշվետվողականության պահանջները տարածվեն մետաղական օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ստացած բոլոր ընկերությունների վրա, ապա մեծանում է հավանականությունը, որ որոշ ընկերություններ լիարժեք չեն ներկայացնի տեղեկությունները:

Հարկ է նկատել, որ ընկերությունները պետությանը հաշվետվություններ են ներկայացնում և հարկեր են վճարում իրենց ընդհանուր եկամուտների մասով (հետևյալ սկզբունքով՝ մեկ իրավաբանական անձ, մեկ հաշիվ), թեև այն դեպքում, երբ ընկերությունը մեկից ավելի ծրագիր է իրականացնում (օրինակ՝ շահագործում է երկու հանքավայր կամ մեկ հանքավայր և մեկ ձուլարան), ենթադրաբար այն տարանջատում/ապաստարեզացում է յուրաքանչյուր ծրագրի ֆինանսները իրենց ֆինանսական վիճակը գնահատելու նպատակով: Յուրաքանչյուր ծրագրով եկամուտները տարանջատելու խնդիրը վերլուծված է նաև պետությանը հաշվետու սուբյեկտներին վերաբերող բաժնում: ԲՇԽ-ի անդամների և ֆինանսական աուդիտ իրականացնող ընկերությունների հետ քննարկումներից պարզ դարձավ, որ հնարավոր է ապաստարեզացնել ընկերությունների ֆինանսական հաշվետվություններն ըստ ծրագրերի կամ գործառնությունների: Հետևաբար, առաջարկում ենք, որպեսզի ընկերությունները ներկայացնեն տարանջատված հաշվետվություններ յուրաքանչյուր ծրագրի համար, ինչը համահունչ է ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.7-րդ պահանջին:

6.11. Հաշվետու պետական կառույցներ

Ներկայացված եկամտային հոսքի և հաշվետվողականության այլ պահանջների հիման վրա՝ աղյուսակ 7-ում ամփոփ ներկայացված են հաշվետու պետական կառույցները:

Աղյուսակ 7. ԱՃԹՆ-ի գործընթացին առնչվող պետական հաշվետու մարմինները 2016 և 2017թթ. համար

ԱՃԹՆ-ի պարտադիր հաշվետվություններ ներկայացնողներ	
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	Հաշվառված են բոլոր հարկերը, ներառյալ ոռոյաթիները (նաև՝ արտահանման դեպքում պարտադիր վճարները): Հարկ է նշել, որ ՊԵԿ-ը տիրապետում է տեղեկատվությանը՝ ըստ հարկատուի, և ոչ թե՛ ըստ առանձին հանքավայրի: Տես եկամուտների ապաստարեզացման մասին քննարկում. այս հաշվետվության 6.13 բաժնում:
ՀՀ բնապահպանության նախարարություն, Շրջակա միջավայրի պահպանության դրամազույգ	Հատկացումներ Շրջակա միջավայրի պահպանության դրամազույգին, մշտադիտարկման վճարներ
Համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններ	<ul style="list-style-type: none"> • Հողի հարկ • Գույքահարկ • Հողի վարձակալության վճար • Հնարավոր արտաբյուջետային մուտքեր
ԱՃԹՆ-ի կամընտրական հաշվետվություններ	

<p>ՀՀ Ընդերքօգտագործման և բնական պաշարների նախարարություն</p>	<p>Ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթային փաթեթի (ընդերքօգտագործման թույլտվություն/ համաձայնություն, պայմանագիր, լեռնահատկացման ակտ, հաստատված աշխատանքային ծրագիր կամ արդյունահանման նախագիծ) հրապարակում (հնարավոր կլինի հրապարակել համապատասխան օրենսդրական պահանջ ներկայացնելու դեպքում)</p>
<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>2017 թվականի արտադրության վերաբերյալ տվյալները առկա է ՀՀ ԲՊ-ի բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնում: 2016թ. վերաբերյալ տեղեկատվությունը ևս այս մարմնի տրամադրության տակ է, քանի որ այն հանդիսանում է ՀՀ ԷԵԲՊՆ-ի ընդերքի տեսչության իրավահաջորդը²⁰</p>
<p>ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն</p>	<p>2016 և 2017 թթ.ն գրանցված հանքարդյունաբերող ընկերությունների իրական սեփականատերերի մասով տվյալներ</p>

ՊԵԿ-ն ունի եռամսյակային և տարեկան կտրվածքով, ըստ եկամուտների տեսակի տարանջատված և յուրաքանչյուր ընկերության մասով առանձին տվյալներ տրամադրելու տեխնիկական կարողություն: Ներկայումս եռամսյակային կտրվածքով ՊԵԿ-ը հրապարակում է խոշոր 1000 հարկատուների կողմից կատարվող վճարումներին վերաբերող տվյալներ: Դրանք հասանելի են www.taxservice.am կայքէջում, ինչպես նաև առավել դյուրօգտագործելի ձևաչափով՝ www.harkatu.am կայքէջում: Այդուամենայնիվ, մի շարք առումներով հրապարակված տեղեկատվությունը չի ապահովում ԱՃԹՆ-ի բացահայտման պահանջները և պահանջվում են օրենսդրական փոփոխություններ, որոնք 2018 թվ-ի մարտի սկզբի դրությամբ մուտք են եղել ՀՀ ազային ժողով:

- Եկամտային հոսքերը լիարժեք տարանջատված, ապագրեգացված չեն: Ուղղակի և անուղղակի հարկերը առանձնացված չեն և անհնար է, օրինակ, հավաստիանալ, թե որքան շահութահարկ, ռոյալթի կամ բնօգտագործման վճար է վճարել ընկերությունը (ՀՀ հարկային նոր օրենսգիրքը կապահովի ապագրեգացման ավելի մեծ աստիճան, բայց ոչ բավարար): Սա կխոչընդոտի ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան իրականացնել առաջին տարվա հաշվետվողականությունը: Հետևաբար, անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ կատարել ՀՀ Ընդերքի և Հարկային օրենսգրքերում ապահովելու ապագրեգացված հարկային տվյալների մատչելիությունը 2016թ.-ից ի վեր:
- Հրապարակումը ընդգրկում է միայն առաջին խոշոր 1000 հարկատուներին: Ցուցակը ներառում է մի շարք հանքարդյունաբերական ընկերություններ, սակայն միանշանակ ներառված չեն վնասով աշխատող ընկերությունները, մինչդեռ

²⁰ Հարկ է նկատել, որ ԲՇԿ-ի նիստի N6 արձանագրության օրակարգի 2-րդ կետում նշվում է, որ «բարձրագույն նաև հարկային և մաքսային մարմիններում վաճառքի գնի վերաբերյալ տեղեկատվության առկայության հարցը, քանի որ ԱՃԹՆ-ի ստանդարտը պահանջում է բացահայտել արտադրության և արտահանման ծավալներն ու արժեքները: Միջազգային փորձագետը նշեց, որ ստանդարտը պահանջում է բացահայտել ամեն հանքատեսակի գծով արտադրության և արտահանման ագրեգացված ցուցանիշները և ինչքան է փաստացի վճարվել դրանց համար: Խոսքը վերաբերում է հաշվետու տարվա ընթացքում կատարված փաստացի գործարքներին, այլ ոչ թե պայմանագրերին: Նշվեց, որ ԲՇԿ-ն կարող է որոշում կայացնել ներկայացնելու ապագրեգացված մեծությունները՝ ըստ ընկերությունների: Քննարկման արդյունքում **որոշվեց՝** օգտագործել միայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ներկայացրած տվյալները և զեկուցում ներկայացնել հաշվարկների մեթոդաբանությունը»: **Stu**՝ ԲՇԿ-ի նիստի N6 արձանագրություն, օրակարգի 2-րդ կետ http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_meeting_minute_10_10_%202017.pdf

վերջիններս հնարավոր է ունենան էական համարվող հարկային պարտավորություններ²¹:

- Ընկերությունները պարտավոր են հաշվետվություններ ներկայացնել և հարկեր վճարել իրենց ամբողջական գործառնության մասով: Այն դեպքերում, երբ ընկերությունն իրականացնում է ավելի քան մեկ գործառնություն/ծրագիր (օրինակ՝ շահագործում է երկու հանք կամ շահագործում է մեկ հանք և իրականացնում է մեկ այլ տնտեսական գործունեություն), այն ՊԵԿ չի ներկայացնում ապաագրեգացված տվյալներ ըստ առանձին գործառնության/ծրագրի: Որպեսզի հանքարդյունաբերող ընկերությունները ներկայացնեն ապաագրեգացված տվյալներ իրենց կողմից իրականացվող տարբեր գործառնությունների մասով, անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ Հարկային օրենսգրքում նման պահանջ սահմանելու համար: Ներկայումս, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտում տարածված է մայր ընկերությունների կողմից յուրաքանչյուր գործառնության մասով առանձին իրավաբանական անձ հիմնելու պրակտիկան: Այս կանոնից բացառություն է ԳեոՊրո Մայնինգ Գոլդ ՍՊԸ-ն, որն ուղղակիորեն շահագործում է Սոթքի հանքավայրն ու Արարատի ոսկու կորզման գործարանը: Այդուհանդերձ, միանգամայն հնարավոր է, որ որևէ ընկերություն ունենա տարբեր հանքավայրերի մասով երկու կամ ավելի թույլտվություն, և եթե երկու հանքավայրերն էլ ակտիվ շահագործի, ապա կծագի ապաագրեգացման/տարանջատման խնդիրը:

6.12. Սոցիալական և տնտեսական ծախսեր (ստանդարտի 6.1 պահանջ)

Հայաստանում սոցիալական և տնտեսական ծախսերի մասով տեղեկատվության առկայության հարցն ունի երկու կողմ: Նախ, պայմանագրով կամ օրենքով սահմանված է սոցիալական և տնտեսական ծախսեր կատարելու պահանջ (տես աղյուսյակ 8), և երկրորդը՝ առկա է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից կամ նրանց անունից լրացուցիչ կամավոր սոցիալական ծախսերի կատարման պրակտիկա: Հավելված 7-ում ներկայացված է հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների ինքնահայտարարագրած սոցիալական և տնտեսական ծրագրերը, որոնք կարող են պարունակել ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր ստանձնած պարտավորություններ:

ՀՀ ԸՕ-ի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից սահմանված պայմանագրի օրինակելի ձևում (տե՛ս աղյուսակ 9-ը) նախատեսվում է, որ արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող պետք է ամրագրի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մասով իր պարտականությունները: Պայմանագրի օրինակելի

²¹ 02.11.2017թ. դրությամբ, www.harkatu.am կայքի ընդերքօգտագործում բաժնում ներառված են հետևյալ ընդերքօգտագործման թույլտվություն ունեցող ընկերությունները. Զանգեզուրի ՊՄԿ ՓԲԸ, ԳեոՊրո Մայնինգ Գոլդ ՍՊԸ, Թեղուտ ՓԲԸ, Կապանի ԼՀԿ ՓԲԸ, Լիդիան Արմենիա ՓԲԸ, Ագարակի ՊՄԿ ՓԲԸ, Մեղրածոր Գոլդ ՍՊԸ, Թաթևաբուն ՍՊԸ, Ախթալայի ԼՀԿ ՓԲԸ, Սագամար ՓԲԸ, ինչպես նաև ոչ մետաղական ընդերքօգտագործող ՄԼ Մաընինգ: Պետք է նկատել, որ 1000 հարկատուների ցանկում առաջատարները փոփոխվում են կապված ընտրված ժամանակահատվածից: Կայքը պարունակում է տեղեկատվություն 2009 թվականից իվեր, ուստի նշված ընկերություններից որոշները, որոնք ակտիվ են եղել նախկին տարիներին, այլևս ակտիվ կամ շահութաբեր չեն, հետևաբար չեն հայտնվում 1000 հարկատուների առաջատար դիրքերում 2017թ. երկու եռամսյակների կտրվածքով:

ձևի 3-րդ հավելվածում ներկայացված են այն գործողությունները, որոնք ընկերությունը պետք է իրականացնի՝ նշելով վերջնաժամկետներն ու ներդրվող գումարի չափը: Այնուամենայնիվ, քանի որ պայմանագիրը հրապարակային փաստաթուղթ չէ, ո՛չ ազդակիր համայնքը, ո՛չ էլ քաղաքացիական հասարակությունը տեղեկացված չեն ընկերության ստանձնած պարտավորություններից: ավելին, 2018թ-ի մարտի սկզբի դրությամբ, ոչ ՀՀ ԷԵԲՊՆ-ն, ոչ այլ գործակալություն չի իրականացնում 3-րդ հավելվածով ընկերության ստանձնած պարտավորությունների կատարման մոնիթորինգ:

Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմինը, որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 27-ի որոշմամբ՝ ՀՀ ԷԵԲՊՆ-ի ընդերքի տեսչության և ՀՀ ԲՆ-ի բնապահպանական տեսչության միավորման արդյունքում, կոչված է, մասնավորապես, ապահովելու, որպեսզի երկրաբանական ու արդյունահանման աշխատանքներն իրականացվեն տնտեսվարողի և ՀՀ ԷԵԲՊՆ-ի միջև կնքված պայմանագրերին, ինչպես նաև երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերին և արդյունահանման նախագծերին համապատասխան:

Տեսչական ստուգման ենթակա հարցերի ցանկը ներկայումս մշակման և ՀՀ կառավարության կողմից հաստատման փուլում է: Ակնկալվում է, թեև հստակ չէ, որ հարցաշարը կներառի նաև սոցիալ-տնտեսական ծախսերի իրականացման ընթացքը: Առայսօր ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված սոցիալական ծախսերի կատարման ստուգումը չի կազմել տեսչության իրավասության մաս: Մինչդեռ, ԱՃԹՆ-ի ստանդարտի 6.1 պահանջի համաձայն, այն դեպքերում, երբ ընկերությունների կողմից կատարվող էական սոցիալական ծախսերը պահանջվում են օրենսդրությամբ կամ կառավարության հետ կնքված այնպիսի պայմանագրով, որով կարգավորվում է արդյունահանող ոլորտում ներդրումները, իրականացնող պետությունները պետք է բացահայտեն և հնարավորության դեպքում համադրեն այդ գործարքները:

Աղյուսակ 8. Մետաղական ընդերքօգտագործող ընկերությունների ցանկը և նրանց պայմանագրային պարտավորությունները (եթե այդպիսիք սահմանվել են)

Ընկերություն	ՀՎՀՀ	Հանքավայր	Սոցիալ տնտեսական պայմանագրային պարտավորություններ (հազար ՀՀ դրամով, տարեկան):	Ընթացիկ վիճակ (Զարգացման, արդյունահանման և այլն)
Մեդրաձոր Գոլդ ՍՊԸ	02709666	Մեդրաձոր	Պարտավորություն չկա	Արդյունահանում
Ախթալայի ԼՀԿ ՓԲԸ	06602309	Շամլուղ	Պարտավորություն չկա	Արդյունահանում
Կապանի ԼՀԿ ՓԲԸ	09416902	Շահումյան ոսկի-բազմամետաղ	Պարտավորություն չկա	Արդյունահանում
ԳեոՊրո Մայնինգ ՍՊԸ	01530525	Սոթք	2,400 ²²	Արդյունահանում

²² Պայմանագրային պարտավորությունները կազմում են 12 մլն դրամ յուրաքանչյուր հինգ տարին, նշված է նաև՝ 2-3 ուսանողին իրենց ուսման ընթացքում հատկացնել 1.2 մլն դրամ:

Չանգեզուրի ՊՄԿ ՓԲԸ	09400818	Քաջարան	Պարտավորություն չկա	Արդյունահանում
Ագարակի ՊՄԿ ՓԲԸ	09700039	Ագարակ	3,800	Արդյունահանում
Թեղուտ ՓԲԸ	02700773	Թեղուտ	Պարտավորություն չկա	Արդյունահանում
Լիդիան Արմենիա ՍՊԸ	00091919	Ամուլսար	61,500	Ջարգացում
Սագամար ՓԲԸ	00410036	Արմանիս	1,000	
Լիճքվազ ՓԲԸ	00410036	Լիճքվազ	Պարտավորություն չկա	
Թաթսթոուն ՍՊԸ	00079433	Լիճք	2,030	
Թաթսթոուն ՍՊԸ	00079433	Այգեձորի	3,000	
Պարամաունտ Գոլդ Մայնինգ ՍՊԸ	04219371	Մեղրաձորի ոսկի	Պարտավորություն չկա	
Մոլիբդենի աշխարհի ՍՊԸ	02580107	Դաստակերտ	12,800	
Մուլտի Գրուպ Կոնցեռն ՍՊԸ	03516447	Մղարթ	Պարտավորություն չկա	
Արմենիան քափլո փրոգրամ ՓԲԸ	06605968	Ալավերդի	Պարտավորություն չկա	
Մեգո Գոլդ ՍՊԸ	04213127	Տոլմանուկ	Պարտավորություն չկա	
Լեո-Էքս ՍՊԸ	09412188	Հանքասար	Պարտավորություն չկա	
Գոլդեն օրե ՍՊԸ	02582025	Հանքասար	Պարտավորություն չկա	
Ֆորչն Ռիզորսիս ՍՊԸ	02806526	Հրազդան	Պարտավորություն չկա	
Վարդանի զարթոնք ՍՊԸ	09414399	Սոֆի-Բինա	Պարտավորություն չկա	
Սիփան-1 ՍՊԸ	04001189	Տերտերասար	Պարտավորություն չկա	
Ասաթ ՍՊԸ	03807664	Քարաբերդ	1000	
Ակտիվ Լեռնագործ ՍՊԸ	01544838	Այգեձոր	Պարտավորություն չկա	
Մարջան մայնինգ Քոմփանի ՍՊԸ	01569837	Մարջան	Պարտավորություն չկա	
Վայք Գոլդ ՍՊԸ	00114369	Ազատեկ	3,000	
ԱՏ-ՄԵՏԱԼՍ ՍՊԸ	00118721	Մեղրասար	3,600	
ԲԱԿՏԵԿ ԷԿՈ ՍՊԸ	00870494	Արջուտ	650	
Հրաշք Մետաղ ՍՊԸ	04226807	Բարձրադիր	550	

Գեղի Գուղ ՍՊԸ	09423012	Ոսկեծոր	650	
Ղարագույաններ ՓԲԸ	02583292	Վերին Վարդանիծոր	1,250	
TOTAL			97,230	

Աղբյուրը՝ Ցանկը տրամադրվել է ՀՀ ԷԵԲՊՆ-ի կողմից (թվերը ներկայացված են հազար ՀՀ դրամով):

Աղյուսակ 9. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի ձևի ամփոփ կառուցվածքը, որը հաստատվել է 2012թ.-ին:

Ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի ձևի ամփոփ կառուցվածքը՝ հաստատված ՀՀ կառավարության՝ 2012թ. -ի մարտի 22-ին ընդունած թիվ 437-Ն որոշմամբ.

Կառուցվածք

- Ընդհանուր դրույթներ
- Պայմանագրի առարկան
- Կողմերի իրավունքները և պարտականությունները
- Զգուշացում
- Հաշվետվություններ և տեղեկություն
- Պայմանագրի ուժի մեջ մտնելը, գործողության ժամկետը և լուծումը
- Պայմանագրում փոփոխություններ կատարելու հիմքերը
- Վեճերի լուծումը
- Ծանուցում
- Այլ դրույթներ
- Հիմնական կառուցվածք.
- Կողմերի գտնվելու վայրը, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հավելվածներ

- Ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները
- Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ
- Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ
- Բնապահպանական կառավարման պլան
- Ֆինանսական երաշխիքներ ընդերքօգտագործման թափոնների կառավարման և/կամ վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման համար

Ըստ անհրաժեշտության, պայմանագիրը կարող է ունենալ այլ հավելվածներ, օրինակ, ժամանակացույց՝ արդյունահանման և հանքաքարի վերամշակման աշխատանքների և զուգահեռաբար երկրաբանական ուսումնասիրության ծրագրեր իրականացնելու դեպքում:

Երկրաբանական ուսումնասիրության պայմանագիր

Երկրաբանական ուսումնասիրության պայմանագրի կառուցվածքը նման է ընդերքօգտագործման պայմանագրին կառուցվածքին, բացառությամբ այն հանգամանքի, որ Երկրաբանական ուսումնասիրության պայմանագրով պահանջվում է երկրաբանական ուսումնասիրությունների կատարման և արդյունքները պետական փորձաքննության ներկայացնելու ժամանակացույց:

Պայմանագրի (կամ առնվազն 3-րդ հավելվածի) հրապարակումը թույլ կտա, որպեսզի շահագրգիռ կողմերը մոնիթորինգ իրականացնեն:

Թեև համայնքում կատարվող սոցիալական և տնտեսական ծախսերի մանրամասները հրապարակելու որևէ իրավական պահանջ սահմանված չէ հանքարդյունաբերող ընկերությունների համար, որոշ ընկերություններ այդ տեղեկատվությունը հրապարակում են իրենց կայքերում: Հրապարակվող տեղեկությունների որակը տարբեր է. որոշ

դեպքերում ներկայացված են նաև ամսաթվեր և ծախսված գումարների չափը: Այդուհանդերձ, ընդհանուր առմամբ պարզ չէ՝ արդյոք իրականացվող ծրագրերը կատարվել են պայմանագրային պարտավորությունների շրջանակներում, թե ի լրումն պայմանագրային պարտավորությունների: Որոշ դեպքերում ծրագրերն իրականացվել են ոչ թե անմիջականորեն ընդերքօգտագործող ընկերության, այլ նրա հետ փոխկապակցված սուբյեկտների կողմից (օր.՝ մայր ընկերություն, մայր ընկերության կողմից հիմնված հիմնադրամ կամ մայր ընկերության հետ փոխկապակցված անձ):

Կատարված սոցիալական ծախսերը բացահայտելու պահանջի սահմանումը թույլ կտա, որպեսզի շահագրգիռ կողմերը լիարժեք պատկերացում կազմեն համայնքում կատարվող սոցիալական և տնտեսական ներդրումների մասին:

Հարկ է պարզաբանել՝ բացի ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված պարտադիր սոցիալ-տնտեսական ուղղվածություն ունեցող միջոցառումներից այլ, կամավոր հիմունքներով կատարված վճարումները պետք է ևս հրապարակվեն, թե ոչ: Մտահոգություն է բարձրաձայնվել ԲՇԽ-ի անդամների կողմից առ այն, որ հանքարդյունաբերող ընկերությունները կարող են ուղղակի կամ անուղղակի կերպով կատարել վճարումներ, որոնց նպատակը ոչ թե սոցիալական և տնտեսական ներդրումներ կատարելն է, այլ հետաքրքրված կողմերին «լավություն» անելը, այլ կերպ ասած՝ հնարավոր կոռուպցիոն ռիսկեր: Այս ռիսկերին մասամբ անդրադարձ կատարվեց ԱՃԹՆ ստանդարտի կիրառման շրջանակում մշակված օրենսդրական փոփոխություններում: Որոշվեց, որ ընկերությունները տեղեկատվություն ներկայացնեն՝ կամավորության սկզբունքով իրենց կողմից կատարած վճարումների մասին՝ ըստ հիմնադրամների, ըստ հասարակական կազմակերպությունների և ըստ ֆիզիկական անձանց, վերջինի դեպքում՝ ազդեցացված, ոչ անվանական կերպով:

Արդարադատության նախարարության տվյալներով, առկա են 4782 գրանցված ՀԿ-ներ և 1148 հիմնադրամներ²³: Համաձայն 2002 թվ-ի դեկտեմբերի 29-ին ընդունված Հիմնադրամների մասին օրենքի 39 հոդվածի՝ *հիմնադրամները պարտավոր են հրապարակել տարեկան հաշվետվությունները www.azdarar.am կայքում*²⁴: Այդ կայքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն 816 հիմնադրամներն են տարեկան հաշվետվություններ հրապարակում կայքում²⁵: Լրացուցիչ ուսումնասիրությամբ հնարավոր է պարզել՝ որ՞ հիմնադրամներն ու ՀԿ-ներն են, որոնք անհատույց ստացել են դրամական միջոցներ մետաղական ընդերքօգտագործողներից, ծախսվել են արդյոք այդ գումարները ազդակիր համայնքներում, քանի՞ հիմնադրամ կամ ՀԿ են հիմնադրել մետաղական ընդերքօգտագործողները:

ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջով հանքարդյունահանող ընկերությունները պետք է ներկայացնեն հաշվետվություն/տեղեկություններ պետական և համայնքային բյուջե կատարած վճարումների, ինչպես նաև այլ անձանց կատարած սոցիալական և բարեգործական վճարումների մասին, որոնք այնուհետև նույնպես ըստ

²³ Foundations are a type of legal entity under Armenian legislation. Their mission is similar to that of NGOs, viz., social activities, charity, etc. http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9907708458971_002stat_2017.06_1_.pdf

²⁴ Ավելին, եթե հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը, պետք է հրապարակել նաև ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

²⁵ 2017 թվ-ի նոյեմբերի 2 դրությամբ

կազմակերպությունների և համայնքների պետք է հրապարակվեն ազգային զեկույցում: Արդյո՞ք առաջանում է անձնական տվյալների պաշտպանության խնդիր, եթե ընկերությունները ներկայացնում են **սոցիալական/բարեգործական վճարներն ըստ շահառուի**, այսինքն՝ նշելով, թե կոնկրետ ում է (ֆիզիկական կամ իրավաբանական անձ) գումար տրամադրվել հաշվետու տարվա ընթացքում: Այս կապակցությամբ ԲՇԽ-ն ստացել է Արդարադատության նախարարության կողմից պատրաստված կարծիքը անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *անձնական տվյալը ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն է, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը*: Օրենքի վերոշարադրյալ դրույթի տառացի մեկնաբանությունը թույլ է տալիս փաստել, որ անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ կանոնակարգումները կիրառելի են միայն ֆիզիկական անձի դեպքում և չեն տարածվում իրավաբանական անձանց վրա: Այլ կերպ ասած, քննարկվող դեպքում, երբ շահառուն ֆիզիկական անձ է, ապա առկա է անձնական տվյալների մշակում, ուստի, հանքարդյունահանող ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվություններում շահառու ֆիզիկական անձանց անձնական տվյալները ներառելու համար անհրաժեշտ է կամ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված տվյալների սուբյեկտի համաձայնությունը:

Հարկ է նկատել, որ առանձին իրավունքի ճյուղեր առանձին հանգամանքներում ենթադրում են տվյալ շահառու-ֆիզիկական անձանց, նրանց վճարված գումարների չափի և նպատակի բացահայտում: Այսպես, Սնանկության մասին օրենքի 54-րդ հոդվածի համաձայն *կառավարիչը կարող է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու՝*

ա) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում.

բ) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները ցանկացած երրորդ անձանց, որոնք կատարվել են սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուն նախորդող երեք տարվա ընթացքում:

Նմանապես, կորպորատիվ կառավարման տեսանկյունից խրախուսվում է, որպեսզի ընկերության կառավարման մարմինը հստակ հիմնավորի անհատույց դրամական միջոցներ այս կամ այն անձին փոխանցելիս: Ավելին, անհրաժեշտ է բացահայտել անձի ինքնությունը, որպեսզի պարզ դառնա առկա է արդյոք շահագրգռվածություն և փոխկապակցվածություն: Սա վկայում է, որ սննկացման ինստիտուտի շրջանակներում և կորպորատիվ կառավարման համատեքստում ՀՀ օրենսդրության սահմանված մի շարք պահանջներ, որոնք ուղղված են բաժնետերերի, պարտատերերի և այլ շահառուների իրավունքների պաշտպանությանը, ֆիզիկական անձանց շրջանակը, փոխանցվող գումարի չափը և նպատակը պետք է բացահայտվի: Մյուս կողմից ԲՇԽ-ում կարծիք հայտնվեց, որ հաշվի առնելով երկու՝ մասնավոր և հանրային շահերի բախումը, անհրաժեշտ է սահմանել դրամական օգնության նվազագույն չափ, որից բարձր հաշվետու կազմակերպությունները պետք է բացահայտեն ֆիզիկական անձանց շրջանակը,

օգնության չափը և նպատակը: Վերջապես առաջարկվեց նաև տեսակետ, որպեսզի այսուհետև հաշվետու ընդերքօգտագործողների կողմից նման աջակցություն ցուցաբերելու դեպքում ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ քայլերը (ենթադրենք վերցնել շահառուի գրավոր համաձայնությունը հրապարակելու պահանջվող տեղեկատվություն), որպեսզի ընդերքօգտագործողները կարողանան ազատորեն հրապարակել պահանջվող տեղեկատվությունը, հակառակ դեպքում այդ գումարները չեն կարող անհատույց փոխանցվել:

6.13. Ապասագրեգացման աստիճան (ստանդարտի 4.7-րդ պահանջ)

Ինչպես մատնանշվեց «Հաշվետու ընկերությունների ցանկ» և «Հաշվետու պետական կառույցներ» բաժիններում, ՊԵԿ-ը տեխնիկապես ի վիճակի է ներկայացնել առանձին եկամտային հոսքերը ըստ յուրաքանչյուր ընկերության: Նման ապասագրեգացված տվյալները ներկայացնելու պահանջ պետք է սահմանվի օրենսդրական փոփոխությունների միջոցով:

Ծրագրային մակարդակում հաշվետվողականությունն իրատեսական է ընկերությունների համար պայմանով, որ նրանք առանձին հաշիվներ պահեն այն դեպքերում, երբ մեկ ընկերությունն իրականացնում է երկու կամ ավելի ծրագիր: Այդուհանդերձ, քանի որ նրանք պարտավոր չեն ըստ ծրագրերի հաշվետվություն ներկայացնել ՊԵԿ, վերջինս չի տիրապետում ապասագրեգացված տվյալների:

6.14. Տվյալների արդիականություն (ստանդարտի 4.8-րդ պահանջ)

Տվյալների արդիականության մասով ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.8-րդ պահանջին համապատասխան Հայաստանի պարտավորությունները գնահատելու համար ստորև բերված է հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցը՝

- Հայաստանը թեկնածու երկրի կարգավիճակ է ստացել 2017թ. մարտի 9-ին:
- ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.8.ա պահանջի համաձայն՝ առաջին զեկույցը պետք է ներկայացվի 18 ամսվա ընթացքում: Ըստ այդմ, առաջին զեկույցի վերջնաժամկետը 2018 թվականի սեպտեմբերի 9-ն է:
- Անկախ ադմինիստրատորի հետ պայմանագիրը պետք է կնքվի մինչև 2018թ. մայիսը, որպեսզի բավարար ժամանակ լինի զեկույցի պատրաստման համար: (Ըստ այդմ, համաձայն ԲՇԽ-ի աշխատանքային ծրագրի անկախ ադմինիստրատորի ընտրության գործընթացը մեկնարկում է 2017թ. հոկտեմբերին, իսկ զեկույցը պետք է հաստատվի մինչև 2018թ. հուլիս ամիսը:

Հայաստանում ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը: Հաշվապահական հաշվառման մասին օրենքով նախատեսված դեպքերում ֆինանսական հաշվետվությունները պետք է հրապարակվեն մինչև հուլիսի 1-ը:

ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.8.բ-րդ պահանջը նախատեսում է, որ *իրականացնող պետությունները պետք է բացահայտեն ոչ ավելի, քան երկու տարվա վաղեմություն ունեցող տվյալներ...*: Հետևաբար, 2018 թվականի զեկույցում 2016 թվականի տվյալները

ներկայացնելն ընդունելի է: ԲՇԽ-ի հետ քննարկումների ժամանակ մտահոգություններ են հնչել, որ աուդիտ անցած հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետը հնարավոր է ուշ կլինի, որպեսզի անկախ ադմինիստրատորը ներառի դրանք 2018 թվականի զեկույցում:

6.15. Տվյալների էլեկտրոնային եղանակով ներկայացումը անկախ ադմինիստրատորին

ԲՇԽ-ի հետ քննարկումներից պարզ է, որ նախատեսվում է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային մեխանիզմ, որը կազատի թղթային տարբերակով տեղեկությունները ներկայացնելու անհրաժեշտությունից: Ազգային ԱՃԹՆ-ի վեբ կայքի տեխնիկական առաջադրանքը ներկայումս պատրաստվում է և ներառելու է պահանջների մանրամասն նկարագրություն, որի համաձայն ընկերությունները պետք է գրանցվեն կայքէջում և լրացնեն ու ներկայացնեն էլեկտրոնային ձևանմուշներ: Նախատեսված է, որ Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը գործարկված կլինի՝ 2018 թվականի երկրորդ եռամսյակի սկզբին տվյալների ներկայացման համար: Այնուհետ օրենսդրությունը, որը կպարտավորեցնի ընկերություններին և պետական կառույցներին տեղեկությունները հրապարակել կայքէջում, կարող է սահմանել նաև էլեկտրոնային ձևանմուշների օրինակելի ձևերը:²⁶

²⁶ Հետագա տարիներին ԲՇԽ-ն կարող է դիտարկել հաշվետվողականության շարունակական համակարգ ներդնելու հարցը, որի միջոցով ընկերությունները և հաշվետու այլ սուբյեկտները տվյալները կներբեռնեն համապատասխան պորտալում այդ տվյալների պատրաստմանը զուգահեռ: Սակայն, սկզբնական շրջանում հնարավոր է նախընտրել լինի, որպեսզի հաշվետու սուբյեկտները կենտրոնանան հիմնական պահանջները և տարեկան կտրվածքով տվյալները ներկայացնելու եղանակների ըմբռնման վրա:

7. Հանքարդյունաբերության ոլորտի նկարագրություն (ստանդարտի 3-րդ և 6.3-րդ պահանջներ)

Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտը երկար պատմություն ունի՝ սկսած տասնութերորդ դարի վերջերից, երբ Լոռու մարզի Ալավերդու շրջանում սկսեցին պղինձ արդյունահանել: Պղինձ հայտնաբերվել է նաև Կապանում Սյունիքի մարզում, որտեղ պղինձի արդյունահանումը սկսեցին տասնիններորդ դարի կեսերին, և այսօր էլ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը հիմնականում կենտրոնացված է այս երկու մարզերում:²⁷

Արդյունահանվող հիմնական մետաղական օգտակար հանածոներն են պղինձը, մոլիբդենն ու ոսկին: Հիմնական հանքային պաշարներն են պղինձը, ոսկին, մոլիբդենը և բազմամետաղները (կապար և ցինկ): Ներկա պահին ամենախոշոր հանքը շահագործում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ն (ԶՊՄԿ) և գտնվում է Քաջարանում (Սյունիքի մարզ): Սա պղնձամոլիբդենային հանքավայր է, որի շահագործումը սկսվել է 20-րդ դարի կեսերին, իսկ այս պահին այն ապահովում է Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ընդհանուր արդյունքի ավելի քան կեսը:

Ինչպես ներկայացված է ԶՊՄԿ-ի կայքէջում²⁸, կոմբինատն արտադրում է տարեկան 12.8 միլիոն տոննա հանքանյութ (հնարավոր է, որ այս տեղեկատվությունը թարմացման կարիք ունենա): Թեղուտը (պղինձ-մոլիբդենի հանք Լոռու մարզում), որի շահագործումը սկսվել է 2014 թվականին²⁹, արտադրության ծավալով Քաջարանի ապահոված ծավալի քիչ է, իսկ մյուսն Ամուլսարն է (ոսկեբեր քվարցիտներ, Վայոց ձորի մարզ)՝ ցածր պարունակության, խոշոր ծավալների հանքավայր, որն այժմ շինարարության փուլում է: Վերջինիս՝ շահագործման փուլում տարեկան արտադրողականությունը կազմելու է 10 մլն տոննա հանքաքար: Հանքի շահագործումը տևելու է 10 տարի:

Ընդհանուր առմամբ 2016 թվականին վավեր է համարվել մետաղական օգտակար հանածոների արդյունահանման 29 թույլտվություն, նույն թվաքանակը պահպանվել է 2017 թվականին: Այս 29 թույլտվություններից 2016թ.ն ակտիվ գործունեություն են իրականացրել 7 ընկերություններ՝ այն առումով, որ իրականացվել է արտադրություն: Բայցևայնպես, «ակտիվ» ասվածը կարող է շփոթեցնող լինել, քանի որ հանքը, որը դեռևս արտադրական փուլում չի գտնվում, կարող է ունենալ շատ աշխատողներ և, հնարավոր է, որ հայտնվի խոշոր 1000 հարկատուների շարքում, սակայն միևնույն ժամանակ չունենա արտադրության մասով տվյալներ(ինչպես օրինակ Լիադիան Արմենիա ՓԲԸ կողմից շահագործվող Ամուլսարի հանքը):

Ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտը նշանակալի է իրականացվող գործառնությունների թվաքանակի առումով (ավելի քան 400 թույլտվություն), սակայն դրանց գերակշռող մեծամասնությունը փոքր քարհանքեր են: Արտադրության ծավալը

²⁷ Այս և հաջորդող չորս պարբերություններում բերված տեղեկատվության մեծ մասը վերցված է Համաշխարհային բանկի «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում» (2016թ.) զեկույցից:

²⁸ <http://www.zcmc.am/arm/our-operations/processing/>, մուտքը՝ 2017թ. սեպտեմբերի 21-ին:

²⁹ 2018թ-ի փետրվարին Թեղուտի ընդերքօգտագործող ընկերության մայր ընկերություն հանդիսացող Վալեքս Գրուպ ՓԲԸ-ը անժամկետ դադարեցրեց հանքի շահագործումը:

շատ ավելի փոքր է քան խորհրդային շրջանում էր, քանի որ հիմնականում սպասարկում է շինարարական նյութերի տեղական պահանջարկը, իսկ արտահանումը շատ փոքր ծավալ է կազմում:

ՀՀ ԷԵԲՊՆ ներկայացված տվյալներում և պաշտոնական վիճակագրության մեջ բացակայում է որևէ տեղեկատվություն արտիզանալ/ոչ ֆորմալ գործունեության վերաբերյալ:

ԱՃԹՆ-ի պահանջ է երկրաբանական ուսումնասիրության, արդյունահանման վերաբերյալ տեղեկատվության և արտահանման տվյալների բացահայտումը: Դա բարձրացնում է ոլորտում իրականացվող հիմնական գործառնությունների թափանցիկության աստիճանը և լրացուցիչ տեղեկատվություն է տալիս, որը կարելի է խաչաձև ստուգել եկամուտների և վճարումների մասով տվյալների հետ: Ստորև՝ 7.1-ից մինչև 7.5 ենթաբաժիններում տեղեկատվություն է ներկայացված երկրաբանական ուսումնասիրության, արտադրության և արտահանման տվյալների բացահայտման ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման նպատակով անհրաժեշտ տվյալների առկայության վերաբերյալ: Այդ ենթաբաժիններում խոսվում է նաև այն տվյալների առկայության մասին, որոնք ԲՇԽ-ն պահանջել է, համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի 6.3-րդ պահանջի:

7.1. Տնտեսության մեջ մասնաբաժինը. ՀՆԱ, զբաղվածություն և օտարերկրյա ներդրումներ

ՀՆԱ-ն ազգային և մարզային մակարդակներում

Հանքարդյունաբերության ոլորտի վիճակագրությունը Հայաստանում ներկայացվում է Եվրոստատի (NACE, 2-րդ վերանայված տարբերակ) կողմից կիրառվող՝ գործունեության տեսակների դասակարգչով: Այս համակարգով տնտեսական գործունեության տեսակները բաժանված են 21 լայն ուղղությունների: ԱՃԹՆ-ի ստանդարտի իմաստով հետաքրքրական են «Բ» և «Գ» դասիչները: «Բ» դասիչը «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»-ն է, իսկ «Գ»-ն՝ «Մշակող արդյունաբերություն»-ը (manufacturing): «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» դասիչի գործունեության տեսակներն ամփոփված են աղյուսակ 10-ում (ծախ կողմում): Հանքահարստացումն ու ձուլումը «Մշակող արդյունաբերություն» դասիչի ներքո է (աղյուսակ 10-ի աջ կողմում): Որպես այդպիսին՝ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման մասով վիճակագրական տվյալները վերաբերում են միայն շղթայի առաջին օղակում իրականացվող գործունեությանը, իսկ շղթայի երկրորդ օղակը (այն է՝ վերամշակում և ձուլվածքներ) ներկայացված է «Մշակող արդյունաբերություն» բաժնում (երկնիշ դասիչ, #24):

Աղյուսակ 10. Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման (ծախս կողմ) և մետաղական մշակող արդյունաբերության (աջ կողմ) բոլոր ենթախմբերը

SECTION B — MINING AND QUARRYING			
05	05.1		Mining of coal and lignite
			Mining of hard coal
	05.2	05.10	Mining of hard coal
06	06.1		Mining of lignite
		06.10	Mining of lignite
	06.2		Extraction of crude petroleum and natural gas
		06.20	Extraction of crude petroleum
07	07.1		Extraction of natural gas
		07.10	Extraction of natural gas
	07.2		Mining of metal ores
		07.20	Mining of iron ores
		07.21	Mining of non-ferrous metal ores
		07.29	Mining of uranium and thorium ores
08	08.1		Mining of other non-ferrous metal ores
		08.11	Other mining and quarrying
	08.9	08.12	Quarrying of stone, sand and clay
			Quarrying of ornamental and building stone, limestone, gypsum, chalk and slate
			Operation of gravel and sand pits; mining of clays and kaolin
			Mining and quarrying n.e.c.
09	09.1		Mining of chemical and fertiliser minerals
		09.10	Extraction of peat
	09.9		Extraction of salt
			Other mining and quarrying n.e.c.
		09.90	Mining support service activities

SECTION C — MANUFACTURING			
24	24.1		Manufacture of basic metals
		24.10	Manufacture of basic iron and steel and of ferro-alloys
	24.2		Manufacture of basic iron and steel and of ferro-alloys
		24.20	Manufacture of tubes, pipes, hollow profiles and related fittings, of steel
	24.3		Manufacture of tubes, pipes, hollow profiles and related fittings, of steel
		24.31	Manufacture of other products of first processing of steel
	24.4	24.32	Cold drawing of bars
		24.33	Cold rolling of narrow strip
		24.34	Cold forming or folding
			Cold drawing of wire
		24.41	Manufacture of basic precious and other non-ferrous metals
		24.42	Precious metals production
	24.5	24.43	Aluminium production
		24.44	Lead, zinc and tin production
		24.45	Copper production
		24.46	Other non-ferrous metal production
			Processing of nuclear fuel
24.51		Casting of metals	
24.52		Casting of iron	
24.53		Casting of steel	
24.54	Casting of light metals		
	Casting of other non-ferrous metals		

Աղբյուրը՝ Եվրոստատի 2-րդ վերանայված տարբերակ. Տնտեսական գործունեության վիճակագրական դասակարգումը Եվրոստատի համայնքում, EUROSTAT (2008թ.)

Հայաստանի ՀՆԱ-ի հաշվարկներում ներառված են ընդհանուր գործունեության մասով տվյալներ՝ ըստ «Բ» և «Գ» դասիչների: Աղյուսակ 11-ում ներկայացված է ՀՆԱ-ի վիճակագրությունը, մասնավորապես, ընդհանուր արդյունքը և մասնաբաժինն՝ ընդհանուր արդյունքի մեջ՝ ըստ «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» դասիչի (Բ): ՀՆԱ կառուցվածքում հանքագործական արդյունաբերության ոլորտում տնտեսական գործունեությունը ներկայացված է ըստ հիմնարար ճյուղի՝ ամփոփիչ խմբավորմամբ, իսկ կոնկրետ տեսակների, օրինակ՝ երկնիչ դասակարգման դեպքում, «Մետաղական հանքաքարի արդյունահանման» (07) վերաբերյալ տվյալներ, չեն հրապարակվում: «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» գործունեության տեսակի վերաբերյալ տվյալներ առկա են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) մեկ այլ հրապարակման մեջ, որն է՝ «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ» վիճակագրական տեղեկագիրը: Այս հաշվետվությունը պարունակում է ՀՀ դրամով արտահայտված արժեքներ, իրական աճի գործակիցը՝ ընթացիկ և համեմատական գներով, և զբաղվածության ցուցանիշները: Հաշվետվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով, ինչը կարող է հանգեցնել տվյալների հնության: Միևնույն տեղեկատվությունը, սակայն, կա նաև «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական-վերլուծական զեկույցում, որը հրապարակվում է եռամսյակային և տարեկան կտրվածքով (ՀՀ ԱՎԾ): Եռամսյակային տվյալները ներկայացվում են նախորդ եռամսյակին հաջորդած ամսվա ընթացքում: Տարեկան տվյալները ներկայացվում են նախորդ օրացուցային տարվան հաջորդող երկրորդ եռամսյակի սկզբներին: Այլ կերպ ասած՝ 2017թ. տվյալները պետք է, որ պատրաստ լինեն 2018թ. մարտ կամ ապրիլ ամիսներին: ԱՎԾ-ն ուղրտում իրականացվող տնտեսական գործունեության վերաբերյալ սկզբնական տեղեկատվությունը ստանում է ընկերություններից պետական վիճակագրական հաշվետվությունների միջոցով, իսկ արտահանման վերաբերյալ տվյալները՝ ՊԵԿ-ից, որը մաքսային վիճակագրությունը

վարում է կազմակերպությունների ներկայացրած բեռնամաքսային հայտարարագրերի հիման վրա: Հարկ է նկատել, որ ԱՎԾ-ն ընկերությունների կողմից իրեն ներկայացված տվյալների արժանահավատությունը ստուգելու նպատակով կարող է իրականացնել ստուգումներ ընկերություններում, սակայն չունի գործառույթ ընկերություններից ստացված տեղեկատվությունը համադրելու պետական կառավարման մարմինների կողմից ստացված այլ տեղեկատվության հետ:

Աղյուսակ 11. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, ընդհանուր արդյունք և մասնաբաժինը ՀՆԱ կազմում

	2011	2012	2013	2014	2015	2016 ³⁰
ՀՆԱ՝ ընդամենը, միլիոն ՀՀ դրամ	3,777,945.6	4,266,460.5	4,555,638.2	4,828,626.3	5,032,089.0	5,079,864.6
Արդյունքը հիմնական գներով, միլիոն ՀՀ դրամ	172,401.8	197,473.5	203,221.0	202,361.5	231,676.4	271,445.6
Միջանկյալ սպառում, միլիոն ՀՀ դրամ	69,555.3	81,795.8	100,534.2	99,808.3	126,653.1	139,029.5
Համախառն ավելացված արժեք, միլիոն ՀՀ դրամ	102,846.5	115,677.7	102,686.8	102,553.2	105,023.3	132,416.1
Մասնաբաժինը ՀՆԱ կազմում որպես ՀՆԱ-ի %)	2.7	2.7	2.3	2.1	2.1	2.6
Իրական ծավալի ինդեքս, %	113.9	115.7	105.9	93.6	157.9	111.6

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Հայաստանում ՀՆԱ-ն մարզային մակարդակում պաշտոնապես չի հաշվառվում: Մարզային մակարդակում մոտավոր հաշվարկները կատարվում են համախառն ավելացված արժեքի ցուցանիշի օգնությամբ՝ չհաշվելով արտադրության և ներկրման հարկերը: Այսինքն՝ մարզային մակարդակում ՀՆԱ-ն հաշվարկվում է բազային (ոչ շուկայական) գներով: Հետևաբար, Հայաստանում մարզային մակարդակում ՀՆԱ-ի հաշվարկը կարող է անորոշությունների տեղիք տալ: Չնայած դրան՝ հանքարդյունաբերության արտադրական ծավալների մասով մարզային տվյալներ կան: Այդ մանրամասները քննարկված են ստորև «Արտադրական տվյալներ» բաժնում:

Ոլորտի մակարդակում արտադրության և եկամուտների համակողմանի գնահատում կատարելու համար բավարար տեղեկատվություն կա Հայաստանի ազգային հաշիվներում. մասնավորապես՝ կան տվյալներ արտադրության ծավալներ, ավելացված արժեքի, միջանկյալ սպառման, եկամուտների ձևավորման, արժեզրկման և այլնի մասով: Աղյուսակ 12-ում ամփոփված են առկա տվյալները:

Աղյուսակ 12. Հայաստանի ազգային հաշիվները, տարեկան և եռամսյակային տվյալներ, վիճակագրական ժողովածու

Մակարդակը	Ազգային
Պարբերականությունը	Տարեկան
Հրապարակման ժամանակը	IV եռամսյակ, Նոյեմբեր

³⁰ Նախնական տվյալներ, տես՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-մարտին. http://armstat.am/file/article/sv_03_17a_112.pdf

Լեզուն	Հայերեն, անգլերեն
Աղբյուրը	http://armstat.am/am/?nid=82&year=2017 http://armstat.am/am/?nid=82&id=1839
Գործունեության տեսակ	Հանրագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում
Ցուցանիշներ	Թողարկում հիմնական գներով, մլն դրամ
	Միջանկյալ սպառում, մլն դրամ
	Համախառն ավելացված արժեք, մլն դրամ
	Ազգային մասնավոր սեփականության հատվածի համախառն ավելացված արժեք, մլն դրամ
	Օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող հատվածի համախառն ավելացված արժեք, մլն դրամ
	Հանրագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում - տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %
	Հանրագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում իրական ծավալի ինդեքսը, %
	Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն, մլն դրամ
	Արտադրության այլ զուտ հարկեր, մլն դրամ
	Համախառն շահույթ և համախառն խառը եկամուտ, մլն դրամ
	Հիմնական կապիտալի սպառում, մլն դրամ
	Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ, մլն դրամ
	Համախառն ավելացված արժեք, % ընդամենի նկատմամբ
	Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն, % ընդամենի նկատմամբ
	Արտադրության այլ զուտ հարկեր, % ընդամենի նկատմամբ
	Համախառն շահույթ և համախառն խառը եկամուտ, % ընդամենի նկատմամբ
	Հիմնական կապիտալի սպառում, % ընդամենի նկատմամբ
	Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ, % ընդամենի նկատմամբ
	Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն, %-ով ընդամենը համախառն ավելացված արժեքի նկատմամբ
	Արտադրության այլ զուտ հարկեր, %-ով ընդամենը համախառն ավելացված արժեքի նկատմամբ
Համախառն շահույթ և համախառն խառը եկամուտ, %-ով ընդամենը համախառն ավելացված արժեքի նկատմամբ	
Հիմնական կապիտալի սպառում, %-ով ընդամենը համախառն ավելացված արժեքի նկատմամբ	
Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ, %-ով ընդամենը համախառն ավելացված արժեքի նկատմամբ	

Զբաղվածությունը ազգային և մարզային մակարդակներում

Զբաղվածության, աշխատանքի վարձատրության և այլ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն առկա է «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում» 2011-2015թթ. վիճակագրական ժողովածուի մեջ: Ժողովածուն հրապարակվում է ամեն տարի դեկտեմբերին և պարունակում է տեղեկատվություն՝ մինչև նախորդ տարին ներառյալ (աղյուսակ 13): Ընկերությունները պարտավոր են պետական մարմիններին հաշվետվություններով ներկայացնել աշխատողների թվաքանակը, աշխատավարձերը և այլն, սակայն այս տեղեկատվությունը հրապարակային դարձնելու պահանջ չկա: ԱՃԹՆ-ի ստանդարտի 6.3-րդ պահանջի համաձայն պետությունները հասանելիության դեպքում պետք է բացահայտեն տեղեկություններ ԱՃԹՆ-ի զեկույցում ընդգրկված տարվա համար տնտեսության մեջ արդյունահանող ճյուղերի կատարած ներդրման մասին: Պահանջվում է, որ այդ տեղեկությունները ներառեն նաև զբաղվածության մակարդակն արդյունահանող ճյուղերում՝ բացարձակ մեծություններով և որպես ընդհանուր զբաղվածության տոկոս:

Աղյուսակ 13. Հայաստանի Հանրապետության տարեկան զբաղվածության վիճակագրությունը

Մակարդակը	Ազգային
Պարբերականությունը	Տարեկան
Հրատարակման ժամանակը	IV եռամսյակ, դեկտեմբեր
Լեզուն	Հայերեն, անգլերեն
Աղբյուրը	http://armstat.am/am/?nid=82&id=1861
Գործունեության տեսակ	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում
Ցուցանիշներ	Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության և սեռի, մարդ
	Զբաղվածների տեսակարար կշիռը ընդամենը զբաղվածության նկատմամբ, %
	Սովորաբար և փաստացի աշխատած միջին շաբաթական ժամերն ըստ տնտեսական գործունեության տեսակների, ժամ
	Փաստացի աշխատած միջին շաբաթական ժամերն ըստ տնտեսական գործունեության տեսակների, զբաղվածների սեռի և բնակավայրի, ժամ
	Վնասակար և վտանգավոր պայմաններում աշխատողների թվաքանակը, %, մարդ
	Աշխատողների թվաքանակը, ովքեր օգտվել են թվարկված արտոնություններից և հատուցումներից որևէ մեկից, %, մարդ
	Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ եռամսյակների և տնտեսական գործունեության, դրամ
	Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսական գործունեության, դրամ
	Միջին ամսական անվանական աշխատավարձը մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտում, դրամ
	Միջին ամսական անվանական աշխատավարձը հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղերում, դրամ
	Միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպը, %
	Իրական աշխատավարձի ինդեքսն ըստ տնտեսական գործունեության, %
	Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ սեռի, դրամ
	Ղեկավար անձնակազմի միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ
	Աշխատողների թվաքանակն ըստ աշխատավարձի չափի, %
Միավոր աշխատանքի վրա կատարված միջին ամսական ծախսեր, դրամ	

Աղյուսակ 14. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում ոլորտում զբաղվածների թվաքանակը և մասնաբաժինը

	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	2015	2016	2015	2016	2015	2016
	1000 մարդ					
Ընդամենը	1 072.6	1 006.2	562.3	528.2	510.4	478.0
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	9.3	8.8	8.9	8	0.4	0.7
Մշակող արդյունաբերություն	84.2	83.2	53	52.6	31.2	30.6
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	4.6	5.2	3.2	4.3	1.5	0.9
	Ընդամենի նկատմամբ, %					
Ընդամենը	100	100	100	100	100	100
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	0.9	0.9	1.6	1.5	0.1	0.2
Մշակող արդյունաբերություն	7.9	8.3	9.4	10	6.1	6.4
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.4	0.5	0.6	0.8	0.3	0.2

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Օտարերկրյա ներդրումներ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը երկրի տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տարի հրապարակում է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-փետրվարին» տեղեկատվական-ամսական զեկույցում՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների (աղյուսակ 15): Օտարերկրյա ներդրումների մասով ազգային տվյալներ կան նաև ըստ ներդրումների ծագման երկրի (աղյուսակ 16):

Աղյուսակ 15. Օտարերկրյա ներդրումների տվյալներ, այդ թվում՝ հանքարդյունաբերության ոլորտ

Անվանում	«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-փետրվարին» տեղեկատվական-ամսական զեկույց
Մակարդակը	Ազգային
Պարբերականությունը	Ամսական, բայց տվյալները հրապարակվում են միայն նշված զեկույցում
Հրատարակման ժամանակը	II եռամսյակ, Մարտ
Լեզուն	Հայերեն, ռուսերեն
Աղբյուրը	http://armstat.am/am/?nid=82&id=1890
Գործունեության տեսակը	Մետաղական հանքաքարի արդյունահանում Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն
Ցուցանիշները	Կից Excel ֆայլում Օտարերկրյա ներդրումներ Օտարերկրյա ուղղակի ներդրումներ Օտարերկրյա ներդրումներ ըստ երկրների Օտարերկրյա ուղղակի ներդրումներ ըստ երկրների

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Աղյուսակ 16. Իրական հատվածում օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի բաշխվածությունն ըստ երկրների, հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, միլիոն ՀՀ դրամ

Գործունեության տեսակը (ըստ S4SՀԴ խմբ.2)	Երկիր	2015թ. հունվար - դեկտեմբեր ^o		2016թ. հունվար -դեկտեմբեր	
		Զուտ հոսքեր		Զուտ հոսքեր	
		Ընդամենը ներդրումներ	Որից՝ ուղղակի ներդրումներ	Ընդամենը ներդրումներ	Որից՝ ուղղակի ներդրումներ
Ընդամենը		118 409.3	69 426.8	81 581.3	62 679.3
<i>այդ թվում՝</i>					
Մետաղական հանքաքարի արդյունահանում		4 319.3	3 006.8	-34 100.9	-17 845.5
	Կիպրոս	1 444.9	-	-946.4	-
	Նիդերլանդներ	-132.5	-	-16 739.4	-1 430.5
	Ռուսաստանի Դաշնություն	3 006.8	3 006.8	-16 415.0	-16 415.0
Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր		56 462.0	26 460.7	-19 167.7	-7 318.5
	Իտրվաթիա	-43.1	-	-74.0	-
	Կիպրոս	8.2	59.3	-	-
	Գերմանիա	12 300.7	-15 765.6	-15 003.5	-7 333.1
	Ռուսաստանի Դաշնություն	-	-	-4 449.7	14.6
	Շվեյցարիա	43 650.8	42 167.0	385.4	-
	Միացյալ Թագավորություն	545.4	-	-25.9	-
Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն		3 666.4	3 371.5	40 923.9	41 852.8
	Ռուսաստանի Դաշնություն	295.0	-	253.7	1 182.5
	Միացյալ Թագավորություն	3 371.5	3 371.5	30 551.2	30 551.2
	Ջերսի	-	-	10 119.1	10 119.1

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

7.2. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունները և գործունեության հիմնական տեսակներ

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրվող ընդերքօգտագործման իրավունքների ընդհանուր թիվը

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվություն առկա է հետևյալ կայքերում.

- ՀՀ կառավարության պաշտոնական կայք՝ <https://www.e-gov.am/lists/>
- ՀՀ ԷԵԲՊՆ-ի պաշտոնական կայք՝ <http://www.minenergy.am/page/422>
- ՀՀ ԷԵԲՊՆ հանրապետական երկրաբանական ֆոնդի պաշտոնական կայք՝ www.geo-fund.am/en/issued-permits/

Երկրաբանական ֆոնդի կայքում, որը գործարկվել է 2017թ. սեպտեմբերին, ներկայացված է երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրված ընդերքօգտագործման թույլտվությունների ցանկը (դրանք հետագա արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար տրված ընդերքօգտագործման իրավունքներն են), ներկայացված չեն երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրված թույլտվությունները (ընդհանուր երկրաբանական ուսումնասիրություն՝ առանց կոնկրետ հանքատեսակի նշմամբ): Երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրված ընդերքօգտագործման թույլտվությունների ցուցակը լիարժեք չէ.

- Երկրաբանական ֆոնդի տվյալներով՝ հետագա արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների համար տրված ընդերքօգտագործման թույլտվությունների թիվը 14 է,
- ՀՀ կառավարության կայքում ներկայացված ցուցակի համաձայն՝ այդ թույլտվությունների թիվը 41 է:

Հնարավոր է, որ տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Երկրաբանական ֆոնդի կայքը միայն վերջերս է գործարկվել և դեռևս համալրման փուլում է³¹:

Բոլոր երեք կայքերում ներկայացված տեղեկատվությունը վերաբերում է միայն ընթացիկ տարվան: 2016թ. և նախորդ տարիների թույլտվությունների առանձին ցուցակներն առցանց հասանելի չեն: Գրավոր հարցմանն ի պատասխան ԷԵԲՊՆ-ից ստացել ենք ընկերությունների ցանկը, որոնք ստացել են ընդերքօգտագործման թույլտվություն երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով և այն ներկայացված է Հավելված 9-ում: Միևնույն ժամանակ, աղյուսակ 17-ում ամփոփված է բոլոր 3 աղբյուրների տեղեկատվությունը:

Աղյուսակ 17. Կառավարության և պետական մարմինների կայքերում առկա՝ երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման թույլտվությունների մասին տեղեկատվություն

Վեբ կայք	Ամսաթիվը	Ներառված տվյալները
https://www.e-gov.am/lists/	1-ը հուլիսի, 2017թ.	Թվարկված են 41 թույլտվություններ՝, որտեղ նշված է՝ <ul style="list-style-type: none"> • Ընկերության անվանումը • Գործունեության իրականացման վայրը • Թույլտվության համարը • Թույլտվության նպատակը • Թույլտվության տրման ամսաթիվը • Թույլտվության գործողության ժամկետը • Պայմանագրի համարը • Նշումներ
http://www.minenergy.am/page/422	1-ը հուլիսի, 2017թ.	Թվարկված են 41 թույլտվություններ, որտեղ նշված է՝ <ul style="list-style-type: none"> • Ընկերության անվանումը • Գործունեության իրականացման վայրը • Թույլտվության համարը • Թույլտվության նպատակը • Թույլտվության տրման ամսաթիվը • Թույլտվության գործողության ժամկետը

³¹ Մյուս կողմից պետք է հաշվի առնել, որ ֆոնդն ավելի ուշ է ստանում հաշվետվությունները: Բացի այդ, տարբերության մյուս պատճառն էլ թվերի հաշվարկման սկզբի տարբերվեն են իրարից տարբերվում: Մի դեպքում 2000ականներից է սկսվում, մյուս դեպքում 2012 թվականից:

		<ul style="list-style-type: none"> • Պայմանագրի համարը • Նշումներ
www.geo-fund.am/en/issued-permits/	Թվագրված չեն, ենթադրվում է, որ ընթացիկ ինֆորմացիա է	Թվարկված են 14 թույլտվություններ, որտեղ նշված է՝ <ul style="list-style-type: none"> • Ընկերության անվանումը • Թույլտվության համարը • Թույլտվությունը տրամադրած գերատեսչության անվանումը • Թույլտվության տրման ամսաթիվը • Թույլտվության գործողության ժամկետը • «Այլ»՝ պայմանագրի համարն ու ամսաթիվը և լեռնահատկացման ակտի տրման ամսաթիվը

Երկրաբանական ուսումնասիրության ծավալները

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը տեղեկատվություն է տրամադրում երկրաբանական ուսումնասիրության նպատակով կատարված ընդերքօգտագործման աշխատանքների արժեքի վերաբերյալ (<http://armstat.am/am/?nid=82&id=1824>): Դա ցույց է տալիս, որ 2015 թվականին կատարվել է 718 միլիոն ՀՀ դրամ (մոտ 1.5 միլիոն ԱՄՆ դոլար) արժողությամբ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, որն ամբողջությամբ իրականացվել է մասնավոր հատվածի կողմից: Գնահատման պահի դրությամբ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքում (www.armstat.am, վերջին անգամ ուսումնասիրվել է 2017թ. սեպտեմբերի 21-ին) հրապարակված չէր 2016թ. «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուն: Այդ իսկ պատճառով, 2016թ.ն երկրաբանական ուսումնասիրության նպատակով կատարված ընդերքօգտագործման աշխատանքների արժեքի մասին պաշտոնական տվյալներ դեռևս չկան:

Աղյուսակ 18. Երկրաբանական աշխատանքներն ըստ բնագավառների և ըստ աշխատափուլերի, 2016թ., հազ. Դրամ | Geological works by spheres and work stages, 2016, thsd. drams

Բնագավառը Sphere	Ընդամենը Total	այդ թվում՝ ըստ փուլերի of which by stages			
	որոնողական prospecting	նախնական հետախուզական preliminary investigation	մանրակրկիտ հետախուզական detailed investigation	այլ աշխատանքներ other works	
Գունավոր մետաղներ Non-ferrous metals	21 346.8	21 346.8	-	-	-
Ազնիվ մետաղներ Noble metals	472 846.3	225 887.5	246 958.8	-	-
Ոչ մետաղներ Non-metals	4 200.0	-	-	1 945.0	2 255.0
Տարածաշրջանային երկրաբանական, երկրաֆիզիկական, հիդրոերկրաբանական աշխատանքներ Regional geological, geophysical, hydrogeological works	4 475.2	4 475.2	-	-	-
Հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական աշխատանքներ	280.0	-	-	280.0	-

Hydrogeological and geological engineering works					
Այլ աշխատանքներ Other works	40 243.9	20 750.9	-	700.0	18 793.0
Երկրաբանական ուսումնասիրությունների ընդհանուր ծավալը Total volume of works	543 392.2	272 460.4	246 958.8	2 925.0	21 048.0

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Աղյուսակ 19. Երկրաբանական աշխատանքների ծավալն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2012-2016թթ., մլն. դրամ | Volume of geological works by financing sources, 2012-2016, mln. drams

	2012	2013	2014	2015	2016
Պետական բյուջեի հաշվին At the expenses of state budget	-	-	-	-	-
Արտաբյուջետային միջոցների հաշվին At the expenses of extra-budget	153.7	125.0	1 332.7	717.8	543.4
Ընդամենը Total	153.7	125.0	1 332.7	717.8	543.4

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Աղյուսակ 20. Երկրաբանահետախուզական աշխատանքներն ըստ տեսակների, 2012-2016թթ. | Geological exploration works by types, 2012-2016

		2012	2013	2014	2015	2016
Մեխանիկական հորատում, մ Mechanical drilling, m	ընդամենը total	-	-	9 481.0	5 995.0	4 302.8
	սյունակային core	-	-	9 381.0	5 920.0	4 302.8
	ոչ սյունակային non-core	-	-	100.0	-	-
	հարվածապտտողական rotary –percussion drill	-	-	-	75.0	-
Լեռնային վերգետնյա փորվածքներ Overhead mountainous excavations	առու, խրամատ, մաքրում, խոր. մ gutter, trench, cleaning, cub.m	-	-	8 636.0	11 416.0	3 392.0
	հետախուզահորեր մինչև 5 մ խորության, քառ. մ prospective boring-wells below 5 m of depth, sq. m	-	-	66.0	79.0	-
Երկրաբանական հանույթ, քառ. կմ Geological mining, sq. km		-	-	44.0	32.0	14.0
Երկրաքիմիական հանույթ, քառ. կմ Geochemical mining, sq. km		-	-	75.0	12.0	4.5
Երկրաֆիզիկական հանույթ, քառ. կմ Geophysical mining, sq. km	ընդամենը total	-	-	74.0	10.0	3.0
	Էլեկտրահետախուզում electrical exploration	-	-	2.0	2.0	-
	ծանրաչափական և մագնիսական հետախուզում gravity and magnetic exploration	-	-	72.0	8.0	3.0
Հիդրոերկրաբանական և ճարտարագիտաերկրաբանական հանույթ, քառ. կմ Hydrogeological and geological engineering mining, sq. km		-	-	3.0	1.0	-
Տարածաշրջանային աշխատանքներ, հազ. դրամ Regional works, thsd. drams	ընդամենը total	-	-	356 175.0	112 628.0	158 823.2
	երկրաբանական geological	-	-	352 050.0	105 428.0	157 066.2
	հիդրոերկրաբանական և ճարտարագիտաերկրաբանական hydrogeological and geological engineering	-	-	-	7 200.0	-
	երկրաֆիզիկական geophysical	-	-	4 125.0	-	1 757.0

Անձնակազմի և բեռների տեղափոխում, հազ. դրամ Transportation of personnel and cargo, thsd. drams	-	-	22 713.0	15 927.0	15 054.9
Լաբորատոր աշխատանքներ, հազ. դրամ Laboratory work, thsd. drams	68 338.5	110 146.7	106 806.0	104 292.0	20 604.5
Աշխատանոցային աշխատանքներ (տեղերում քարտեզների կազմում, ձևավորում և այլն), հազ. դրամ Field work (map compilation, design and other), thsd. drams	85 375.0	14 850.0	350 372.0	48 472.0	63 227.6
Բարելավում, հազ. դրամ Improvement, thsd. drams	-	-	69 564.0	3 328.0	12 118.0
Ժամանակավոր շինություններ, հազ. դրամ Temporary buildings, thsd. drams	-	-	34 600.0	170.0	4 316.4
Այլ աշխատանքներ, հազ. դրամ Other works, thsd. drams	-	-	125 748.0	232 889.0	154 066.6

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Աղյուսակ 21. Երկրաբանական աշխատանքներն ըստ աշխատափուլերի, 2012-2016թթ., մլն. դրամ | Geological works by work stages, 2012-2016, mln. drams

	2012	2013	2014	2015	2016
Որոնողական Prospecting works	-	-	116.4	138.1	272.5
Որոնողա-գնահատողական investigative-evaluative	-	-	-	202.3	-
Նախնական հետախուզական Preliminary investigation	-	-	310.9	143.8	247.0
Մանրակրկիտ հետախուզական Detailed investigation	-	-	826.0	132.1	2.9
Այլ աշխատանքներ Other works	-	-	79.4	101.5	21.0
Ընդամենը Total	-	-	1 332.7	717.8	543.4

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Աղյուսակ 22. Կատարված հորատման աշխատանքներն ըստ հորատանցքերի խորության, 2012-2016թթ. | Implemented drilling works by depth of boring – wells, 2012-2016

	2012	2013	2014	2015	2016
Ավարտված հորատանցքերի գումարային խորությունը, մ Total depth of finished boring - wells, m	-	-	9 482	6 578	4 302.8
Հորատված հորատանցքերի քանակը, միավոր Quantity of drilled boring-wells, unit	-	-	72	103	24
այդ թվում՝ ըստ խորության of which: by depth					
մինչև 25 մ below 25 m	-	-	8	29	-
25 – 100 մ 25 – 100 m	-	-	16	59	2
101 – 200 մ 101 – 200 m	-	-	41	13	15
201 – 300 մ 201 – 300 m	-	-	4	2	4
501 – 1200 մ 501 – 1200 m	-	-	3	-	3
Ավարտված հորատանցքերի միջին խորությունը, մ Average depth of finished boring wells, m	-	-	131.7	63.9	179.3

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Երկրաբանական ուսումնասիրության նշանակալի աշխատանքներ

Իրականացվող աշխատանքները համակարգված եղանակով չեն դասակարգվում «խոշոր» կամ «նշանակալի» խմբերում: Ընդերքօգտագործման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության՝ վերը նշված բոլոր աղբյուրներում պարզապես թվարկված են տրված թույլտվությունները՝ առանց որակելու դրանք որպես «խոշոր» կամ «նշանակալի», ինչպես նաև ներկայացված չէ՝ արդյո՞ք աշխատանքներն ակտիվ են, թե ոչ: Երկրաբանական ուսումնասիրությունները խոշոր կամ նշանակալի որակելու համար ԲՇԽ-ն պետք է սահմանի չափանիշներ³², չնայած ԲՇԽ-ի անդամների կողմից հնչել են կարծիքներ, որ առհասարակ նպատակահարմար չէ նման դասակարգում կիրառելը: Հարկ է նկատել, որ Համաշխարհային բանկի³³ կողմից վերջերս կատարված վերլուծական աշխատանքում ևս ընդերքօգտագործման ծրագրերը դասակարգված չեն որպես «խոշոր» կամ «նշանակալի»: Սակայն դա տալիս է երկրում իրականացվող ընդերքօգտագործման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը: Զեկույցում ասված է.

- Վերջին ժամանակներս Հայաստանում մասնավոր հատվածի կողմից նոր պաշարների որոնման աշխատանքներ շատ քիչ են տարվել, իսկ ընթացիկ հետախուզական աշխատանքները գլխավորապես ուղղված են նախկինում իրականացված հետախուզական աշխատանքների շնորհիվ հայտնաբերված պաշարների զարգացմանը:
- Ընդհանուր տարածքը, որի համար տրված են երկրաբանական ուսումնասիրության թույլտվություններ, կազմում է Հայաստանի հողերի մոտ 5%-ը³⁴:

Ինչպես նշվեց՝ ընկերությունների ցուցակը, որոնց տրվել է երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու նպատակով թույլտվություններ, ներկայացված են հավելված 9-ում:

³² Չափանիշ կարող է լինել տրված ընդերքօգտագործման տեղամասի մեծությունը, աշխատանքային նախագծով նախատեսված ծախսերը, ընկերության՝ 1000 խոշոր հարկատուների շարքում լինելու հանգամանքը և այլն:

³³ Համաշխարհային բանկ, «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում» (2016թ.)

³⁴ Ինչ վերաբերում է ոչ մետաղական օգտակար հանածոներին և կիսաթանկարժեք քարերին, ապա 2015թ. դեկտեմբերի դրությամբ տրվել է 21 թույլտվություն, այդ թվում՝ օպալիտի, նեֆելինի, դիատոմիտի, հասպիսի, կրաքարի, ավազի, կոպիճի, բազալտի, տուֆի, ավազաքարի, պեմզայի, տրավերտինի, բրեկչիայի և կավի պաշարների հայտնաբերմանն ուղղված երկրաբանական աշխատանքների ուսումնասիրության համար:

7.3. Օգտակար հանաժոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թույլտվություններ

Արդյունահանման թույլտվությունները փաստաթղթավորված են հանրությանը հասանելի՝ վերը նշված կայքերում, որտեղ ներկայացված են երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունները³⁵: Բոլոր ակտիվ մետաղական հանքերը, որոնց շահագործման համար տրամադրվել են արդյունահանման թույլտվություններ, նշված են ստորև՝ 7.8 Բաժնում «Պոտենցիալ հաշվետու ընկերությունների ցուցակում»:

7.4. Արտադրության տվյալներ

Արտադրության տվյալները առկա են ազգային և մարզային տարանջատմամբ (աղյուսակ 23): ՀՀ ԷԵԲՊՆ-ն ևս ամենամսյա կտրվածքով արդյունահանման/արտադրության մասով տվյալներ է ստանում հանքարդյունաբերական ընկերություններից, թեև այս տեղեկատվությունը ԷԵԲՊՆ-ն չի հրապարակում հանրության համար: Այս տեղեկատվությունն օգտագործվում է օգտակար հանածոների պաշարների համապետական հաշվարկ կատարելու, ինչպես նաև պայմանագրային դրույթների կատարումը ստուգելու համար (տե՛ս Բնապահպանության և ընդերքի տեսչության բաժինը՝ ստորև):

Աղյուսակ 23. Արդյունաբերականության արտադրության տվյալների զեկուցիչներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, ըստ մարզերի և ք. Երևանի

Մակարդակը	Ազգային տնտեսություն և մարզեր (ք. Երևան)
Պարբերականությունը	Եռամսյակային
Հրապարակման ժամանակը	Եռամսյակը հաջորդող ամսում
Լեզուն	Հայերեն
Աղբյուրը	http://armstat.am/am/?nid=82&id=1739
Գործունեության տեսակ	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում
	Մետաղական հանքաքարի արդյունահանում
Indicators	Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր
	1. Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը համադրելի գներով /հազար դրամ առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի
	2. Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը ընթացիկ գներով /հազար դրամ առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի
	3. Պատրաստի արտադրանքի իրացումը համապատասխան տարվա ընթացիկ գներով / հազար դրամ/ առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի)
	3ա. ԱՊՀ երկրներում
	3բ. Այլ երկրներում
	Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը /մարդ/ լրացվում են եռամսյակային կտրվածքով)
4. Աշխատանքի արտադրողականությունը /դրամ/ լրացվում են եռամսյակային կտրվածքով եռամսյակային	

³⁵ Սակայն հրապարակվում են միայն ժամկետներ, համար և ընկերություն:

7.5. Արտահանման տվյալներ

Ոլորտի արտահանման տվյալներ առկա են ազգային մակարդակով: Մարզային և ծրագրային տարանջատմամբ արտահանման տվյալները, սակայն, հանրության համար հասանելի չեն: Ազգային մակարդակով՝ հանքագործական արդյունաբերության ոլորտի արտահանման ծավալները դրամական և բնեղեն արտահայտությամբ հաշվարկվում են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից և հրապարակվում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից: Սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին հետևյալ երեք ժողովածուներում հրապարակվում են նախորդ տարվա տվյալները.

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման, Վիճակագրական ժողովածու - <http://armstat.am/am/?nid=82&id=1825>
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 4-նիշ դասակարգման, Վիճակագրական ժողովածու - <http://armstat.am/am/?nid=82&id=1806>
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10-նիշ դասակարգման, Վիճակագրական ժողովածու - http://armstat.am/file/article/f._t-2015-10-nish-00.pdf:

Աղյուսակ 24-ում ամփոփված է 10-նիշ դասակարգմամբ զեկուցված վիճակագրությունը:

Աղյուսակ 24. Օգտակար հանածոների և մետաղների արտահանման ընդհանուր ծավալները և արժեքներն ԱՄՆ դոլարով (մետաղները՝ 10-նիշ դասակարգմամբ)

Տարի	2011		2012		2013		2014		2015		2016	
	տոննա	ԱՄՆ դոլար	տոննա	ԱՄՆ դոլար	տոննա	ԱՄՆ դոլար	տոննա	ԱՄՆ դոլար	տոննա	ԱՄՆ դոլար	տոննա	ԱՄՆ դոլար
Ընդհանուր արտահանման %												
ԸՆԴԱՄԵՆԸ՝ որից	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
V. Օգտակար հանածոների արդյունահանում, որից՝	44.9	30.3	44.2	29.2	56.0	27.5	48.5	24.9	55.6	32.1	44.4	26.3
Մետաղական հանքաքար, մետաղախարամ և մոխիր՝ որից	18.4	21.5	18.7	20.2	24.9	20.5	32.7	18.8	41.8	24.6	40.0	22.4
Երկաթի հանքաքար և խտանյութ, մանրատած երկաթի պիրիտ	0.0033	0.0000	0.0002	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000
Պղնձի հանքաքար և խտանյութ	15.9	19.5	15.8	16.5	22.4	18.9	29.3	15.2	39.0	21.3	38.5	19.9
Կապարի հանքաքար և խտանյութ	0.0000	0.0000	0.0105	0.0121	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0	0.0
Տինկի հանքաքար և խտանյութ	2.0	1.0	2.1	1.3	2.3	1.1	2.3	0.9	1.8	0.8	0.9	0.5
Մոլիբդենային հանքաքար և խտանյութ	0.1	0.8	0.1	0.6	0.1	0.4	0.1	0.6	0.1	0.4	0.02	0.1
Նիոբիումի, տանտանի, վանադիումի կամ ցիրկոնիումի հանքաքար և խտանյութ	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0063	0.0027	0.0000	0.0000	0.0000	0.0000
Տիտանիումի հանքաքար և խտանյութ	0.3366	0.1266	0.2619	0.0468	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000
Թանկարժեք մետաղների հանքաքար և խտանյութ	0.0	0.0	0.4	1.8	0.0	0.0	0.9	2.1	0.8	2.1	0.6	1.9
Այլ հանքաքար և խտանյութ	0.0010	0.0001	0.0006	0.0001	0.0001	0.0000	0.0016	0.0000	0.0000	0.0000	0.0001	0.000003

Աղբյուրը՝ http://armstat.am/file/article/f_t-2015-10-nish-00.pdf, http://armstat.am/file/article/f_t-2016-10-nish-5.pdf

Հանքարդյունաբերության շղթայի երկրորդ օղակի (մշակող արդյունաբերության) արտահանման տվյալներ

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտը համեմատաբար փոքր մասնաբաժին ունի Հայաստանի ՀՆԱ-ի կազմում, ընդամենը 2015 ՀՆԱ-ի 2.1%-ը և 2016 ՀՆԱ-ի 2.6%-ը (տես՝ աղյուսակ 11), սակայն արտահանման մասնաբաժինը համեմատաբար նշանակալի է: Այստեղ արժե հիշատակել, որ «մետաղական հանքաքար» դասակարգումը ներառում է խտանյութը, հետագա վերամշակում անցած մետաղների արտահանումն այստեղ ներառված չէ: Այս ցուցանիշները կարելի է գտնել ԱՎԾ արտահանման տվյալների շարքում:

Ներկա պահին Հայաստանում գործում է առնվազն չորս վերամշակող գործարան. Մաքուր երկաթի գործարանը Երևանում արտադրում է մոլիբդեն և ֆերոմոլիբդեն, Արմենիան մոլիբդեն փրոդաքշըն գործարանը Երևանում արտադրում է ֆերոմոլիբդեն, Ալավերդու պղնձաձուլարանն արտադրում է պղինձ, իսկ Արարատի ոսկու կորզման գործարանը (ԳեոՊրոՄայնինգ Գոլդ ՍՊԸ)՝ ոսկի: Արտահանման վիճակագրությունը տարանջատված չէ ըստ ընկերությունների, և մենք տեղյակ չենք որևէ այլ նշանակալի նախաձեռնության մասին, որը կարող է արտահանման մեծ ծավալ ապահովել: 2015թ.ն համապատասխան մաքուր մետաղների արտահանման և ներմուծման վիճակագրական տվյալները բերված են աղյուսակ 25-ում:

Աղյուսակ 25. Ընտրված մետաղների արտահանման և ներմուծման արժեքը (2015թ.)

Մետաղներ (ԱՎԾ դասակարգում)	Արտահանում (ԱՄՆ դոլար)	Ներմուծում (ԱՄՆ դոլար)
Մոլիբդեն և դրանից պատրաստված իրեր, այդ թվում՝ թափոններ կամ մնացորդներ	11,131,414	1,219
Ֆեռո-խառնուրդներ	55,507,997	6,359,479
Պղինձ, պղնձի խառնուրդներ, թափոններ կամ մնացորդներ	6,252,970	166
Չվերամշակված պղինձ, պղնձի անոդներ, էլեկտրոլիտիկ վերամշակում	65,539,160	2438
Ոսկի, չմշակված, կիսապատրաստի արտադրանք, փոշու ձև	96,941,809	23,269,289

Աղբյուրը՝ <http://www.armstat.am/en/?nid=148&thid%5B%5D=7404&years%5B%5D=2015&year%5B%5D=2015&submit=Search> Նշումներ.

- «Ֆեռո-խառնուրդները» կոնկրետ չէ, սակայն, բացի ֆեռոմոլիբդենից, մենք տեղյակ չենք որևէ այլ ֆեռո-խառնուրդից, որը կարող է ապահովել 55 միլիոն ԱՄՆ դոլար արտահանման արժեք:
- «Չվերամշակված պղինձ, պղնձի խառնուրդներ, էլեկտրոլիտիկ վերամշակում»։ մենք ենթադրում ենք, որ Ալավերդու պղնձաձուլարանի արտադրանքն այս խմբի մեջ է, քանի որ այն չի հանդիսանում «հանքաքար և խտանյութ» կամ «թափոն կամ մնացորդ» [Եթե թարգմանությունը ճիշտ է, ապա անմշակ «պղինձը, պղնձի խառնուրդը, թափոնները կամ մնացորդները» կարելի է հանել]
- «Ոսկի, չմշակված, կիսապատրաստի արտադրանք, փոշու ձև»։ բավականին նշանակալի է արտահանման ծավալը, որը, ինչպես ենթադրում են, ոսկերչական իրերի ոլորտում է: Հնարավոր է, որ որոշակի արժեք է ավելացվում և ոսկերչական իրերն այնուհետ վերաարտահանվում են որպես կիսապատրաստի արտադրանք, սակայն հնարավոր է թվում, որ արտահանման կորիզն այս գծով կազմում է Արարատի ոսկու կորզման գործարանի արտադրանքը:

Աղյուսակ 26ա. Հանքահումքի արտահանման ցուցանիշները 2015թ.

Ապրանքային բաժնի, խմբի, ենթախմբի անվանումը և ապրանքի 10-նիշ ծածկագիրը	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ-2015				
	քաշը, տոննա	արժեքը, դոլար	ԱՄՆ	քաշը, %	արժեքը, %

Ընդամենը (ներառյալ՝ ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտուրը)	791923.0	1485331877.0	100.0	100.0
V. Հանքահումքային արտադրանք	439985.7	476902920	55.6	32.1
Հանքաքարեր, խարամներ և մոխիր	330777.7	365981584	41.8	24.6
Պղնձի հանքաքար, խտանյութ	309183.7	316635817	39.0	21.3
Ցինկի հանքաքար, խտանյութ	14137.2	12021210	1.8	0.8
Քրոմի հանքաքար, խտանյութ	-	-		
Վոլֆրամի հանքաքար, խտանյութ	-	-		
Մոլիբդենի հանքաքար, խտանյութ	959.7	5762644	0.1	0.4
Թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութ	6497	31561872	0.8	2.1
Այլ հանքաքար, խտանյութ	0.1	40	0.0	0.0

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Աղյուսակ 26բ. Հանքահումքի արտահանման ցուցանիշները 2016թ.

Ապրանքային բաժնի, խմբի, ենթախմբի անվանումը և ապրանքի 10-նիշ ծածկագիրը	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ - 2016			
	քաշը, տոննա	արժեքը, դոլար	ԱՄՆ	արժեքը, %
Ընդամենը (ներառյալ՝ ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտուրը)	1031804	1791723680	100.0	100.0
V. Հանքահումքային արտադրանք	458555	471124377	44.4	26.3
Հանքաքարեր, խարամներ և մոխիր	413178	400501526	40.0	22.4
Պղնձի հանքաքար, խտանյութ	397207.1	356721080	38.5	19.9
Ցինկի հանքաքար, խտանյութ	9256.1	9617132	0.9	0.5
Մոլիբդենի հանքաքար, խտանյութ	210.4	938396	0.0	0.1
Տանտալի, վանադիումի, ցիրկոնի հանքաքար, խտանյութ	-	-	-	-
Թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութ	6062.1	33171842	0.6	1.9
Այլ հանքաքար, խտանյութ	0.7	55	0.0	0.0

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

7.6. Վիճակագրական տվյալների վերաբերյալ մեթոդաբանական դիտարկումներ

Վիճակագրական տվյալների հիմքում գերազանցապես ընկած են ընդերքօգտագործողների կողմից ներկայացված թվերը: Հայտարարված մորատորիումի ընթացքում³⁶ համակարգային ստուգումների բացակայությունը, ըստ էության, հնարավորություն չստեղծեց բավարար կերպով ստուգաճշտելու ընդերքօգտագործողների կողմից ներկայացված տվյալները: Մյուս կողմից, առկա են բազմաթիվ հաշվետվությունների տեսակներ, սակայն բացակայում է դրանցում

³⁶ Տեսչական ստուգումների հաճախականության հիմքում ընկած է ռիսկայնության աստիճանը: ՀՀ կառավարության վարչարարական գործընթացները կրճատելու և գործարարությանը զբաղվելու խոչընդոտները կրճատելու քաղաքականության շրջանակներում 2015 թվականի օգոստոսից սկսած պլանավորված տեսչական ստուգումները կասեցվել էին: 2015 թվականի օգոստոսից մինչև 2017 թվականի հուլիսը հանքարդյունաբերության ոլորտում պլանավորված տեսչական ստուգումներ կարող էին իրականացնել միայն հարկային և մաքսային տեսչությունները:

առկա տվյալների պարբերական համադրումը և հրապարակումը: Ստորև ներկայացվում են ՀՀ ԱՎԾ պետական վիճակագրական հաշվետվության ձևեր.

Ա) ՀՀ ԱՎԾ ներկայացնում է էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը

1. «Օգտակար հանածոների հարստացման, մետաղագործական վերափոխման, մակաբացված ապարների և արտադրական լցակույտերի համալիր օգտագործման մասին» ձև 71–ՏԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվություն
2. «Օգտակար հանածոների կորզումն արդյունահանման ժամանակ» ձև 70–ՏԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվություն
3. «Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» ձև 01-ԵՈւ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվություն

Բ) ՀՀ ԱՎԾ ներկայացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը

1. <<Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին>> Ձև N 1-թափոն (տարեկան) ամփոփ պետական վիճակագրական հաշվետվություն (*Հաշվետվությունը ներկայացվում է. առանձին՝ ըստ հանրապետության, մարզերի, քաղաքների և ամփոփ՝ ըստ գյուղական համայնքների*):
2. <<Ջրօգտագործման մասին>> Ձև N 2–ՏԱ (ՋՐՏՆՏ) (ՏԱՐԵԿԱՆ) ամփոփ պետական վիճակագրական հաշվետվություն
3. <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> Ձև N 1-ԲԱՎ (ՏԱՐԵԿԱՆ) ամփոփ պետական վիճակագրական հաշվետվություն (*Հաշվետվությունը ներկայացվում է. առանձին՝ ըստ հանրապետության, մարզերի, քաղաքների և ամփոփ՝ ըստ գյուղական համայնքների*):
4. <<Բնապահպանության և բնական պաշարների արդյունավետ օգտագործման պետական վերահսկողության մասին>> Ձև N 1-ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ (կիսամյակային) ամփոփ պետական վիճակագրական հաշվետվություն
5. <<Օգտակար հանածոների պաշարների հաշվետու հաշվեկշռի մասին>> Ձև N 5-ԵՀ (ՏԱՐԵԿԱՆ) ամփոփ պետական վիճակագրական տարեկան հաշվետվություն

Գ) ՀՀ ԱՎԾ ներկայացնում են առևտրային կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը

1. «Հանքային ջրերի արդյունահանման և օգտագործման մասին» Ձև 1-ՀԱՆՔՁՈՒՐ (ՏԱՐԵԿԱՆ) պետական վիճակագրական հաշվետվություն
2. <<Բնապահպանության ընթացիկ ծախսերի մասին>> ՁեՎ N 4-ՄՊ (ՏԱՐԵԿԱՆ) պետական վիճակագրական հաշվետվություն (*Հաշվետվությունը կազմում են այն իրավաբանական անձինք, հիմնարկները, անհատ ձեռնարկատերերը (որոնք ունեն մաքրող կայանքներ կամ իրականացնում են բնապահպանական միջոցառումներ)*):
3. «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» (ՁեՎ ԹԻՎ 1-ԱՐՏ (ԱՄՍԱԿԱՆ, ՏԱՐԵԿԱՆ)) պետական վիճակագրական հաշվետվություն (*Հաշվետվությունները ներկայացնում են իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ կազմակերպություններ)*):

Վերը նշված հաշվետվությունները, ըստ էության, չեն ենթարկվում համապարփակ վերլուծության, ինչը հնարավորություն կտար բացահայտել առանձին անճշտություններ և հակասություններ: Այս առումով, հարկ է ուժեղացնել պետական կառավարման մարմինների վարչական վիճակագրության վարելու կարողությունները:

Վերջապես, առանձին ուղղություններով բացակայում են տվյալներ: Անհրաժեշտ է հրապարակել արտադրության և արդյունահանման ծավալները, մարված պաշարների վերաբերյալ տվյալները, ինչպես նաև պոչամբար լցված (մթնոլորտ արտանետված) նյութերի քանակը՝ հիմնվելով ընկերությունների ներկայացրած ամենամսյա հաշվետվությունների, տեսչական ստուգումների արդյունքների և իրավասու մարմինների իրականացրած մոնիթորինգի տվյալների վրա: Դա անհրաժեշտ է ոլորտի պատշաճ կառավարումը ապահովելու, մասնավորապես ընկերությունների կողմից ընդերքօգտագործման պայմանագրերի շրջանակներում արտադրության իրական ծավալների թափանցիկությունը վերահսկելու, արդյունահանման ներկայացված ծավալները արտահանման ծավալների հետ համադրելու նպատակով:

8. Նվազագույն պահանջների գերազանցում

8.1. Պայմանագրերի հրապարակային բացահայտումը

Ստանդարտի 2.4.ա պահանջը սահմանում է, որ *խրախուսվում է հրականացնող պետությունների կողմից այն բոլոր պայմանագրերի և լիցենզիաների մասին տեղեկատվության հրապարակային բացահայտումը, որոնցով սահմանվում են նավթի, գազի և օգտակար հանածոների արդյունահանմանն առնչվող պայմանները*: Ըստ այդմ, պայմանագրերի բովանդակության հրապարակային բացահայտումը պարտադիր պահանջ է: Այնուամենայնիվ, մի շարք պատճառներ կան, թե ինչու է անհրաժեշտ պայմանագրերի բացահայտումը.

- պայմանագրերի թափանցիկությունը թույլ է տալիս հանրության համար հրապարակել, թե ընկերությունները որքան պետք է վճարեն,
- թույլ է տալիս ազդակիր համայնքներին պարզել ընկերության պայմանագրային պարտավորությունները սոցիալական և տնտեսական ծախսերի մասով և, հետևաբար, եզրակացնել՝ արդյո՞ք ընկերությունը կատարել է իր պարտավորությունները, թե ոչ,
- թույլ է տալիս քաղաքացիական հասարակությանը գնահատել, թե ընկերությունը որքանով է կատարում իր ներդրումային պարտավորությունները,
- ազդանշան է ուղարկում շահեկիցներին առ այն, որ կառավարությունը խրախուսում է այս ոլորտում առավելագույն թափանցիկության ապահովումը:

Եթե պայմանագրում կամ դրա հավելվածներում առկա է գաղտնի տեղեկություն, հնարավոր է դիտարկել պայմանագրի հրապարակումը համապատասխան հատվածի տարանջատմամբ: Պայմանագրերի հրապարակման հետ կապված խնդիրները կլուծվեն ԱՃԹՆ ստանդարտների կիրառման շրջանակում մշակված օրենսդրական առաջարկների ընդունմամբ:

8.2. ԱՃԹՆ-ի Հայաստանյան գործընթացի հետագա ընդլայնում

Թեև ավանդաբար ԱՃԹՆ-ի ստանդարտի կենտրոնում եղել են նավթի, գազի և հանքարդյունաբերության ճյուղերը, որոշ երկրներ առավել լայն են դիտարկել արդյունահանող ոլորտները: Օրինակ՝ Տանզանիան ներառում է անտառային, իսկ Տաջիկստանը՝ էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտը: Հայաստանի պարագայում ԲՇԽ-ն, այս ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքները հաստատելիս խնդրել է դիտարկել զեկույցի պարտադիր շրջանակն ընդլայնելու հարցը այլ ոլորտներից ստացվող եկամուտները ևս ներառելու նպատակով: Հաշվի առնելով եկամտային հոսքերի, ինչպես նաև բնապահպանական խնդիրների մասով թափանցիկության բարձրացման օգտավետությունը՝ ցանկալի է հետագա տարիներին դիտարկել ջրային և անտառային ոլորտներն ընդգրկելու հարցը: Ջրային ոլորտը գնահատելիս հարկ է ուշադրություն դարձնել այնպիսի հարցերի, ինչպիսիք են հանքային ջրերի կորզումը, ստորգետնյա ջրերի օգտագործումը՝ գյուղատնտեսական և ձկնաբուծության ոլորտում և հիդրոէլեկտրակայանների շահագործումը:

8.3. Կամավոր (ոչ պայմանագրային և ոչ օրենքի ուժով պարտադիր) բարեգործական վճարումների բացահայտումը

ԱՃԹՆ ստանդարտը նախատեսում է միայն պարտադիր պայմանագրային սոցիալ-տնտեսական միջոցառումների կատարման բացահայտումը: Ինչպես ԲՇԽ որոշմամբ, այնպես էլ ԱՃԹՆ ստանդարտի կիրառման նպատակով առաջարկվող օրենսդրական փոփոխությունների շրջանակներում ընկերությունները պարտավոր են հրապարակել իրենց կողմից հիմնադրամներին և հասարակական կազմակերպություններին կատարված կամավոր վճարումները՝ նշելով դրանց չափը և նպատակը, իսկ ֆիզիկական անձանց պարագայում՝ հրապարակել անձանց քանակը և իրենց վճարված ընդհանուր գումարը, առանց անձը նույնացնող տվյալների հրապարակման: Մանրամասների համար տես՝ ուսումնասիրության 6.12 բաժինը:

9. Հաշվետվողականությանը խոչընդոտող գործոններ

Այս բաժնում ամփոփ ներկայացված են այն հարցերը, որոնք կարող են պարունակել իրավական կամ ինստիտուցիոնալ խոչընդոտներ, մասնավորապես՝

- ԱՃԹՆ-ի ստանդարտի լիարժեք կատարման խոչընդոտներ,
- ԲՇԽ-ի հետ քննարկված ուղղություններում թափանցիկության ավելի բարձր աստիճանի ապահովմանը խոչընդոտներ:

Հիմնական խոչընդոտները վերաբերում են պայմանագրերին, թույլտվություններին, եկամուտների և վճարումների բնագավառներին:

Պայմանագրեր

Խնդիր. ներկայումս պայմանագրերը չեն հրապարակվում, ինչպես նաև հնարավոր է նրանք չտրամադրվեն անկախ ադմինիստրատորին:

Լուծում. Անհրաժեշտ է ՀՀ ԸՕ-ում կատարել փոփոխություն, որը կպարտավորեցնի լիազոր մարմնին (ԷԵԲՊՆ) և ընկերություններին՝ պայմանագրերը տրամադրել անկախ ադմինիստրատորին կամ, որպես ընդլայնված թափանցիկության նախաձեռնություն, հրապարակել պայմանագրերը: Կառավարությունը առնվազն պետք է մշակի պայմանագրերի բացահայտման քաղաքականություն նախքան 2019թ. սեպտեմբերի վավերացման վերջնաժամկետը:

Թույլտվություններ

Խնդիր. ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջ է հանրությանը հասանելի գրանցամատյան ունենալը, որը կպարունակի հետևյալ տեղեկությունները.

- թույլտվության իրավատիրոջ անունը,
- թույլտվության առարկա հանդիսացող տարածքի կոորդինատները,
- թույլտվության դիմելու ամսաթիվը,
- թույլտվության տրման ամսաթիվը,
- թույլտվության գործողության ժամկետը,
- արտադրական գործունեության թույլտվությունների պարագայում՝ արտադրվող արտադրատեսակը:

Լուծում. Անհրաժեշտ է ՀՀ ԸՕ-ում կատարել փոփոխություն, որը կպարտավորեցնի լիազոր մարմնին (ԷԵԲՊՆ)՝ տրամադրել այս տեղեկատվությունը անկախ ադմինիստրատորին կամ, որպես ընդլայնված թափանցիկության նախաձեռնություն, հրապարակել այն:

Եկամուտներ

Այստեղ կարելի է առանձնացնել հետևյալ խնդիրները.

- ՊԵԿ-ը ներկայումս չի հրապարակում ԱՃԹՆ ստանդարտով նախատեսված բոլոր ապագրեգացված տվյալները, որոնք ստացվում են հանքարդյունաբերական ընկերություններից: Ներկայումս առկա տվյալները միայն սահմանափակ թվով ընկերությունների մասով են, որոնք առաջին 1000 խոշոր հարկատուների խմբում են, և տվյալներն ապագրեգացված չեն ըստ առանձին եկամտատեսակների և ծրագրերի (երբ ընկերությունը ունի ավելի քան մեկ հանք կամ գործառնություն),

- Տեղական ինքնակառավարման մարմինները ներկայումս չեն հրապարակում տեղական հարկատուներից ստացվող իրենց եկամուտների մասով ապագրեգացված տվյալներ: Հնարավոր չէ հավաստիանալ, թե որքան է հանքարդյունաբերողը վճարել, օրինակ՝ հողի հարկ, գույքահարկ կամ հողի վարձակալության վճար:

Լուծում. Ըստ ծրագրի/նախագծի ապագրեգացումը հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե համապատասխան ընկերությունները կարողանան ներկայացնել առանձին ֆինանսական հաշվետվություն յուրաքանչյուր ծրագրի համար, քանի որ ներկայումս ՊԵԿ-ը այդ տեղեկատվությունը չունի: Առաջարկվում է՝ հարցը շարադրել որպես անկախ ադմինիստրատորին տվյալներ ներկայացնելու պահանջ կամ ավելի բարձր թափանցիկության ապահովելու նպատակով որպես տվյալների ամբողջական հրապարակման պահանջ:

Վճարումներ

Խնդիրներ. Ընկերությունների մասով կան մտահոգություններ առ այն, որ ոչ բոլոր հանքարդյունաբերող ընկերություններն են, որ կամավոր հիմունքներով ամբողջական տվյալներ կներկայացնեն անկախ ադմինիստրատորին: Ավելին, ներկայումս, մեկից ավելի ծրագիր իրականացնող ընկերությունների համար սահմանված չէ ՊԵԿ ապագրեգացված (այն է՝ ըստ ծրագրերի) տվյալներ ներկայացնելու պահանջ:

Լուծում. անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություններ (<< ընդերքի մասին օրենսգիրք, հարկային օրենսդրություն): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ ծրագրերի հաշվետվություններ ներկայացնելը հանդիսանում է ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջ (ստանդարտի 4.7-րդ պահանջ. Ապագրեգացման աստիճան)՝ ԲՇԽ-ին խորհուրդ է տրվում քննարկել այդ պահանջը ներդնելու հարցը³⁷:

³⁷ Անհրաժեշտ է նշել, որ, չնայած ստանդարտը խրախուսում է ըստ ծրագրերի եկամտային հոսքերի ներկայացումը, սակայն այն չի պարտավորեցնում երկրին հակասությունների դեպքում փոփոխել երկրի հարկային կամ բյուջետային համակարգերը: Քարտուղարությունն էլ չի խրախուսում հատուկ դրա համար փոփոխություն անել օրենքում

10. Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի խթանում

ԱՃԹՆ-ի շրջանակներում ՀԱՀ ՊՀԿ-ն սույն ուսումնասիրությանը զուգահեռ մշակում է նաև պատասխանատու հանքարդյունաբերության նախնական ճանապարհային քարտեզը, որը կներկայացվի ԲՇԽ-ի հաստատմանը: Ճանապարհային քարտեզում դիտարկվում են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ոլորտի նպաստը կայուն զարգացմանը և թե որքանով են հրապարակված տվյալները թույլ տալիս գնահատելու այդ նպաստը,
- իրականացնել վերլուծություններ հետևյալ ուղղություններով.
 - ա. հանքարդյունաբերական ծրագրերի «ծախս-օգուտ» վերլուծություն,
 - բ. ՇՄԱԳ գործընթացը Հայաստանի Հանրապետությունում (հաշվետվության պատրաստման որակը, վերանայումների կարգը և որակը),
 - գ. շրջակա միջավայրի, համայնքի անդամների առողջության և աշխատավայրի անվտանգության տեսանկյունից մոնիթորինգ:

Առաջարկվում է, որպեսզի ԲՇԽ-ն, պատասխանատու հանքարդյունաբերության նախնական ճանապարհային քարտեզը ուսումնասիրելիս, դիտարկի, թե որ հարցերը պետք է ներառվեն ԱՃԹՆ-ի առաջին զեկույցում և որ հարցերը կարելի է հետագայում զարգացնել՝ ընդգրկելով ԲՇԽ-ի վերանայված աշխատանքային ծրագրում և հանքարդյունաբերության ոլորտի համընդգրկուն ազգային քաղաքականության և ռազմավարության մեջ:

11. Հաջորդ քայլեր

11.1. Առաջարկություններ էականության վերաբերյալ

5 և 6 աղյուսակները, որոնք ներկայացված են 6.10 գլխում, մատնանշում են մետաղական ընդերքօգտագործողների ցանկը, որոնք ունեն արդյունահանման թույլտվություն, ինչպես նաև նշված է նրանց գործունեության ընթացիկ փուլը՝ արդյունահանում, թե զարգացման կամ նախապատրաստական փուլ: Աղյուսակ 27-ում ներկայացվում է www.harkatu.am կայքի ուսումնասիրության հիման վրա հարկերի և մաքսատուրքերի ընդհանուր ծավալը, որը վճարվել է մետաղական ընդերքօգտագործողների կողմից (մետաղական հանքավայրերի շահագործողներ, մետաղի խտանյութի կամ ձուլվածքի վերամշակողներ, որոնք հայտնվել են 1000 հարկատուների առաջնային դիրքերում 2014, 2015, 2016 թվականների և 2017 թվականի 1-ին կիսամյակի մի որևէ հատված:

Աղյուսակ 27. Մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերը և պարտադիր վճարները:

Ընկերություն	2017 առաջին կիսամյակ		2016		2015		2014		Աշխատողներ ³⁸
	Միլ. ՀՀ դրամ	Դա-սա-կարգում	Միլ. ՀՀ դրամ	Դա-սա-կարգում	Միլ. ՀՀ դրամ	Դա-սա-կարգում	Միլ. ՀՀ դրամ	Դա-սա-կարգում	
Զանգեզուրի ՊՄԿ ՓԲԸ	9751	1	9122	3	27506	1	19941	1	3294
ԳեոՊրո Մայնինգ Գոլդ ՍՊԸ	8164	2	9377	2	3862	3	3897	3	935
Թեղուտ ՓԲԸ	6021	3	13357	1	4673	2	3246	4	1067
Կապանի ԼՀԿ ՓԲԸ	4084	4	3213	4	3372	4	5215	2	1183
Լիդիան Արմենիա ՓԲԸ	1628	5	737	10	623	11	245	13	140
Մաքուր երկաթ ՓԲԸ	940	6	1459	5	2181	6	2271	7	562
Արմենիան տիտանիում փրոդաքշն ՍՊԸ	835	7	1115	8	1188	7	1353	8	347
Արմենիան մոլիբդեն փրոդաքշն ՍՊԸ	669	8	1153	7	986	9	906	9	492
Ագարակի ՊՄԿ ՓԲԸ	524	9	1449	6	2935	5	3194	5	1017
Արմենիան քափըր փրոդգրամ ՓԲԸ	383	10	536	11	988	8	2593	6	668
Մեղրաձոր Գոլդ ՍՊԸ	305	11	261	13	197	13	450	12	198

³⁸ Հարկ է նկատել, որ վերջին երեք տարիների համար աշխատողների թիվը ներկայացված է անփոփոխ, ինչը հիմք է տալիս ենթադրել, որ այս առումով տվյալները չեն թարմացվում:

Թաթստուն ՍՊԸ	31	12	20	15	-	-	-	-	-
Ախթալայի ԼՀԿ ՓԲԸ	-	-	289	12	804	10	860	10	587
Սագամար ՓԲԸ	-	-	808	9	550	12	547	11	437
Ջանգեզուր Մայնինգ ՍՊԸ	-	-	-	-	313	9	513	8	-
Լեռ-Էքս ՍՊԸ	-	-	129	14	296	10	271	9	162
Պարամաունտ Գոլդ Մայնինգ ՍՊԸ	-	-	-	-	-	-	49	11	-

Ամերիկյան համալսարանի ՊՀԿ-ն դիմել է ՊԵԿ-ին ոլորտի ընկերությունների կողմից վճարված հարկերի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու նպատակով: Չնայած դրան, 2018 թվականի մարտի 12 դրությամբ դեռևս ՊԵԿ-ի կողմից չեն ներկայացվել տվյալներ: Այնուամենայնիվ, անգամ www.harkatu.am կայքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ոլորտի առավել խոշոր հարկատուներին և պարզել, որ առկա է հսկայական տարբերություն այն ընկերությունների միջև, որոնք տարեկան վճարում են հարյուր միլիոնավոր ՀՀ դրամի հասնող հարկեր և նրանք, որոնք վճարում են հարյուր միլիոնից զգալիորեն պակաս հարկ: Այս հետազոտությունը առաջարկում է Ուսումնասիրության 6.1. բաժնում առաջարկված երկրորդ խումբ ընդերքօգտագործողների ընտրության հետևյալ չափանիշներ: Մասնավորապես, երկրորդ խմբի մեջ ներառվում են բոլոր այն ընդերքօգտագործողները, որոնք հաշվետու ժամանակաշրջանում վճարել են առնվազն 100 միլիոն ՀՀ դրամի չափով հարկ և այլ պարտադիր վճարներ: Հետևաբար, նրանց կողմից վճարված էական հարկատեսակները ենթակա են համադրման: Առաջարկվում է համադրման թույլատրելի անճշտության շեմը դիտարկել մեկ տոկոս (1%) յուրաքանչյուր էական հարկատեսակի մասով³⁹: Ավելին, հիմնվելով ԱՃԹՆ ստանդարտի 4.9. պահանջի վրա, ՀԱՀ ՊՀԿ-ն առաջարկում է, որ այս ընդերքօգտագործողների կողմից ներկայացված հաշվետվությունները ենթարկվեն աուդիտի: ԱՃԹՆ ստանդարտի այս պահանջը հաշվի առնելով, օրենսդրական փոփոխությունների մեր առաջարկած փաթեթը (տես Հավելված 14) ներառում է այս ընկերությունների կողմից իրենց հաշվետվությունները աուդիտի ենթարկելու պահանջ:

Եթե էականության վերը նշված չափանիշները կիրառվեն, ապա հիմնվելով առկա տվյալների վրա ընկերությունները, որոնք զբաղեցնում են 1-11 տեղերը ոլորտում առավել հարկեր վճարող ընկերությունների շարքում, պետք է լինեն հաշվետու:⁴⁰

Այն դեպքերում, երբ սոցիալ-տնտեսական վճարումներն ամրագրված են պայմանագրով, սույն ուսումնասիրությունը առաջակում է այդ տեղեկատվության պարտադիր

³⁹ Այս շեմը առաջարկվել է ԲԴՈ աուդիտորական ընկերության կողմից իբրև գործարար սովորույթ, թեև մատնանշվել է, որ չկա որևէ հաշվապահական ստանդարտ, չափանիշ:

⁴⁰ 2017 թվականի առաջին կիսամյակում, 1-12 առավել հարկ վճարած ընկերությունները միասին պետական բյուջե վճարել են 33335 միլիոն ՀՀ դրան: 12-րդ տեղը զբաղեցնող ընկերության՝ Թաթստուն ՍՊԸ-ի վճարված հարկերը կազմում են ընդհանուրի 0,09%: Հետևաբար, առաջին 11 ընկերությունները միասին վճարում են վճարվելիք հարկերի և պարտադիր վճարների 99,91%:

ներկայացումը անկախ ադմինիստրատորին՝ ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան: Այս ուսումնասիրությունը նաև առաջարկում է, որպեսզի հանքարդյունաբերական ընկերությունների կատարած բոլոր վճարումների (ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի) մասին տեղեկատվությունը պարտադիր տրամադրվի անկախ ադմինիստրատորին:

Ձեկույցում նաև առաջարկվեց, որպեսզի հետևյալ չորս խումբ կազմող մարմինները անկախ ադմինիստրատորին տրամադրեն իրենց կողմից ստացված տվյալները: Այդ մարմիններն են.

- ՊԵԿ (բոլոր հարկերը և պարտադիր վճարները, ներառյալ ռոյալթիները, ինչպես նաև արտահանման մաքսային տվյալները),
- ՀՀ ԲՆ (Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հաշիվ կատարվող վճարումներ)
- ՀՀ ԷԵԲՊՆ (արտադրության տվյալներ),
- տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք ստանում են հողի հարկ, գույքահարկ և հողի վարձակալության վճարներ, ինչպես նաև ունեն համայնքների արտաբյուջետային ֆոնդերի պոտենցիալ մուտքեր: ԱՃԹՆ ստանդարտի կիրառման նպատակով մշակված օրենսդրական առաջարկների շրջանակում այդ գործառույթը իրականացվում է ՏԿԶՆ կողմից:

ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1 և 4.6 պահանջներին համապատասխան հարկերի և եկամուտների մասին տեղեկատվության բացահայտման առնչությամբ նախանշվել են հետևյալ եկամտային հոսքերը.

Վճարումներ պեդական կառավարման մարմիններին՝

- կազմակերպությունների շահութահարկ,
- ռոյալթի,
- եկամտային հարկ
- Ավելացված արժեքի հարկ
- բնապահպանական վճարներ,
- վճարումներ Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին (ռեկուլտիվացիայի համար),
- մշտադիտարկումների իրականացման նպատակով վճարներ,
- պետական տուրքի վճարներ:

Վճարումներ տեղական ինքնակառավարման մարմիններին՝

- հողի հարկ,
- գույքահարկ,
- հողի վարձակալության վճար:

Վերը ներկայացված պատճառներով՝ սույն զեկույցում նաև առաջարկվում է առաջին ԱՃԹՆ-ի զեկույցում (2018թ.) ներառել 2016 և 2017 ֆինանսական տարիների տվյալները:

11.2. Օրենսդրական փոփոխությունների առաջարկներ տվյալների պարտադիր բացահայտման համար

Սոցիալ-տնտեսական ծախսերի բացահայտում

- Փոփոխություններ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում և տեղական ինքնակառավարման մարմինների մասին ՀՀ օրենքում, որոնք կսահմանեն ընկերությունների և համայնքների պարտականությունը հրապարակելու (կամ առնվազն անկախ ադմինիստրատորին տրամադրել) պայմանագրի կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված փաստացի սոցիալական ծախսերի մանրամասները: Եթե ԲՇԽ-ն ընտրի ընդլայնված թափանցիկություն ապահովելու տարբերակը, ապա պետք է փոփոխություններ կատարվեն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում, հարկային օրենսդրության մեջ, Հիմնադրամների մասին ՀՀ օրենքում, Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքում, որոնք կսահմանեն համապատասխան կողմերի պարտականությունը՝ հրապարակելու (կամ առնվազն անկախ ադմինիստրատորին ներկայացնելու) պայմանագրի կամ օրենքի պահանջով կատարված հայեցողական (ոչ պարտադիր) սոցիալական ծախսերը, ինչպես նաև համայնքների, հիմնադրամների և ՀԿ-ների ստացած վճարումները:

Աղյուսակ 28. Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների ընդհանուր նկարագրություն և փոփոխման ենթական իրավական ակտերի նախնական ցանկ.

Առաջարկվող փոփոխություններ	Իրավական ակտերի նախնական ցանկ, որոնք պետք է փոփոխվեն/ընդունվեն
Հաշվետու պետական մարմինները պետք է ներկայացնեն ըստ ծրագրերի ապագաբեզագված տվյալներ ընդերքագործող ընկերություններից ստացած եկամտային հոսքերի մասին	<ul style="list-style-type: none"> • ՀՀ ընդերքի մասին օրենք. • Հարկային օրենսդրություն (Հարկերի մասին օրենք և Հարկային օրենսգիրք) • ՀՀ կառավարության որոշումը ընդերքագործման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին
Ընդերքագործող ընկերությունները պետք է հրապարակեն (կամ առնվազն անկախ ադմինիստրատորին ներկայացնեն) ապագաբեզագված տվյալներ՝ հաշվետու պետական մարմիններին վճարված հարկերի և այլ վճարումների վերաբերյալ	<ul style="list-style-type: none"> • ՀՀ ընդերքի մասին օրենք. • Հարկային օրենսդրություն (Հարկերի մասին օրենք և Հարկային օրենսգիրք) • ՀՀ կառավարության որոշումը ընդերքագործման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին
Տեղական ինքնակառավարման մարմինները պետք է հրապարակեն (կամ առնվազն անկախ ադմինիստրատորին ներկայացնեն) ապագաբեզագված տվյալներ՝ նախանշված հաշվետու ընկերություններից ստացած հողի հարկի, գույքահարկի և այլ եկամտային հոսքերի վերաբերյալ : Այս գործառույթը իրականացվում է Տարածքային կառավարման և զարգացման նախարարության աջակցությամբ:	Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք, հարկային օրենսդրություն

11.3. Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնելու հնարավորություն

Ներկայումս տարբեր աղբյուրներում առցանց ռեժիմով առկա է տարատեսակ տեղեկատվություն, ինչը մասամբ բավարարում է ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին: Մասնավորապես,

- Թույլտվությունների և պայմանագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն կա երեք տարբեր պաշտոնական կայքերում, որտեղ բացակայում են փաստաթղթերի փաստացի պատճենները:
- Առկա են տարատեսակ վիճակագրական տեղեկություններ ՀՆԱ-ի և արտահանման կազմում հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժնի, ինչպես նաև արտադրության, ներդրումների և զբաղվածության վերաբերյալ: Տվյալների մի մասն ապագրեգացված է՝ ըստ օգտակար հանածոների տեսակների, սակայն տվյալներն ապագրեգացված չեն առանձին ընկերությունների կամ արդյունահանման ծրագրերի մակարդակով:
- Պետական եկամուտների կոմիտեն Էլեկտրոնային եղանակով հրապարակում է խոշոր 1000 հարկատուների մասին հարկային տվյալներ, սակայն ըստ հարկատեսակների ապագրեգացման աստիճանը դեռևս չի բավարարում ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին, և ներառված են ոչ բոլոր մետաղական հանքարդյունաբերական ընկերությունները, քանի որ նրանցից որոշների շահույթը փոքր է կամ ընդհանրապես բացակայում է:
- Հանքարդյունաբերող ընկերություններից շատերը իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են առցանց⁴¹, սակայն դա չի տալիս այն ամբողջ տեղեկատվությունը, որը պահանջվելու է ընկերություններից:
- Որոշ հիմնադրամներ տեղեկություններ են հրապարակում ստացած և ազդակիր համայնքներում սոցիալ-տնտեսական միջոցառումների համար ծախսված ֆինանսական միջոցների վերաբերյալ, սակայն ֆինանսական տվյալները հաճախ ամբողջական չեն:
- Բացահայտման պահանջին ենթակա, սակայն դեռևս առցանց չհրապարակվող հարցերից են՝ ընկերությունների կողմից համայնքային բյուջե մուտքագրվող հողի հարկն ու գույքահարկը, ինչպես նաև ընդերքօգտագործման պայմանագրերի բովանդակությունը:
- Ըստ ընկերությունների ապագրեգացված՝ արտաբյուջետային շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարված վճարումների վերաբերյալ տվյալները դեռևս հանրությանը մատչելի չեն:

Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը նախագծելիս հարկ է ուշադրություն դարձնել հետևյալ հարցին՝ անհրաժեշտ տվյալները հավաքագրվելու են մի քանի կայքերում, մեկ կայքում, թե՞ գործելու է երկու տարբերակն էլ: Հայաստանի պարագայում մի տարբերակ է Երկրաբանական ֆոնդի գործող կայքի ընդլայնումը (www.geo-fund.am), որպեսզի այն պարունակի ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող բոլոր տվյալները: Երկրորդ տարբերակ է նոր կայքի ստեղծումը, որը կպարունակի համակողմանի տեղեկություններ, թեև դա մասնակի կրկնություններ կունենա Երկրաբանական ֆոնդի և, որոշ չափով, այլ կայքերի հետ: Երրորդ տարբերակն այն է, որ

⁴¹ Պատկեր 5, որը ներկայացված է 7.5 բաժնում

հստակ նկարագրվեն այն տվյալները, որոնք պետք է հայտնվեն նոր կայքում, և այն տվյալները, որոնք կարելի կլինի վերցնել Երկրաբանական ֆոնդի և այլ կայքերից: ԲՇԽ-ն նախապատվություն է տալիս էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման այնպիսի մեխանիզմին, որը կապահովի հնարավորինս շատ տվյալների հավաքագրումը ԱՃԹՆ-ի մեկ միասնական հարթակում՝ միաժամանակ ըստ անհրաժեշտության կապելով այն այլ կայքերի հետ: Սա համառոտ քննարկված է 7.14-րդ բաժնում: Երեք գործոններ կան, որ կարող են ազդել այս մոտեցման հաջողության վրա.

- Անհրաժեշտ կլինի համապատասխան օրենսդրություն, որը ժամանակին պարտադիր կդարձնի հաշվետվողականության տարբեր պահանջները՝ դրանք անկախ ադմինիստրատորի վերանայմանը ներկայացնելու համար,
- Անհրաժեշտ կլինի հանգամանորեն նախագծել պորտալը, որպեսզի այն ապահովի տվյալների տեսակների և աղբյուրների ողջ շարքը,
- Հարկ կլինի զարգացնել հաշվետու կառույցների կարողությունները, որպեսզի նրանք լիարժեք տեղեկացված լինեն պահանջներից և կարողանան կատարել դրանք նախատեսված ժամկետներում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Ուսումնասիրության նպատակով իրականացված հարցազրույցների մասնակից անհատների և կազմակերպությունների ցանկ

Հավելված 2. Առկա վիճակագրության վերանայում

Հավելված 3. Հանքարդյունաբերության ոլորտին առնչվող օրենքների թվարկում

Հավելված 4. Հանքարդյունաբերության ոլորտին առնչվող ենթաօրենսդրական ակտերի թվարկում

Հավելված 5. Մետաղական հանքարդյունաբերական ընկերությունների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված գումարների վերաբերյալ տեղեկատվություն

Հավելված 6. ՀՀ ԷԵԲՊՆ-ի կողմից 25.10.2017թ. ստացված ցուցակ

Հավելված 7. Հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների ինքնահայտարարագրած սոցիալական և տնտեսական ծրագրերը

Հավելված 8. Եկամուտների և վճարումների մասով օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն

Հավելված 9. Ընկերությունների ցանկ, որոնք ստացել են ընդերքօգտագործման թույլտվություն երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու նպատակով

Հավելված 10. ԱՃԹՆ ստանդարտի պահանջների ընդգրկում՝ նախնական ուսումնասիրության տեքստում

Հավելված 11. Տվյալների հասանելիության վերաբերյալ տեղեկատվության աղյուսակ

Հավելված 12. 2016-2017թթ ընթացքում արտաբյուջետային հաշիվ ունեցող համայնքների ցանկը

Հավելված 13. ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացված ԱՃԹՆ-ի օրենսդրական փոփոխությունների փաթեթ